

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԻԶԱՋԻԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**

**«ԻՆՏԵԳՐԱՑԻԱ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՂՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ**

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԸՆՏԻՐ ԷՋԵՐ

(Հոդվածների ժողովածու)

**«ՆԱՀԱՊԵՏ» հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ – 2022**

Հրատարակությունն առնչվում է Հայաստանի Հանրապետության
և Ռուսաստանի Դաշնության միջև ստորագրված
Բարեկամության, համագործակցության և
փոխադարձ օգնության մասին պայմանագրի 25-ամյակին
Ժողովածուն հրատարակության է երաշխավորել
Երևանի պետական համալսարանի միջազգային
հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհությունը

ՀՏԴ 327

ԳՄԴ 66.4

Հ 240

Գլխավոր խմբագիր՝ ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կազմող և խմբագիր՝ ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Թարգմանիչներ՝ ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու
ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՍՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու
Լուսանկարներ՝ ԱՐԹՈՒՐ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Հ 240 Հայ-ռուսական ռազմավարական դաշինքի ընտիր էջեր: Հոդվածների
ժողովածու.- Եր.: «ՆԱՀԱՊԵՏ» հրատարակչություն, 2022, 96 էջ

Գիրքը ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Ռուսաստան-
յան հետազոտությունների կենտրոնի երկրորդ հրատարակությունն է: Հեղինակ-
ները կենտրոնի շուրջ համախմբված գիտնականներ ու փորձագետներ են, ովքեր
հանգամանորեն ուսումնասիրել և ներկայացնում են հայ-ռուսական ռազմավա-
րական դաշինքի քաղաքական, տնտեսական, գիտամշակութային, պատմական,
փիլիսոփայական ասպեկտները:

Հրատարակությունը հասցեագրված է քաղաքական և հասարակական
գործիչներին, գիտնականներին և փորձագետներին, լրագրողներին, ասպի-
րանտներին և ուսանողներին, ինչպես նաև հայ-ռուսական ռազմավարական
դաշինքի արդի օրակարգով ու հնչեղությամբ հետաքրքրվող ընթերցողների լայն
շրջանակին:

ՀՏԴ 327

ԳՄԴ 66.4

Կազմի ձևավորումը՝ Անդրեյ Աստվածատրյանի
Ձևավորում՝ Սեն Հովհաննիսյանի
Էջալլումը՝ Սեդա Հովհաննիսյանի

Տպաքանակը՝ 500

ISBN 978-9939-856-86-5

© Արամ Վիլենի Սաֆարյան, 2022

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
ռեկտոր,
պատմական գիտությունների դոկտոր



Հարգելի՝ ընթերցող

Չեր ուշադրությանն ենք ներկայացնում Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոնի պատրաստած հոդվածների ժողովածուն հայերեն և ռուսերեն։ Այն նվիրված է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև 1997 թ. օգոստոսի 29-ին ստորագրված Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագրի 25-ամյակին։ Խորհրդային Միության վկրումից հետո անկախացած Հայաստանը նոր՝ բարձր մակարդակի է հասցել ռազմավարական-դաշնակցային, գործընկերային և եղբայրական հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ։ Ուրախ ենք, որ այս հրատարակությամբ մեր ներդրումն ենք բերում այդ հարաբերությունների կարևորման, դրանց հետագա ամրապնդման ու խորացման գործին։ Ռուսաստանը և Հայաստանը այսօր կապված են բազմաթիվ թեկերով, և մեր երկրների քաղաքական, հասարակական գործիշների, գիտամշակութային հանրության պարտականությունն է դրանք ծառայեցնել մեր ժողովորդների բարեկեցության բարձրացմանը, բարգավաճմանը, մեր պետությունների ուժեղացմանը, աշխարհում կայունության և խաղաղության հաստատմանը։

Այս հրատարակությամբ վերահստատում ենք մեր պատրաստակամությունը՝ զարգացնելու համագործակցությունը ռուսաստանյան առաջատար համալսարանների, գիտահետազոտական հաստատությունների և փորձագիտական կենտրոնների հետ։ Համոզված ենք, որ ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի համալսարանական մտավորականները,

Երիտասարդ գիտնականները, ուսանողները ձգտում են ամենաբարձր մակարդակի ժամանակակից գիտելիք ստանալ ինչպես միջազգային հարաբերությունների ու քաղաքագիտության, այնպես էլ հարակից մյուս գիտությունների բնագավառում: Գիտելիք, որն արտադրվում է մեր երկրների, հավասարապես նաև ԱՊՀ-ի, ԵԱՏՄ-ի և ՀԱՊԿ-ի անդամ մյուս դաշնակից երկրների առաջատար գիտակրթական հաստատություններում:

Համոզված ենք, որ հոդվածների այս ժողովածուն, որտեղ իմի են բերվել մի խումբ հայ և ոուս առաջատար գիտնականների ու փորձագետների ուսումնասիրությունները, հետաքրքրությամբ է ընթերցվելու Ձեր կողմից: Այդ նյութերը նաև օգտակար են լինելու գիտահետազոտական, հրապարակախոսական, լրագրողական և մասնագիտական այլ գործունեություն ծավալելիս:

Մաղրում եմ Ձեզ հաջող գործունեություն միջազգային հարաբերությունների և քաղաքական գիտության բարդ, բայց շատ հետաքրքիր և հեռանկարային ասպարեզներում:

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՊՀ միջազգային
հարաբերությունների ֆակուլտետի
դեկան, Ռուսականան
հեղազորությունների կենտրոնի
գիրական դեկանար,
պատմական գիրությունների դոկտոր,
պրոֆեսոր



ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ

ԵՊՀ միջազգային
հարաբերությունների ֆակուլտետի
Ռուսականան հեղազորությունների
կենտրոնի տնօրեն,
«Խնդրեգրացիա և զարգացում»
հեղազորության և վերլուծության
հասարակական կազմակերպության
նախագահ,
Եվրասիական փորձագիրական
ակումբի համակարգող



Թանկագի՞ն ընթերցող

Զեր ուշադրությանն ենք ներկայացնում ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոնի երկրորդ հրատարակությունը: Այն նվիրված է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագրի 25-ամյակին: Ժողովածուն հայ և ռուս բարձրակարգ մասնագետների համագործակցության հաջողված արդյունք է:

Հայաստանի և Ռուսաստանի միջև վաղուց են հաստատված եղբայրական, բարեկամական և գործընկերային հարաբերություններ: Մեր երկրները ուղղագրադարձական դաշնակիցներ են և հաջողությամբ փոխադարձակցում են ԵԱՏՄ-ի, ՀԱՊԿ-ի և ԱՊՀ-ի շրջանակներում: Հոդվածների այս ժողովածուի

հեղինակային կազմը համակարծիք է, որ թե՛ երկողմ, թե՛ բազմակողմ մակարդակներում մեր երկրների համագործակցության խորացման համար կա դեռևս չգործարկված մեծ ներուժ: Այդ ներուժի ուսումնասիրության, վերհանման և պետական շահերին ծառայեցման խնդիրը պետք է միավորի Հայաստանի ու Ռուսաստանի գիտական և փորձագիտական շրջանակներին:

Ոգևորիչ է, որ Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոնի կողմից երեք ամիս առաջ հրատարակված «Հայաստան-Ռուսաստան» բարեկամություն, համագործակցություն և փոխադարձ օգնություն» հոդվածների ժողովածուն (հայերեն և ռուսերեն)՝ Ղրղզստանի Հանրապետության մայրաքաղաք Ֆիշբեկում 2022 թ. հունիսի 25-ին կազմակերպված «Գրքարվեստ» 19-րդ միջազգային ցուցահանդես-մրցույթում արժանացավ առաջին մրցանակի «Փոխադարձ բարեկամություն» անվանակարգություն: Այս հաջողությունը մեզ ուժ է տալիս՝ զարգացնելու մեր գործունեությունը արդիական անուրանակի նշանակություն ունեցող գիտահրատարակչական ասպարեզում:

Հույս ունենք, որ նման ուշադրության կարժանանա նաև ներկա հրատարակությունը:

Հայաստանի և Ռուսաստանի եղբայրական ու բարեկամական հարաբերությունները ձգվում են դարերի խորքը: Բայց վերջին տասնամյակներում դրանք ձեռք են բերել բացառիկ նշանակություն և արդիական հնչեղություն մեր երկրի անկախությունն ու ինքնիշխանությունն ամրապնդելու, անշրջելի դարձնելու տեսանկյունից:

Ուրախ ենք, որ հոդվածների ժողովածուի թե՛ հայ, թե՛ ռուս հեղինակները համամիտ են այն հարցում, որ հայ-ռուսական քաղաքական, ռազմական, տնտեսական, մշակութային և հումանիտար հարաբերությունները գտնվուն են բարձր մակարդակի վրա և ել ավելի խորանալու, զարգանալու միտուն ունեն:

Դրվագելի է, որ Հայաստանի համալսարանական երիտասարդությունը վերջին տարիներին աճող ուշադրությամբ է վերաբերվում հայ-ռուսական բազմաբնույթ ու բազմաշերտ հարաբերությունների թեմային:

Այսպիսով, այս ժողովածուն, որ գիտակցված նպատակադրմամբ լույս ենք ընծայում միաժամանակ հայերեն և ռուսերեն, կոչված է բավարարելու երկու երկրների ընթերցող լայն շրջանակի հետարքությունը:

Մաղթում ենք Ձեզ հաճելի ընթերցանություն, առողջություն ու հաջողություններ ուսման մեջ և աշխատանքում:

ՎԼԱԴԻՄԻՐ ԼԵՊԵԽԻՆ

ԵԱՏՄ-ի հնագիրուսի գնորեն,
Եվրասիական փորձագիրական
ակումբի համահիմնադիր,
փիլիսոփայական գիրությունների
թեկնածու



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ՄԵԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 25-ԱՄՅԱԿԸ՝ ՌՈԴԵՍ ՆՈՐ ԵՐԿՐՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՌՈՒՄԸ

Սույն թվականի օգոստոսի 29-ին Հայաստանի և Ռուսաստանի քաղաքացիները կնշեն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագրի (այսուհետ՝ Մեծ պայմանագիր) ստորագրման 25-ամյակը. Մի փաստարությունը, որը մինչ օրս էլ սահմանում է Հայաստանի և Ռուսաստանի միջև երկողմն հարաբերությունների հիմնական ուղղություններն ու սկզբունքները: Հիշատակելի է նաև այն, որ այս տարվա ապրիլին մեր երկրները, որպես անկախ հետխորհրդային պետություններ, նշեցին Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը:

Մրանք պայմանական հորելյաններ են, քանի որ նախքան ԽՍՀՄ-ի կազմում Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության միավորվելը Ռուսաստանի և Հայաստանի միջև այս կամ այն ձևով եղել են դիվանագիտական և ամենակարևորը՝ հիրավի բարեկամական ու խսկապես եղբայրական հարաբերությունները: Ինչը միանգամայն բնական է, եթե նկատի ունենամք այդ հարաբերությունների ձևափորման պատմությունը և դրանց առանձնահատկությունները՝ պայմանավորված քաղաքակրթական տարրեր մարտահրավերներին ու սպառնալիքներին համատեղ դիմակայությամբ:

Հայ և ռուս ժողովուրդների սերտ ու միանգամայն անկեղծ հարաբերությունների պատմությունը սկսվում է իին ժամանակներից, թեև մինչև 19-րդ դարի սկիզբը այդ հարաբերությունները վերաբերում էին հիմնականում առևտրային և մշակութային համագործակցությանը (օրինակ՝ հայ արհեստավորներն ակտիվորեն մասնակցել են Ռուսաստանում ուղղափառ եկեղեցիների շինարարությանը): Իսկ իրական քաղաքական շփումների սկիզբը Ռուսական կայսրության և այդ ժամանակահատվածում Պարսկաստանի ու Թուրքիայի

տիրապետության տակ գտնվող Հայաստանի միջև վերագրվում է այնպիսի հայրենասեր հայ մելիքների գործունեությանը, ինչպիսին են Խարայել Օրին, Հովսեփ Էմինը և այլք, սակայն նրանց գործունեությունը չէր կարող լինել պաշտոնական միջավետական բնույթի, քանի որ Հայաստանն այն ժամանակ որպես անկախ պետություն գոյություն չուներ:

Միայն 1813 թվականին Հայաստանը (ի դեմս Արևելյան Հայաստանի և Ղարաբաղի խանության), երկար դարերի ընդմիջումից հետո, ուրվանցվեց որպես միջազգային հարաբերությունների որոշակի սուբյեկտ: Եվ դրան նապաստեց, մասնավորապես, 1804–1813 թվականների պատերազմի արդյունքներով Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքված Գյուլիստանի պայմանագրի հիմնական դրույթները, այլև նապաստեց բազմաթիվ պարսկահայերի ռուսամետ հնքնորշմանը՝ պայմանագրի ստորագրումից հետո նրանք տասնյակ հազարներով սկսեցին տեղափոխվել ռուսական տարածք:

1828 թվականին, հերթական պատերազմի արդյունքներով, Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքվեց նոր՝ Շուրքմենչայի պայմանագիրը¹, որը ոչ միայն հաստատեց Գյուլիստանի պայմանագրի հիմնական դրույթները, այլև նապաստեց բազմաթիվ պարսկահայերի ռուսամետ հնքնորշմանը՝ պայմանագրի ստորագրումից հետո նրանք տասնյակ հազարներով սկսեցին տեղափոխվել ռուսական տարածք:

Թերևս, այս պահից ել պետք է սկսել Ռուսաստանի և հայ ժողովրդի բնակության տարածքի իրական քաղաքական (հետագայում՝ դիվանագիտական) հարաբերությունների պատմությունը: Հաշվի առնելով այդ տարածքի ներառումը Ռուսական կայսրության կազմում, ընդհուպ մինչև 1917 թվականը հայ-ռուսական հարաբերությունները ոչ միայն բարիդրացիության, այլև մեկ պետության կազմում երկու ենթայրական քրիստոնյա ժողովուրդների ավելի սերտ փոխգործակցության արտահայտություն էին: Այդ պատճառով ել հայերը, որպես Ռուսական կայսրության հպատակներ, որուս զինվորների հետ կողք կողքի կռվել են ինչպես 19–20-րդ դարերի ռուս-բուրքական պատերազմների, այնպես էլ 1914–1918 թվականների Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ:

1917 թվականին Ռուսական կայսրության մայրաքաղաքներում տեղի ունեցող հեղափոխական իրադարձությունների համատեքսուում Հարավային Կովկասում ստեղծվեց Հայաստանի առաջին և անկախ հանրապետությունը: Բայց արդեն 1920 թվականին այն դարձավ խորհրդային, իսկ 1922 թվականին ընդգրկվեց Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության կազմում, որը նույն՝ 1922 թ. դարձավ Խորհրդային Սիության հիմնադիր անդամ: 1936 թվականին Անդրֆեդերացիան լուծարվեց՝ իրենից հետո թողնելով ԽՍՀՄ-ի միութենական հանրապետությունները, այդ թվում՝ Հայկական ԽՍՀ-ը:

¹Տե՛ս «Туркманчайский договор как армянское чудо». URL: <https://ru.armeniasputnik.am/20180307/turkmanchajskij-dogovor-kak-armianskoe-chudo-10815247.html>. См. также: «Туркманчайскому миру 190 лет». URL: <https://www.golosarmenii.am/article/63541/turkmanchajskomu-miru-190-let>

1991 թվականի դեկտեմբերին Խորհրդային Սխության փլուզման արդյունքում Հայաստանը կրկին դարձավ անկախ պետություն: Եվ արդեն 3 ամիս անց՝ 1992 թվականի մարտին, ՀՀ-ն դիվանագիտական հարաբերություններ հաստատեց ՌԴ-ի հետ:

Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև դիվանագիտական և երկկողմ այլ հարաբերությունների անցած 30 տարիները նշանավորվեցին, մի կողմից, նոր ձեռքբերումներով երկու եղբայրական ժողովուրդների (հայ և ռուս) միջև բազմաբնույթ կապերի ամրապնդման տիրույթում, մյուս կողմից՝ այդ կապերի ամրության ստուգման տարրեր փորձություններով: Այս առումով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության (որպես երկու անկախ պետությունների) միջև համագործակցության ամրապնդումը նոր հիմքերի վրա դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հետո ծավալվեց հայոց պատմության այնպիսի ողբերգական ժամանակամիջոցում, ինչպիսին 1988–1994 թթ. Ղարաբաղյան առաջին պատերազմն էր, որի համատեքստում հայ-ռուսական հարաբերությունները բավականին լուրջ փորձության ենթարկվեցին:

Ռուսաստանի Դաշնությունն այս ընթացքում լավագույն վիճակում չէր: 1991 թվականի օգոստոսին ազատականների հեղափոխության և դրան հաջորդած ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով նոր Ռուսաստանում համատարած փակվում էին պաշտպանական ձեռնարկությունները, կազմաքանիցում և մեծ չափերով կրծատվում էին Զինված ուժերը, սրվում էր պայքարը տարրեր քաղաքական ուժերի միջև... Ըստ Էության, Արևմտասրբ հետ սառը պատերազմում ԽՍՀՄ-ի փաստացի պարտության հետևանքով Ռուսաստանի Դաշնությունը և հատկապես նրա տնտեսությունը հայտնվեցին տարրեր արտաքին «ուժային կենտրոնների» վերահսկողության տակ: Այդուհանդերձ, Ռուսաստանի դեկավարությունն իր պատմության այս դժվարին ժամանակահատվածում հնարավորություններ գտավ աջակցելու հանուն Արցախի անկախության հայ ժողովրդի պայքարին, որն ավարտվեց հայկական զինված ուժերի հաղթանակով և մի շարք փաստաթղթերի ստորագրմամբ, որոնք կարգավորում էին Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսական զորամիավորումների և կազմավորումների, այդ թվում՝ Գյումրիում թիվ 102 ռազմակայանի ներկայություննը: Ըստ այդմ՝ 1997 թվականի օգոստոսին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ստորագրվեց Քարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը (Փալվերացվել է Ռուսաստանի Դաշնության 1998 թվականի փետրվարի 9-ի № 25-Փ3 դաշնային օրենքով): Այն համապարփակ փաստաբուղք է, որը մինչ օրս ոչ միայն սահմանում է Հայաստանի և Ռուսաստանի միջև երկկողմ հարաբերությունների հիմնական սկզբունքները, այլև Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության պահպանման և պաշտպանության հիմք է, այդ թվում՝ արտաքին սպառնալիքներից:

Մեծ պայմանագրի կնքումից ի վեր ՀՀ-ի և ՌԴ-ի միջև դիվանագիտական և այլ բնույթի հարաբերությունները նոր մակարդակի են հասել՝ երկու պետությունները փոխգործակցում են որպես ռազմավարական դաշնակիցներ: Մեր կողմից հավելենք. փոխգործակցում են որպես երկու հիմնական և ամենաշահագործ գործընկերներ՝ հետխորհրդային տարածքում եվրասիական հմտեգրումը խթանելու և նշված տարածքում միջտարածաշրջանային եվրասիական քաղաքակրթություն հաստատելու հարցերում²:

ՀՀ-ի և ՌԴ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր մեր երկրների միջև կճրվել են ավելի քան 270 միջազետական, միջկառավարական և միջզերատեսչական պայմանագրեր և համաձայնագրեր: Այս իմաստով հիմնարար փաստաթղթերն են վերոնշյալ Մեծ պայմանագիրը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև XXI դար ուղղված դաշնակցային փոխգործակցության մասին» հոչակագիրը՝ ստորագրված 2000 թվականի սեպտեմբերի 26-ին: Բացի այդ, 2013 թվականի հոկտեմբերի 1-ին Տեսուսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նիստում ընդունվել է մինչև 2020 թվականը երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագիրը: Եվ ի կատարումն այս ծրագիր՝ հայկական և ռուսական մի շարք հասարակական և ոչ առևտրային կազմակերպություններ, առաջին հերթին՝ «Ինտեգրացիա և զարգացում» հետազոտական և վելուծական հասարակական կազմակերպությունը (հայկական կողմից) և ԵԱՏՄ-ի ինստիտուտը (ռուսական կողմից), 2014 թվականին Երևանում հիմնել են Եվրասիական փորձագիտական ակումբը, որը համախմբել է առաջատար հայ մասնագետներին և մինչ օրս ինտեգրումային գործընթացների հայկական առաջատար «ուղեղային կենտրոնն» է:

Հայաստանն այսօր համարվում է ոչ միայն Ռուսաստանի կարևոր տնտեսական գործընկերը, այլև Ռուսաստանի Դաշնության գլխավոր աշխարհաքաղաքական դաշնակիցը: Երկու երկրների դիրքորոշումները համընկնում են կամ մոտ են գործնականում բոլոր միջազգային և տարածաշրջանային առանցքային հարցերում: Այս առումով պատահական չէ, որ ՄԱԿ-ում հայկական պատվիրակությունը Ռուսաստանի և Արևմտայի դիմակայությանն առնչվող ամենաբարդ իրավիճակներում, որպես կանոն, քվեարկում է Ռուսաստանի Դաշնության օգտիմ³:

Օրինակ՝ 2014 թվականի մարտի 27-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում Ղրիմում անցկացված հանրաքվեն շճանաշելու հարցով քվեարկության ժամանակ Հայաստանը դեմ քվեարկեց՝ այդպիսով աջակցելով Ռուսաստանին: Այնուհետև Հայաստանը դեմ քվեարկեց Ղրիմի վերաբերյալ ՄԱԿ-ի բոլոր ինք

² Ste'u «Россия – не просто партнер Армении, но гарант ее суверенитета». URL: <https://aurora.network/articles/165-interv-ju/95880-vladimir-lepekhin-rossija-ne-prosto-partner-armenii-no-garant-ee-suvereniteta>

³ Ste'u «Российских спортсменов предали все – кроме Армении». URL: <https://ru.armeniasputnik.am/20171220/rossijskih-sportsmenov-predali-vse---krome-armenii-9884731.html>

բանաձևերին՝ հետևողականորեն հակադրվելով ՄԱԿ-ի հակառուսական բանաձևերին: Իր հերթին, Ռուսաստանի Դաշնությունն աշխարհում առաջին երկրներից է, որը պաշտոնապես ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Մասնավորապես, 1995 թվականի ապրիլի 14-ին ՌԴ Պետդուման հայտարարություն է ընդունել, որով դատապարտել է 1915–1922 թվականների Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին և ապրիլի 24-ը ճանաչել Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակի օր:

Ղարաբաղյան պատերազմի ավարտից մինչ օրս Ռուսաստանը պաշտպանել և պաշտպանում է խաղաղության շահերը Հարավյան Կովկասում, ինչպես նաև իր ռազմավարական դաշնակից Հայաստանի շահերը, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԱՀԿ-ի Մինսկի խմբում:

1991-ին Հայաստանը անդամակցեց ԱՊՀ-ին, իսկ 1992-ի մայիսին՝ ՀԱՊԿ-ին: 2003 թ. Հայաստանն ստացավ ԵԱՏՍՄ-ի դիտորդի կարգավիճակ, 2015 թ. հունվարից դարձավ Եվրասիական տնտեսական միության լիիրավ անդամ, իսկ նոյն թվականի հուլիսին ստացավ Շանհայի համագործակցության կազմակերպության երկխոսության գործընկերոց կարգավիճակ: Այս ամենը հետխորհրդային տարածքում Հայաստանի՝ որպես համապարփակ ինստեգրումային գործընթացների լիիրավ մասնակցի ակտիվ դիրքավորման հիմնական հաճագրվաններն են, որոնք ՀՀ-ն անփոփոխ համարել է Ռուսաստանի Դաշնության դիրքորոշման հետ: Իր հերթին, Ռուսաստանի Դաշնությունն իր արտաքին քաղաքական բոլոր նախաձեռնություններում և գործունեության մեջ միշտ ի դեմս Հայաստանի տեսել է Ռուսաստանի գլխավոր գործընկերոջը:

Այսօր Ռուսաստանում է ապրում արտերկրում գտնվող ամենամեծ հայկական սփյուռքը՝ ավելի քան 2,5 միլիոն մարդ, ընդ որում՝ որևէ հայ անհարմարավետության զգացում չունի Ռուսաստանում: Ռուսաստանի Դաշնությունը շատ հայերի համար դարձել է երկրորդ հայրենիք: Ավելին, հայերը ակտիվորեն ընդգրկվում են Ռուսաստանի Դաշնության իշխանական կառույցներում և դրանցում ավելի ու ավելի հաճախակի են ղեկավար պաշտոններ գրադեցնում, ինչը վկայում է Ռուսաստանում էքնիկ հողի վրա հայերի նկատմամբ խտրականության խպառ բացակայության մասին. Նրանք Ռուսաստանի Դաշնությունում ընկալվում են որպես յուրայիններ:

Չի կարելի ասել, որ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների պատմության մեջ չեն եղել տարբեր փորձություններ և դրամատիկ իրադարձություններ: Նման փորձություններ եղել են, և դրանք հիմնականում կապված էին Ռուսաստանում և Հայաստանում քաղաքական որոշ ուժերի ելույթների ու գործողությունների հետ, որոնք փորձում էին և այսօր ել փորձում են սեալ խրել մեր պետությունների հարաբերությունների մեջ: Այդպես էր 2015 թվականին, երբ բազմաքի հայեր դուրս եկան փողոց՝ բողոքելու էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դեմ, ինչը շատերը պայմանավորում էին Ռուսաստանի կառավարության տնտեսական քաղաքականությամբ: Այդպես եղավ նաև Հայաստանում 2018 թվականի «քավշե»

հեղափոխությունից հետո, երբ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև հարաբերությունները երերացին՝ պայմանավորված որոշ հայ արմատականների՝ Գյումրիից ուսական ռազմակայանը հանելու և Եվրախնդգրման ուղղվածություն որդեգրելու կոչերով:

Հայ հասարակությունը շաջակցեց արմատականներին: Հեղափոխությունից հետո ՀՀ-ն պահպանեց իր անդամակցությունը ԵԱՏՄ-ին և ՀԱՊԿ-ին, և, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, ոչ ապարդյուն: Հենց Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությունը դարձավ այսօր ՀՀ-ում տնտեսության աճի և, հետևաբար, ինքնիշխան զարգացումն ապահովելու կարևորագույն գործոն: Ինչ վերաբերում է պաշտպանական խնդիրների լուծման ոլորտում դաշնակցային հարաբերությունների պահպանմանը, ապա Հայաստանի և ՌԴ-ում ռազմակայան միջև ռազմակությունն ակներևաբար դրսերվեց 2020 թվականի հոկտեմբեր-նոյեմբերյան իրադարձությունների ժամանակ:

ՀՀ-ի դիմ Աղբբեջանի զինված ուժերի ազրեսիայի ժամանակ Ռուսաստանը Հայաստանին աջակցեց ոչ միայն զենքով, այլև խաղաղ նախաձեռնություններով: Հենց Ռուսաստանի Դաշնությունը դադարեցրեց ռազմական գործողությունները Հայաստանի և Աղբբեջանի սահմանին, որից հետո ուստի խաղաղապահները մտան Արցախ՝ հանրապետության բնակչներին երաշխավորելով պաշտպանություն աղբբեջանցի զինվորականների հնարավոր բռնություններից:

Միևնույն ժամանակ չի կարելի չնշել այն բացասական փաստը, որ ռուսաստանցի որոշ (իսլամամետ և ազատական) քաղաքական գործիչներ 2020 թվականի 44-օրյա պատերազմի ժամանակ սատարում էին Աղբբեջանին: Կարծում եմ՝ հենց նրանք հնարավոր ամեն ինչ արեցին, որ Ռուսաստանը որոշակի անվճռականություն դրսուրի վերոնշյալ պատերազմի առաջին օրերին և նոյնիսկ շաբաթներին՝ եթե ոչ խախտելով, ապա փաստացի անտեսելով Մեծ պայմանագրի 3-րդ հոդվածը, որտեղ ասվում է. «Պայմանավորվող Բարձր կողմերը համատեղ կձեռնարկեն իրենց հասանելի բոլոր միջոցները՝ վերացնելու խաղաղությանը սպառնացող վտանգը, խաղաղության խախտումը կամ հակազդելու ցանկացած պետության կամ պետությունների խմբի կողմից իրենց դեմ ազրեսիայի գործողությունները և անհրաժեշտ օգնություն կցուցարեն միմյանց, այդ թվում՝ ռազմական, կոլեկտիվ ինքնապաշտպանության իրավունքի իրագործման կարգով...»:

Հենց այս պատճառով է, որ տողերիս հեղինակը 2021 թվականին Հայաստան կատարած հաճախակի այցերի ընթացքում իր ելույթներում և հայկական լրատվամիջոցներին տված բազմաթիվ հարցազրույցներում անփոփոխ շեշտում էր, որ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև Մեծ պայմանագրի զարգացնելու նպատակով այս երկրները պետք է պատրաստեն և ստորագրեն հատուկ համաձայնագիր Ռազմական միության մասին, որտեղ պետք է առավել հստակ

սահմանվեն երկողմ հարաբերությունները Հայաստանի և Ռուսաստանի կողմից Հայաստանի անվտանգության ապահովման և ՀՀ-ի նկատմամբ տարրեր արտաքին սպառնալիքների դիմագրավման հարցերում⁴: Որպես տարրերակ՝ պետք է պատրաստել Մեծ պայմանագրի նոր խմբագրությունը դրա վերաստորագրման համար:

Այսօր Ռուսաստանի Դաշնությունում աղբքեջանամետ և քուրքամետ լորրին ակտիվորեն աշխատում է Ռուսաստանի և Աղբքեջանի ու Թուրքիայի միջև հարաբերությունների ամրապնդման և, միևնույն ժամանակ, ՌԴ-ի ու ՀՀ-ի հարաբերություններում խնդիրներ ստեղծելու ուղղությամբ՝ որպես խնդրահարույց հանգամանք օգտագործելով 44-օրյա պատերազմում Հայաստանի պարտության վիաստը, իսկ որպես գործիք՝ հայ հասարակության որոշ շրջանակներում հակառուսական տրամադրությունների աճը: Այդ տրամադրությունները մասնավորապես սնվում են այն թեզով, որ Ռուսաստանը չկարողացավ պաշտպանել Հայաստանին վերոնշյալ պատերազմի ժամանակ: Մինչեռ այսօր Ռուսաստանը ապահովում և ֆինանսավորում է իր խաղաղապահների կեցությունը Լեռնային Ղարաբաղում⁵ իր համար բարդ արտաքին քաղաքական իրադրության մեջ և ձգում է կատարել իր բոլոր խաղաղապահ պարտավորությունները մի իրավիճակում, եթե արևմտյան գրեթե 40 պետություններ ավելի ու ավելի ակտիվորեն հիբրիդային պատերազմ են մղում Ռուսաստանի դեմ: Ակնհայտ է նաև, որ Ռուսաստանը, իրականացնելով հատուկ ռազմական գործողություն, պաշտպանում է ոչ միայն իր ազգային շահերը, այլև ԵԱՏՍՕ-ի քաղաքակրթական շահերը, որի անդամ է Հայաստանը:

Այսօր Ռուսաստանը միակ երկիրն է, որը լրջորեն դիմակայում է ԵԱՏՍՕ-ի դաշինքին, որի անդամ է Թուրքիան, և չափազանց շահագրգուված է, որ Անկարան ներկա ժամանակահատվածում չեղոր մնա Ռուսաստանի Դաշնության նկատմամբ: Թերևս, այդ է պատճառը, որ ներկայումս Ռուսաստանի Դաշնության դեկավարությունը չի ձեռնարկում Հայաստանի հետ հարաբերությունների բարմացում, ինչպես նաև գործողություններ, որոնք ուղղված են կոչտ հակագղեկու Աղբքեջանին՝ հայկական տարածքները զավթելու նրա նկրտումներում: Ընդհակառակը, Ռուսաստանն իրեն խսկական խաղաղարարի պես է պահում՝ ձգտելով գտնել Հայաստանի և Աղբքեջանի

⁴ Տե՛ս «Արցախ, Россия и Армения: Владимир Лепехин предлагает заключить военный союз». URL: [https://nashaarmenia.info/2022/02/10/арцах-rossiya-i-armeniya-lepehin-predla/](https://nashaarmenia.info/2022/02/10/арцах-россия-и-армения-лепехин-предлагает-заключить-войинский-союз/) Տե՛ս նաև «Армения и Россия нуждаются в новом стратегическом и военном союзе». URL: <https://verelq.am/ru/node/83340>; а также: «Արցախ, Россия и Армения: Лепехин предлагает заключить военный союз». URL: <https://rusarminfo.ru/2022/02/09/arcax-rossiya-i-armeniya-lepehin-predlagaet-zaklyuchit-voennyj-soyuz-video/>

⁵ Ռուսաստանը հղում է Լեռնային Ղարաբաղում իր գրեթե 2000 խաղաղապահների կեցության ժամանական տարեկան ՀՆՍ-ի կեսից ավելիի չափով: Հաշվի առնելով Գյումրիում իր ռազմակայանի և ՀՀ-ում իր սահմանապահների կեցության ժամանակը՝ Հայաստանի անվտանգության ապահովման հետ կապված Ռուսաստանի Դաշնության ընդհանուր ժամանակը փաստացի հավասար են Հայաստանի ՀՆՍ-ին:

միջև վեճերը երկխոսությամբ ու փոխզիջումներով լուծելու տարրերակներ և ձևաչափեր:

Կարծում եմ, պաշտոնական Երևանը հասկանում է Ռուսաստանի շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակի էությունն ու առանձնահատկությունները: Այս առումով ամենաբարձր գնահատանքի է արժանի այն փաստը, որ հայկական կողմը ճգոտում է ամեն կերպ աջակցել ոուս զինվորականներին և խաղաղապահներին Հարավային Կովկասում խաղաղություն պահպանելու իրենց չափազանց դժվարին առաքելության մեջ: Ավելին, այս տարվա հունվարին ՀՍՊԿ-ի կազմում ոուս խաղաղապահների հետ հայ զինծառայողները մեկնեցին Ղազախստան՝ նրա դեկավարության խնդրանքով, որպեսզի կանխեն զանգվածային հուզումները այդ երկրում, և այս փաստը խոսում է այն մասին, որ ոուս-հայկական հարաբերությունները, այդ թվում ռազմական ոլորտում, մեծ ներուժ ունեն:

Ներկայումս Հայաստանի և Ռուսաստանի դիվանագիտական հարաբերություններն աշքի են ընկնում կայունությամբ և միմյանց նկատմամբ հարգանքի ու վստահության բավականին բարձր մակարդակով: Ռուսաստանը շարունակում է մնալ Հայաստանի ազգային շահերի պաշտպանության հիմնական երաշխավորը հարևան Ադրբեյջանի ու Թուրքիայի հետ իր չափազանց բարդ հարաբերություններում: Իր հերթին, Հայաստանն ամեն կերպ ցուցադրում է հավատարմությունը երկկողմ համագործակցության սկզբունքներին, որոնք ամրագրված են 1997 թվականի Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրում: Եվ այս փոխգործակցությունը, ինչպես նշեցինք, միանալու բնական է ու ներունակ, քանի որ հայերն ու ռուսները արդեն երեք դար գտնվում են նույն քաղաքակրթական դաշտում:

Սկզբնապես Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության քաղաքակրթական միասնությունը պայմանավորված էր ընդհանուր քրիստոնեական պատմությամբ, որտեղ ոուսներն ինչ-որ պահի կարևորեցին ստանձնել իրենց հայ եղբայրների ճակատագրի պատասխանատվությունը Թուրքիայի և Պարսկաստանի կողմից հայերի ցեղասպանության իրավիճակում: 20-րդ դարում այս միասնությունն արդեն կանխորշված էր ընդհանուր սոցիալ-մշակութային դաշտով մեկ պետության շրջանակներում, և մենք իշխում ու հարգում ենք, թե ինչպես ոուսներն ու հայերը ուս ուսի տված պաշտպանեցին ԽՍՀՄ-ի անկախությունը 1941–1945 թվականների Հայրենական մեծ պատերազմի ժամանակ:

Այսօր հետխորհրդային (եվրասիական) քաղաքակրթական տարածքը բարիդրացիական հարաբերությունների տարածք է, որը փորձություն է բռնել նրա մասնակիցների՝ տասնամյակների ամենասերտ համագործակցությամբ, որտեղ հայ և ոուս ժողովուրդների բարեկամությունն առաջնային դեր է խաղում և մեծապես պայմանավորում ոչ միայն Հայաստանի և Ռուսաստանի, այլև Անկախ պետությունների համագործակցության մասնակից այլ երկրների զարգացման հեռանկարները:

Այդ համագործակցության մեջ Հայաստանին վերապահված է առանցքային դեր՝ Ռուսաստանի կարևորագույն աշխարհառազմավարական դաշնակցի դերը: Ռուսաստանի, որը փաստացի մենակ է մնացել Արևոտքի, ՆԱՏՕ-ի և զանազան համաշխարհային կառույցների ներնացիզմի դեմ դիմակայությունում, կառույցներ, որոնք ձգտում են Երկիր մոլորակի վրա նոր աշխարհակարգ հաստատել, որում տեղ չի լինի ինքնիշխան պետությունների համար:

Այս առումով և՛ Ռուսաստանը, և՛ Հայաստանը, փորձելով պահպանել իրենց ինքնությունը, օրինաչափորեն և հարկադրաբար անցնում են ամրության փորձությունների շարանի միջով: Հայ-ռուսական հարաբերությունների ամրությունը ևս փորձություն է անցնում: Անձամբ ես կասկած չունեմ, որ Երկու երկրներն ել կկարողանան հաղթել իրենց ինքնիշխանության համար պայքարում: Ավելին, Ռուսաստանի և Հայաստանի միությունը կարող է օրինակ դառնալ, թե ինչպես կարելի է հաղթել ցանկացած քշնամու, եթե գրագիտ օգտագործվեն նման միության ներուժն ու առավելությունները:

Եվ վերջինը: Ուկրաինայում նացիզմի (և գլոբալիզմի) դեմ հատուկ ռազմական գործողությունն այսպես թե այնպես կավարտվի Ռուսաստանի հաղթանակով: Հետևաբար, այս հաղթանակից հետո ԵԱՏՍՄ-ի ամրապնդումը և ԱՊՀ-ի երկրների փոխազդակցությունը հաստատապես կրաքարտանան նոր մակարդակի: Այս առումով Հայաստանի և Ռուսաստանի միջև Մեծ պայմանագրի 25-ամյակը պետք է դիտարկել ոչ թե որպես այս երկրների քառորդարյա հարաբերությունների արդյունք, այլ որպես այդ հարաբերությունների պատմության որակապես նոր փուլի սկիզբ:

Կարծում ենք, որ այս նոր որակի էությունը կլինի ՀՀ-ի և ՌԴ-ի միջև այնպիսի փոխազդակցության հաստատումը, որի դեպքում ռուսական կողմը Հայաստանի հետ նոր Մեծ պայմանագրում ոչ միայն կհաստատի իր պատրաստականությունը՝ անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու Հայաստանին ցանկացած պետության կողմից ազրեսիայի ենթարկվելիս, այլև կստանձնի լիակատար պատասխանատվություն իր գործընկերոց ճակատագրի համար:

ԺԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ



ԵՊՀ միջազգային
հարաբերությունների և
դիվանագիտության ամրիոնի
ղոցենսը,
պարմական գիլությունների
թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾՎԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Բ. Ասադի պաշտոնական դիմումի հիման վրա Ռուսաստանի Դաշնությունը (ՌԴ) 2015 թ. սեպտեմբերի 30-ին հակաահարեկչական գործողություններ սկսեց Սիրիայում: Նույն օրը, կառավարության անդամների հետ խորհրդակցության ժամանակ, ՌԴ նախագահ Վ. Պուտինը հիմնավորեց այդ քայլի անհրաժեշտությունը և շարժադրելերը¹: ՌԴ-ի հակաահարեկչական գործողությունները Սիրիայում, որոնք ակնհայտ շրջադարձային նշանակություն ունեցան, ընթանում էին ՌԴ-Արևմուտք հակադրության դրսուրումներով: Բնականարար, ռուսաստանյան ներկայությունը Սիրիայում ենթադրում էր Մերձավոր Արևելքում ՌԴ-ի ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդում, ուստի տարածաշրջանային զարգացումներն ուղեկցվում էին համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության խոշոր դերակատարների շահերի քախումներով, ինչն էլ այդ ուժերի միջև ռազմական քախման իրական վտանգ էր ստեղծում: Դրա վկայությունն էին Թուրքիայի ռազմաօդային ուժերի կողմից ՌԴ-ի օդատիեզերական ուժերի «Սու-24» ինքնաթիռի կործանումը և դրան հաջորդած իրադարձությունները:

¹ Տե՛ս «Совещание с членами Правительства», <http://kremlin.ru/events/president/news/50401> (մուտք՝ 16.06.2022)

Բացի ռազմաքաղաքական խնդիրներից, որոնք առկա էին սիրիական հակամարտությունում ներգրավված դերակատարների միջև, լրջագույն խնդիր էր Սիրիայում առաջացած մարդապիրական ճգնաժամը:

Տևական ժամանակ ընթացող ռազմական գործողությունների պատճառով հիմնահատակ ավերվեցին բազմաթիվ բնակավայրեր, իսկ բնակչության մի ստվար հատվածը ստիպված էր կա'ն տեղահանվել, կա'ն արտագաղթել: Սիրիայում մարդապիրական ճգնաժամը շրջանցեց նաև տեղի հոծ հայ համայնքին, որը մինչ այդ ուրույն տեղ ուներ Սիրիայի տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքում: Հակամարտության պատճառով խարարվեց սիրիահայ համայնքի բնականոն կյանքը, հետևաբար, Հայաստանի Հանրապետության իշխանությունները չէին կարող անուշադրության մատնել այդ փաստը: Խնդիրն այն էր, թե ինչպես և ինչ միջոցներով օգնել ծանր վիճակում հայտնված սիրիահայ համայնքին՝ նիաժանանակ չներքաշվելով վտանգավոր զարգացումների մեջ: ՀՀ որդեգրած քաղաքականությանը 2012 թ. հուլիսին անդրադարձավ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալը՝ նշելով, որ «գործադրվող ջանքերն առաջին հերթին ուղղված են սիրիահայության անվտանգության, հայ համայնքի բնականոն կենսագործունեության ապահովմանը, պատմամշակութային ժառանգության պահպանմանը»²: Նույն թվականի նոյեմբերի 26-ին «Խնտերֆաքսին» տված հարցազրույցում Սիրիայի հայ համայնքի խնդիրներին անդրադարձավ նաև ՀՀ վարչապետ S. Սարգսյանը՝ նշելով, որ շուրջ 5-6 հազար մարդ Սիրիայից տեղափոխվել է ՀՀ³: Սակայն հակամարտության հետագա խորացումը ավելի մեծացրեց սպառնալիքները հայ համայնքի համար, մասնավորապես՝ 2014 թ. մարտին Քեսարի իրադարձությունների հետևանքով տեղի հայությունը տեղահանվեց: Այդ կապակցությամբ 2014 թ. ապրիլի 3-ին Մոսկվայում ՌԴ արտաքին գործերի նախարար U. Լավրովի նախագահությամբ տեղի ունեցած ՀԱՊԿ-ի անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստում ընդունվեց հայտարարություն Սիրիայի հյուսիսարևմուտքում առաջացած լարվածության վերաբերյալ: Հայկական կողմի առաջարկությամբ այդ համատեքստում դատապարտվեցին նաև Քեսարի իրադարձությունները⁴: Հայ համայնքի ֆիզիկական անվտանգության պահումն անդիրներից բացի, ոչնչացման սպառնալիքի տակ էին հայտնվել նաև հայկական պատմամշակութային և կրոնական արժեքները: Ասվածի

² «ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Սերգեյ Մանասարյանի պատասխանը «Tert.am» լրատվական կայքի հարցին», <https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2012/07/20/comm-syria/3102> (մուտք՝ 16.06.2022):

³ Տի՛ս «У нас с Россией нет проблем», <https://www.interfax.ru/interview/277622> (մուտք՝ 16.06.2022):

⁴ Տի՛ս ««ОДКБ примет заявление по событиям в Кесаде», <https://rus.azatutyun.am/a/25320279.html>, տե՛ս նաև՝ «Заявление министров иностранных дел государств – членов Организации Договора о коллективной безопасности относительно усиления напряженности на северо-западе Сирии», <https://odkb-csto.org/documents/statements/zayavlenie.-ministrov-inostrannykh-del-gosudarstv-chlenov-organizatsii-dogovora-o-kollektivnoy-bezopera/#loaded> (մուտք՝ 17.06.2022):

վկայությունը 2014 թ. սեպտեմբերին «Խալամական պետություն» խմբավորման ահարեկիչների կողմից Դեյր-Էլ-Զորում հայկական եկեղեցու պայթեցումն էր, որին պաշտոնական Երևանը արձագանքեց սեպտեմբերի 22-ին՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Է. Նալբանդյանի դատապարտող հայտարարությամբ⁵: Հայաստանի հասարակական-քաղաքական շրջանակները Քեսարի իրադարձություններում և Դեյր-Էլ-Զորում հայկական եկեղեցու պայթեցման մեջ տեսնում էին բուրքական հետքը, որի նպատակն էր վերացնել հայկական ներկայությունը Սիրիայում, ինչպես նաև նաև Հայոց ցեղասպանության մասին վկայությունները: Սիրիայի հայ համայնքի ֆիզիկական գոյության համար իրական սպառնալիքներն ավելի մեծացան Սիրիայի հյուսիսի բուրքական ներխուժումով: ՀՀ-ում ապաստան գտած սիրիահայերի կեցության հարցերը լուծելու, ինչպես նաև միջազգային հարթակներում Սիրիայում ապրող հայրենակալիցների հիմնախնդիրները բարձրացնելուց զատ՝ ՀՀ իշխանությունները ձեռնամուխ եղան Սիրիա մարդասիրական օգնություն ուղարկելուն: Այսպես, ՀՀ նախագահ U. Սարգսյանի հաճճարարությամբ, ՀՀ և ՌԴ պաշտպանության նախարարությունների համագործակցությամբ 2017 թ. հունիսին Սիրիա մարդասիրական օգնություն ուղարկվեց⁶, ավելի վաղ՝ 2016 թ. հոկտեմբերի 3-ին և 5-ին, ՀՀ-ից արդեն երկու ինքնաթիռ մարդասիրական թեռներ էին ուղարկվել այդ երկիր⁷: Սիրիայի բնակչությանը, մասնավորապես տեղի հայ համայնքին մարդասիրական օգնություն ցուցաբերելու հարցում Երևանի և Մոսկվայի համագործակցությունը ժամանակի ընթացքում ավելի խորացավ, որի արդյունքում էլ 2018 սեպտեմբերի 8-ին ՌԴ նախագահ Վ. Պուտինի հետ հանդիպումից հետո ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը հայտարեց, որ ՀՀ-ն մարդասիրական առաքելություն կիրականացնի Սիրիայում⁸:

Այս հայտարարությունից մի քանի օր անց ՀՀ պաշտպանության նախարարը «Սեղիամաքսին» տված հարցազրույցում որոշ հստակություններ մտցրեց Սիրիա մարդասիրական խումբ ուղարկելու նպատակների հարցում: Մասնավորապես, պարզ դարձավ, որ հայ մասնագետների խումբը Սիրիայում գործելու էր ՀՀ պաշտպանության նախարարության հրամանատարության ներքո, խումբը իր գործունեությունը համակարգելու էր և՝ ոռուսաստանյան կողմից, և՝ տեղի իշխանությունների հետ, հայ մասնագետները մարտական

⁵Տե՛ս «Заявление министра иностранных дел Армении Эдварда Налбандяна в связи с взрывом армянской церкви Србոց Наатакац (Святых Великомучеников) в Дейр эз Зоре», <https://www.mfa.am/ru/interviews-articles-and-comments/2014/09/22/com-on-der/4484> (մուտք՝ 17.06.2022)

⁶Տե՛ս «A portion of the aid sent to Syria has been transported to Damascus», <https://www.mil.am/en/news/4813> (մուտք՝ 17.06.2022)

⁷Տե՛ս «Первый самолет с гуманитарным грузом из Армении совершил посадку в Латакии», <https://armenpress.am/rus/news/862431/>, տե՛ս նաև՝ «Second Aircraft with Humanitarian Aid Is Sent from Armenia to Syria», <https://armedia.am/eng/news/40135/second-aircraft-with-humanitarian-aid-is-sent-from-armenia-to-syria.html> (մուտք՝ 17.06.2022)

⁸Տե՛ս «Армения будет проводить в Сирии гуманитарную миссию – Пашинян», <https://ru.armeniasputnik.am/20180909/armeniya-budet-provodit-v-sirii-gumanitarnuyu-missiyu--pashinyan-14336383.html> (մուտք՝ 18.06.2022)

խնդիրներ չին կատարելու: Պաշտպանության նախարարը տեղեկացրեց նաև, որ հայ մասնագետներին Սիրիա տեղափոխվելու և տեղում նրանց կեցությունն ապահովվելու հարցում օժանդակելու էին ռուսաստանցի գործընկերները, և այդ նպատակով ստորագրվելու էր համապատասխան արձանագրություն⁹:

2019 թ. փետրվարի 8-ին ականազերծողներից, բժիշկներից և նրանց անմիջական աճվանգությունն ապահովող հայ մասնագետներից բաղկացած 83 հոգանոց մարդասիրական խումբը ժամանեց Սիրիա:

Այդ կապակցությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը պարզաբնեց, թե ինչ հանգամանքներից ելնելով է որոշվել մարդասիրական մասնագիտական խումբ ուղարկել. հաշվի են առնվել Սիրիայում և հատկապես Հալեպ քաղաքում ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված մարդասիրական ծանր վիճակը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2017 թվականի № 2393 և 2018 թվականի № 2401 բանաձևերը, սիրիական կողմի գրավոր խնդրանքները, ինչպես նաև Հալեպում մեծաթիվ հայ համայնքի առկայությունը¹⁰:

Մարդասիրական առաքելությամբ Սիրիա ժամանած հայ մասնագետների առջև խնդիր էր դրված ականազերծելու Հալեպի ռազմական գործողություններից զերծ բնակավայրերը, իրականացնելու հակաականային իրազեկում բնակչության շրջանում, մատուցելու բժշկական ծառայություններ: Հայ մասնագետների տեղափոխման, ինչպես նաև լոգիստիկայի ապահովման խնդիրները լուծվում էին ռուսաստանյան կողմի աջակցությամբ¹¹:

Սիրիա հայկական կողմից մարդասիրական առաքելություն ուղարկելու օրը աշխատանքային այցով ՌԴ-ում էր գտնվում ՀՀ պաշտպանության նախարար Դ. Տննոյանը, որին ՌԴ պաշտպանության նախարար Ս. Շոյգուն շնորհակալություն հայտնեց Սիրիային մարդասիրական աջակցության համար՝ նշելով, որ ՀՀ-ն առաջինն է արձագանքել Սիրիայի խաղաղ քաղաքացիներին աջակցելու ՌԴ-ի կոչին¹²:

Այս համագործակցությունը ՌԴ-ի համար կարևոր էր նաև այն առումով, որ ՀՀ-ն, որպես նաև ՀԱՊԿ-ի անդամ պետություն, աջակցում էր ՌԴ-ին Սիրիայում: Հավանաբար, այս հանգամանքներից ելնելով էր նաև, որ փետրվարի 13-ին ԱՄՆ պետքարտուղարությունը հայտարարեց, որ չի պաշտպանում Սիրիայի զինված ուժերի հետ ներզրավածությունը, ինչպես նաև ՀՀ-ի և ՌԴ-ի միջև համագործակցությունը այդ առաքելության նպատակով¹³:

⁹Տե՛ս «Давид Тоноян: Мы не будем выполнять боевые задачи в Сирии» (С Давидом Тонояном беседовал Ара Тадевосян),<https://mediamax.am/ru/news/interviews/30107/> (մուտք՝ 18.06.2022)

¹⁰Տե՛ս «Группа армянских специалистов в Сирии», <https://mil.am/ru/news/5921> (մուտք՝ 18.06.2022)

¹¹Տե՛ս նոյն տեղում

¹²Տե՛ս «Главы оборонных ведомств РА и РФ обсудили широкий круг вопросов сотрудничества», <https://mil.am/ru/news/5922> (մուտք՝ 18.06.2022)

¹³Տե՛ս Նալбандян Հ., «США не поддерживают сотрудничество между Арменией и Россией по вопросу миссии в Сирии»,<https://rus.azatutyun.am/a/29767863.html> (մուտք՝ 18.06.2022)

Նույն օրը ՀՀ ԱԳՆ մամուլի քարտուղարը, անդրադառնալով ԱՄՆ պետքարտուղարության հայտարարությանը, նշեց, որ խոսքը մի երկրի մասին է (Ակատի ունի Սիրիան), որն առանցքային ներդրում է ունեցել ցեղասպանությունից մազապուրծ հայ ժողովրդի գոյատևման հարցում: Նա հիշեցրեց նաև, որ ՀՀ-ն ապաստան է տվել ավելի քան 22000 սիրիացի փախստականների և չորս ինքնարի մարդասիրական օգնություն է տրամադրել Սիրիայի ժողովրդին¹⁴:

Այսպիսով, հայկական կողմը բարձրացրեց նաև խնդրի բարոյական կրոնը՝ կարևորելով պատմական անցյալը, ինչը կարծես նոր հարություն էր տեղափոխում Սիրիայում ՀՀ-ի կողմից իրականացվող մարդասիրական առաքելությունը:

Հանուն արդարության նշենք, որ Սիրիա մարդասիրական առաքելությամբ խոսմբ ուղարկելով իսկապես որոշակի խնդիրներ կարող էր ստեղծել, մասնավորապես՝ լարվածություն առաջացնել ՀՀ-Արևմտյան հարաբերություններում, որի վկայությունն էր ԱՄՆ պետքարտուղարության վերոնշյալ հայտարարությունը: Բացի այդ, վտանգ կար, որ ՀՀ-ն նաև կկորցնի իր չեզոք դիրքը սիրիական հակամարտությունում, ինչը շատ կարևոր էր տեղի հայ համայնքի համար, քանի որ այն կարող էր նոր հարձակումների թիրախ դառնալ ահաբեկիչների կողմից: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ հաջողվեց խուսափել վերոնշյալ խնդիրներից, ինչի մասին 2019 թ. օգոստոսին խոսեց նաև Սիրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը: Անդրադառնալով հայկական մարդասիրական առաքելություն իրականացնող խմբի աշխատանքներին՝ նա նշեց, որ վերջին մի քանի ամիսներին բժիշկները շուրջ 1000 վիրահատություն են կատարել, իսկ ականազերծողները մոտ 35-38 հազար քառակուսի մետր տարածք են վճասազերծել¹⁵:

Սիրիայում հայ մասնագետների կատարած աշխատանքի մասին պատկերացում կազմելու համար նշենք մի քանի տվյալներ ևս. 2022 թ. ապրիլին հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 2019 թ. փետրվարից սկսած հայ բժիշկները բժշկական օգնություն են ցուցաբերել 15485 սիրիացիների, 2019 թ. փետրվարից մինչև 2020 թ. հուլիս հայ մասնագետների կողմից ականազերծվել է 20,5 հա տարածք¹⁶, Սիրիայում մարդասիրական առաքելություն իրականացնելու օրվանից մինչև 2022 թ. ապրիլ ամիսը Հալեպի բուժհաստություններին է փոխանցվել 24 տոննա դեղորայք¹⁷:

¹⁴ Տե՛ս «Ответ пресс-секретаря МИД Армении Нагдалян на вопрос об армянской гуманитарной миссии в Сирии», https://www.mfa.am/ru/interviews-articles-and-comments/2019/02/13/spokesperson_syria/9082 (մուտք՝ 19.06.2022):

¹⁵ Տե՛ս Նալբանդյան Ն.՝«Սիրիայում մոտ 25-28 հազար հայ է մնացել, առաջնահերթ են սոցիալական խնդիրները. դեսպան», <https://www.azatutyun.am/a/30130087.html> (մուտք՝ 18.06.2022):

¹⁶ Տե՛ս Ստոլբով Յ., «Сирия благодарна армянской миссии», <https://odkb-info.org/news/temanomera/2905/> (մուտք՝ 18.06.2022):

¹⁷ Տե՛ս «Сирийские власти поблагодарили армянских медиков за помощь медучреждениям города», <https://ru.armeniasputnik.am/20220408/armyanskaya-missiya-v-sirii-peredala-bolnitsam-alleppo-4-tonny-pomoschi-40681975.html> (մուտք՝ 18.06.2022).

Այսպիսով, ՀՀ-ն ՀՍՊԿ-ի անդամ առաջին պետությունն է, որը, արձագանքելով ՌԴ-ի կոչին, հաղթահարելով մի շարք խնդիրներ, Սիրիա մարդասիրական առաքելություն իրականացնող մասնագիտական խումբ ուղարկեց: Երկու պետությունների այսպիսի համագործակցությունը պայմանավորված է դաշնակցային հարաբերությունների մակարդակով, ինչը արտահայտվում է նաև մարդասիրական առաքելության շրջանակում իրականացվող համագործակցությամբ:

Մյուս կողմից՝ Սիրիա մարդասիրական առաքելություն իրականացնող խումբ ուղարկելով՝ ՀՀ իշխանությունները հնարավորություն ստացան տեղում արագորեն արձագանքելու սիրիահայ համայնքի խնդիրներին: Վերջապես, տեղին է կարևորել նաև պատմական հիշողությունը. այս մարդասիրական առաքելության շրջանակում օգնություն է ցուցաբերվում նաև Սիրիայի բարեկամ ժողովրդին, որը ժամանակին ապաստան էր տրամադրել օսմանյան իշխանությունների իրականացրած ցեղասպանությունից փրկված բազմահազար հայերի:

ԱՇՈՏ ԹԱՎԱԴՅԱՆ

Տնտեսական հեղազորությունների
կենտրոնի ղեկավար,
դնդեսագիրության դոկտոր,
պրոֆեսոր



ԱՂԱՍԻ ԹԱՎԱԴՅԱՆ

ՀՏՊՀ «Տնտեսության անորոշության
մոդելավորման» լաբորատորիայի
վարիչ,
դնդեսագիրության թեկնածու,
դոցենտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Ռուսաստանը, որն ունի ամենամեծ տնտեսական ներուժը ԵԱՏՄ-ում, զգալի հնարավորություններ է ստեղծում Հայաստանից պատրաստի արտադրանքի արտահանման աճի համար: Հայ-ռուսական առևտրային համագործակցությունն ընդլայնում է ներմուծման-արտահանման գործառնությունների, տեխնոլոգիաների փոխանակման ուղիները: Ռուսաստանի հետ ավանդական կապերը, ապրանքանիշների հանրաճանաչությունը, առևտրի և ներդրումների աճի մեծ ներուժը տնտեսական համագործակցության հիմնական օգուտներն են:

Ռուսաստանը ցամաքով սահմանակից է աշխարհի մեկուկես տասնյակից ավելի պետությունների հետ, և այդ գործոնը քույլ է տալիս ոչ միայն զարգացնել միջամանակին համագործակցությունը, այլև հետխորհրդային

տարածքում ստեղծել կառուցակարգեր՝ ներդրումային գործընթացներին ներգրավելու տարածաշրջանի այնպիսի խոչոր պետությունների և տնտեսական համայնքների, ինչպիսին են Իրանը, Չինաստանը, Հնդկաստանը։ Իրանին ներգրավելու հարցում համախմբող դեր կարող է խաղալ Հայաստանը։

Տնտեսական անվտանգության գլխավոր խնդիրը կայուն տնտեսական աճ և արտահանման զգալի աճ ապահովելն է, ինչը հատկապես կարևոր է փոքր տնտեսություն ունեցող երկրների համար։ Միասնական տարածաշրջանային տնտեսություն ձևավորելը ենթադրում է ոչ միայն միասնական կառավարման մարմինների ստեղծում և Եվրասիական տնտեսական ինտեգրմանը մասնակից երկրների գործողությունների համակարգում, այլև բոլոր ազգային տնտեսությունների տեղափոխում սկզբունքորեն նոր ռելեկերի վրա՝ դրանք վերակռողնորշելով դեպի ՀՆԱ-ի ընդհանուր ցուցանիշներ, համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն, արտահանման աճ, զրադարձության մակարդակի էական աճ։ Հարկ է նշել ԵԱՏՄ-ի արդյունաբերական քաղաքականության խորհրդի ստեղծման մասին Եվրասիական քարձագույն տնտեսական խորհրդի դրոշման կարևորությունը, որի նպատակն է ներդաշնակեցնել ԵԱՏՄ-ի երկրների արդյունաբերական քաղաքականությունը և առաջարկներ պատրաստել ԵԱՏՄ-ի արդյունաբերական համալիրի ռազմավարության, ուղղությունների և հեռանկարների զարգացման վերաբերյալ¹։ ԵԱՏՄ-ի երկրների քաղաքականությունը ներդաշնակեցնելու համար շատ կարևոր է Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների համաձայնագիրը ներմուծումը փոխարինելու և արդյունաբերական կոռպերացման հարցերի հանձնաժողով ստեղծելու մասին։ Ենթադրվում է, որ միության նոր մարմինն ընտրելու է ամենահեռանկարային նախագծերը ինտեգրումային ոլորտներում։ Հայաստանի կառավարությունը պետք է նախաձեռնություն ցուցաբերի և օգտագործի պատրաստի արտադրանքի արտահանումն ավելացնելու և Ռուսաստանի հետ (առաջին հերթին ռազմարդյունաբերական ոլորտում) համատեղ գործակցելու նոր հնարավորությունները²։

Հայաստանի համար հիմնական շուկան ավանդաբար ուսաստանյան շուկան է։ Ռուսաստանի հետ հարաբերությունները զգալիորեն ամրապնդում են երկրի անվտանգությունը, մասնավորապես՝ տնտեսականը, նպաստում են ՀՆԱ-ի աճին, դրա կառուցվածքի բարելավմանը, արտահանման աճին, առևտրային հաշվեկշռի պակասուրդի և, իհարկե, բնակչության զրադարձության խնդիրների լուծմանը։

¹ «Главы государств ЕАЭС заявили о стремлении войти в число лидеров глобального роста и цивилизационного прогресса» / Евразийская экономическая комиссия (29.05.2019). URL: <http://www.eurasiancommission.org/ru/nae/news/Pages/29-05-2019-5.aspx>

² Ст'и Итоги заседания Евразийского межправительственного совета 20-21 июня, 2022 г. <https://eec.eaeunion.org/news/itogi-zasedaniya-evraziyskogo-mezhpravitelstvennogo-soveta-20-21-iyunya/>

Ինտեգրման ժամանակ չափազանց կարևոր է իրական հնարավորություն ունենալ՝ ազդելու ինտեգրման կանոնների վրա, վերահսկողության լծակներ ունենալ դրանց իրականացման նկատմամբ: Այս կամ այն միտքան անդամակցելը, անկասկած, պետք է էապես մեծացնի արտահանման հնարավորությունները և բարելավի առևտրային հաշվեկշռի վիճակը: Հայաստանը պետք է առավելագույնս օգտագործի ԵԱՏՄ-ի շուկայի ընձեռության հնարավորությունները, հատկապես՝ ոռուսական շուկայի: Անհրաժեշտ է զարգացնել այս ուղղությունը՝ մշակելով համաձայնեցված տնտեսական քաղաքականություն վարելու համապատասխան ռազմավարություններ, չափանիշներ, մերողներ:

Առանց պատրաստի արտադրանքի արտահանումն էականորեն ավելացնելու Հայաստանը չի կարողանա ապահովել ՀՆԱ-ի շոշափելի աճ, բարելավել դրա կառուցվածքը, լուծել զբաղվածության հիմնախնդիրը: Առանց ոռուսական շուկայի, նրա լոգիստիկ ներուժի Հայաստանի համար չափազանց դժվար է լուծել վերոնշյալ խնդիրները: Տնտեսական օգուտն իրավես կանխորոշում է առևտրի հիմնական վեկտորը: Այստեղ որոշիչ է նորին մեծություն «տնտեսական շահի» դերը:

Հարկ է ընդունել, որ ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի 4-րդ հոդվածում՝ «Միության հիմնական նպատակները», նշվում է. Միության հիմնական նպատակներն են ոչ միայն ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատանքային ռեսուրսների միասնական շուկայի ձևավորումը, այլև ազգային տնտեսությունների համակողմանի արդիականացումը, կոռպերացումը և միջունակության բարձրացումը³: ԵԱՏՄ-ին անդամակցությունը, որպես տնտեսության զարգացման ամենաարդյունավետ ուղի, ընդունելի է հայաստանյան բոլոր քաղաքական ուժերի կողմից: Գործնականում Հայաստանի բոլոր առաջատար կուսակցությունները նպատակահարմար են համարում ԵԱՏՄ-ի անդամ լինելը: Կյանքը ցույց տվեց Հայաստանի ինտեգրման գործընթացների վերաբերյալ մեր եզրակացությունների ճշմարտացիությունը⁴:

Հայաստանի առանցքային նպատակը ապրանքների ու ծառայությունների արտահանման՝ ՀՆԱ-ի նկատմամբ 50 % հարաբերակցության հասնելն է, որտեղ, իհարկե, պետք է գերակայի պատրաստի արտադրանքը: Հակառակ դեպքում փոքր տնտեսություն ունեցող երկրում էական զարգացում լինել չի կարող, քանի որ փոքր տնտեսությամբ երկրի համար ներքին շուկան շատ սահմանափակ է: Հայաստանի պատրաստի արտադրանքի արտահանման աճի մեջ հիմնական դերը խաղում է ոռուսական շուկան:

³ Ст.у «Договор о Евразийском экономическом союзе» (Подписан в г.Астане 29.05.2014) (ред. от 01.10.2019) (с изм. и доп., вступ. в силу с 05.04.2022).URL: http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_163855/

⁴ Ст.у Тавадян А. А. и др. – Армения и ТС: оценка экономического эффекта интеграции. – Санкт-Петербург: ЕАБР, 2013. - ISBN 978-5-906157-10-2

Դեպի Ռուսաստան արտահանման զգալի աճի գրավականներն են.

- մաքսատուրքերը հանելու մասին համաձայնագրի ստորագրում,
- բոլոր ընթացակարգերի պարզեցում՝ արտահանման արտոնագրերը ձևակերպելուց և ստանալուց մինչև մաքսային ձևակերպում,
- գնաճի և ազգային արժույթների փոխարժեքի տատանումների նվազում,
- էներգառեսուրսների արտոնյալ գներ,
- ռուսական ներդրումների աճ:

Ռուսաստանը ԵԱՏՄ-ի երկրներում ներդրումների ծավալով առաջին տեղում է: Վերջին երեք տարիներին Հայաստանի տնտեսությունում կատարված ուղղակի ներդրումների 51 %-ը բաժին է ընկնում Ռուսաստանին: Փոխադարձ ներդրումների գործոնը չափազանց կարևոր է ԵԱՏՄ-ի երկրների տնտեսությունների կոռուպերացման համար, ինչը ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի առանցքային նպատակներից է:

Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերի ներկա վիճակն ու ուղղվածությունը ակներևարք ցույց են տալիս տնտեսության հետագա զարգացման իրական վեկտորը.

- պատրաստի արտադրանքի գերակշիռ մասն արտահանվում է Ռուսաստան,

- դրամական փոխանցումների 63 %-ը Հայաստան է մտնում Ռուսաստանից,

- Էներգառեսուրսների գգալի մասը հանրապետությունն ստանում է Ռուսաստանի Դաշնությունից (զազ՝ շուրջ 90 %, միջուկային վառելիք՝ 100 %),

- օտարերկրյա ուղղակի ներդրումների գորեք կեսը բաժին է ընկնում ռուսական ընկերություններին:

Հայաստանի տնտեսության առջև ծառացած կարևորագույն խնդիրներից են լրջորեն խախտված առևտրային հաշվեկշիռը և տնտեսության կառուցվածքային անհավասարակշռությունը: Սուր է գործազրկության և դրամով պայմանավորված՝ արտագաղթի հիմնախնդիրը: Ռուսաստանի հետ առաջին հերթին տնտեսական հարաբերություններն են իրական հնարավորություններ ընձեռում լրտեկու այս խնդիրները, ինչին ուղղակիորեն նպատում են ավելի էժան էներգառեսուրսներն ու Հայաստանի արտադրանքի նկատմամբ իրական պահանջարկը:

2020 թվականի իրադարձությունները հետո առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել նաև Հայաստանի միզրացիոն գործընթացներին: Ռուսաստանում հայկական սփյուռքը վերջին տարիներին զգալիորեն ստվարացել է և, տարբեր գնահատականներով, կազմում է շուրջ 2,5 միլիոն մարդ: Սա համադրելի է Հայաստանի բնակչության թվին: Հայկական սփյուռքի աճը և Ռուսաստանում կենսամակարդակի բարձրացումն ազդում են Հայաստանի Ռուսաստան արտագաղթի աճի վրա: Հայաստանում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի հարաբերակցությունը ավելի քան երկու անգամ ցածր է, քան Ռուսաստանում: Ռուսաստանում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը ընդհանուր

առմամբ բնութագրում է նաև Ռուսաստանում հայկական սփյուռքի ներուժը: 2021 թ. Ռուսաստանի Դաշնությունում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 11,6 հազար ԱՄՆ դոլար է, իսկ Հայաստանում՝ 4,6 հազար ԱՄՆ դոլար⁵:

Վերջին տվյալներով՝ Ռուսաստանում միջին աշխատավարձը 1230 ԱՄՆ դոլար է, իսկ Հայաստանում՝ 550 ԱՄՆ դոլար: Արտագաղթը հատկապես խթանում է գործազրկությունը: Ռուսաստանում այն 4,0 % է, Հայաստանում՝ 14,5 %: Փաստորեն, Հայաստանում գործազրկության մակարդակն ավելի քան 3 անգամ բարձր է, քան Ռուսաստանում:

ԵԱՏՄ-ին անդամակցելու շնորհիվ Հայաստանի համար բացված հեռանկարները կարող են դրական ազդել ՀՀ տնտեսության ներուժի աճի և միգրացիոն հաշվեկշռի վրա: Սա միգրացիայի վրա ազդող առանցքային գործոն է: ԵԱՏՄ-ի մասին համաձայնագրից բխող՝ ԵԱՏՄ-ի անդամ պետությունների համակողմանի կոռուպցիայի մասին դրույթի ամբողջական կատարումը (զիսավորապես հենց Ռուսաստանի հետ) Հայաստանում միգրացիոն հաշվեկշռի հետ կապված իրավիճակը բարելավելու ուղիղ ճանապարհն է:

Եներգակիրների, ինչպես նաև Հայաստանի ռազմավարական նշանակության արտադրանքի գների առումով ընտրության առավել լայն հնարավորություններ ընձեռում է առաջին հերթին ԵԱՏՄ-ի առաջատարը՝ Ռուսաստանի Դաշնությունը: Հարկ է նշել, որ ԵԱՏՄ-ն արտոնյալ վարկեր ստանալու հավելյալ հնարավորություններ է ստեղծել: Ընդ որում, առաջին հերթին, Հայաստանի Հանրապետության պաշտպանունակությունն ամրապնդելու համար: Ի տարրերություն միջազգային կազմակերպությունների որոշ վարկերի՝ Ռուսաստանից ստացվել են խիստ նպատակային վարկեր: 300 մլն դոլարի երկու արտոնյալ վարկեր անմիջականորեն ուղղված են մեր երկրի պաշտպանունակության ամրապնդմանը: Միաժամանակ, իհարկե, կարևոր նշանակություն ունի նման վարկերի օգտագործման արդյունավետությունը. Այդ գործառույթը պետք է իրականացնի ՀՀ կառավարությունը: Հայաստանը նաև ստացել է 270 մլն դոլարի նպատակային վարկեր Ռուսաստանից և 30 մլն դոլարի դրամանորի, որոնք անհրաժեշտ են ատոմակայանն արդիականացնելու և շահագործման ժամկետը երկարացնելու համար:

Երկու տիպի միջոցառումներ՝ մաքսատուրքերի վերացումը և ներմուծվող հումքի գների իջեցումը, անկասկած, նպաստում են արտահանման աճին և գործազրկության նվազմանը: Եներգակիրների գների նվազեցումը դրական է ազդում տեղական արտադրանքի մրցունակության աճի վրա: Միևնույն ժամանակ՝ մեր երկրների միջև դեռևս գործում են որոշակի սահմանափակումներ: ԵԱՏՄ-ի շրջանակներում շափազանց կարևոր է էականորեն նվազեցնել կիրառվող սահմանափակումների թիվը: Այդ նպատակով անհրաժեշտ

⁵ See “World Economic Outlook Database, April 2021”. World Economic Outlook. International Monetary Fund. April 2021.5 Retrieved 7 April 2021. URL: <https://www.imf.org/en/Publications/WEO/weo-database/2021/April>


Է նաև կիրառել համաձայնեցված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություն:

2015 թ. Հայաստանից արտահանման 4 տոկոս անկման պարագայում դեպի Ռուսաստանի Դաշնություն արտահանումը նվազել է 20,6 տոկոսով: Մրա պատճառները Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցներն են և ընթացիկ տարում ոռուական ոուրլու 24,8 %-ով արժեզրկումը: Ընդ որում՝ հայկական դրամի փոխարժեքը գործնականում մնացել է անփոփոխ, իսկ գնաճը եղել է գրոյական: Բացի այդ, ոռուական ոուրլու փոխարժեքը զգալիորեն ավելի մեծ փոփոխություն է կրել, քան գնաճը (12,9 %): Արդյունքում նվազել են դեպի Ռուսաստան հայ արտահանողների եկամուտները: Փաստորեն, ընթացիկ տարում ԵԱՏՍ-ի մասին պայմանագրի 63-րդ և 64-րդ հոդվածները չեն կատարվել: Այսուհետեւ, սկսած 2016-ից, Ռուսաստանի և Հայաստանի միջև ապրանքաշրջանառության վիճակը զգալիորեն բարելավվել է:

Հայաստանի և Ռուսաստանի միջև առևտրաշրջանառության շարժնթացը

	2018			2019			2020			2021		
	հազար \$	տես. կշիռ %	աճ %									
Արտահանում	666,126	7.6%	9.5%	741,442	8.0%	1.3%	680,338	6.8%	8.2%	847,251	8.0%	4.5%
Ներմուծում	1,396,367	8.1%	0.0%	1,642,571	9.7%	7.6%	1,635,683	5.8%	0.4%	1,993,902	7.2%	1.9%

Հայաստանից Ռուսաստան արտահանումը և ներմուծումը (դրամական ցուցանիշը)



Ծուրջ 7,5 % արտահանման ակնկալվող աճը զգալիորեն կհաստատի մեր կանխատեսումը ՀՆԱ-ի ավելի քան 5% աճի վերաբերյալ: Կանխատեսվում է, որ 2024 թվականին արտահանումը Ռուսաստան կգերազանցի 1 միլիարդ դոլարը, իսկ մերժութումը կլազմի շուրջ 2 միլիարդ դոլար:

Հայաստանից Ռուսաստան արտահանումը 2015–2021 թթ. աճել է 2,8 անգամ: Դա ցույց է տալիս, որ ապրանքների, ծառայությունների, կայիտայի և աշխատանքային ռեսուրսների ազատ տեղաշարժը, մաքսատուրքերի վերացումը, ինչպես նաև մակրոտնտեսական ցուցանիշների ներդաշնակեցումը Միությունում շատ ավելի մեծ դեր են խաղում, քան ընդհանուր սահմանների բացակայությունը: Պետք է նշել, որ 2021 թ. արձանագրվել է տեքստիլ արդյունաբերության արտադրանքի արտահանման էական աճ՝ մոտ 27 %-ով: Միայն Ռուսաստան տեքստիլ արտադրանքի արտահանումը կազմել է 83,5 մլն ԱՄՆ դոլար: Ոգելից խմբների արտահանումն աճել է 13,6 %-ով, ձկնորսությունը՝ 29,8 %-ով, մրգերինը՝ 9,3 %-ով:

Հայաստանում զրուաշրջության զարգացման հնարավորությունները մեծապես պայմանավորված են ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությամբ (ԵԱՏՄ-ի անդամ երկրների քաղաքացիների ազատ տեղաշարժի հնարավորության առումով), ինչպես նաև Ռուսաստանի քաղաքացիների ներպետական անձնագրերով Հայաստան այցելելու հնարավորությամբ։ Հայաստան հիմնականում դրամական փոխանցումներ կատարվում են Ռուսաստանից։ Աշխատանքային միգրացիայի ուղղությունն ավանդաբար Ռուսաստանն է։

Անշուշտ, չափազանց կարևոր է նաև Միության շրջանակներում ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատանքային ռեսուրսների միասնական շուկայի լիարժեք ձևավորումը: Ազատության բոլոր չորս չափանիշները՝ ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի տեղաշարժը, պետք է գործեն անշեղորեն: Արդյական խնդիր է նախևառաջ ԵԱՏՄ-ի երկրների ռազմավարական օրյեկտների կոռպերացման և արդիականացման ճանապարհային քարտեզ մշակելը՝ ելնելով ԵԱՏՄ-ի մասին պայմանագրից և «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՌԴ օրենքից:

Հայաստանը պետք է օգտագործի բոլոր հնարավորությունները՝ հիմնելու ոլուս-հայկական համատեղ ձեռնարկություններ: Դրան կնպաստեն հանքային ապրանքների գների հավասարեցումը, Իրանի հետ ազատ առևտուրի համաձայնագիրը: Համագործակցության հետանկարներ կան պաշտպանական արդյունաբերության, Էներգետիկայի, մետալուրգիական արդյունաբերության, մեքենաշինության, Էլեկտրատեխնիկայի և սարքաշինության ոլորտներում, հնարավոր է ներգրավել ներդրումներ շինանյութերի արտադրության, քիմիական արդյունաբերության, թերթ արդյունաբերության,

⁶ Ст. «Федеральный закон о промышленной политике в Российской Федерации» от 31.12.2014 № 488-ФЗ. URL: http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_173119/

զյուղատնտեսության և սննդի արդյունաբերության, դեղերի արտադրության ոլորտներում, զարգացնել գրոսաշրջությունը: Սա էապես կընդայնի Հայաստանի և Ռուսաստանի միջև առևտրատնտեսական հարաբերությունները:

Առաջին հերթին՝ դեպի Ռուսաստան Հայաստանի տնտեսության ներուժի մեծացման և պատրաստի արտադրանքի արտահանման զգալի աճի համար ակնհայտորեն անբավարար են միայն «խնդրում ենք՝ ներդրումներ արե՛ք» տիպի կոչերը: Գոյություն ունեն մի շարք առանցքային խնդիրներ, որոնք պետք է լուծվեն.

• Հայաստանում գործնականում բոլոր շահութաբեր կազմակերպությունները փակ բաժնետիրական ընկերություններ են: Հայաստանի տնտեսության ուղղությունների շահութաբերությունն ամրագրող և դրամական հոսքերը հենց այդ ոլորտներ ուղղելը բացահայտորեն քոյլատրող բաժնետոմսերի շուկայի բացակայության պայմաններում ներդրումների աճ ապահովելը չափազանց դժվար է: Ներդրումների ուղենիշներ չկան: Խիստ անհրաժեշտ է նշակել վարչական և խրախուսական միջոցառումներ փակ բաժնետիրական ընկերություններից բաց բաժնետիրական ընկերությունների անցնելու համար:

• Արտահանման աճի համար նպատակահարմար է շտկել հարկային քաղաքականությունը: Եթե Վրաստանը, որի տնտեսական կառուցվածքը նման է Հայաստանի տնտեսության կառուցվածքին, վարում է ներդրումները խրանող հարկային քաղաքականություն, ապա մենք այս առումով զիջում ենք Վրաստանին: Օրինակ՝ Հայաստանում ԱԱՀ-ն 20 % է, Վրաստանում՝ 18 %, Եկամտահարկը 22 % է, Վրաստանում՝ 20 %, շահութահարկը Հայաստանում 18 % է, Վրաստանում՝ 15 %: Իհարկե, հարկերի դրույքաշափերն իջեցնելիս ծախսերը ևս պետք է օպտիմալացվեն: Տնտեսության աճը կփոխանունակարգվի հումքի արտահանման առնչվող հարկային համակարգը:

• Հաշվի առնելով գնաճը՝ դրամավարկային քաղաքականությունը պետք է համահունչ լինի էժան փողերի քաղաքականությանը: Վարկի տոկոսադրույքները չպետք է խոչընդոտեն տնտեսական աճը:

• Ներդրումների համար կարևոր են էներգետիկ ռեսուրսների ողջամիտ գները: Այստեղ մեզ անհրաժեշտ է ունենալ Ռուսաստանի հետ շուկայական և դաշնակցային հարաբերությունների օպտիմալ համադրություն:

• Հայաստանի կառավարությունը առանցքային դեր պետք է ունենա արտահանող կազմակերպությունների հիմնախնդիրները օրենսդրական և կազմակերպչական ձևերով լուծելու համապատասխան ընթացակարգերի ձևավորման գործում՝ տրամադրելով համապատասխան հարկային արտոնություններ: Սա կարևոր է հասկապես Հայաստանի համար, քանի որ դեպի ծով ելք չունեցող, փոքրարիվ բնակչությամբ և համեմատաբար սահմանափակ հանքային պաշարներով երկրների համար դժվար է մրցակցել համաշխարհային շուկայում:

Հայաստանի տնտեսության աճն ապահովելու համար առաջնային խնդիր է ապահովել երկրի անվտանգությունը, այդ թվում՝ տնտեսական: Հաշվի առնելով տարածաշրջանի մարտահրավերները՝ Հայաստանի անվտանգության առանցքային երաշխիքը Ռուսաստանի հետ տնտեսական և ռազմաքաղաքական համագործակցության համադրությունն է: Ակնհայտ է, որ այս գործոնները սերտորեն փոխսկապակցված են: Առանց Ռուսաստանի և Հայաստանի տնտեսությունների արդիականացման և հատկապես կոռուպ-րացման գրձնականում անհնար է նաև ապահովել տնտեսական զարգացում ռազմարդյունաբերական համալիրի հաշվին: Ռազմարդյունաբերական համալիրի վրա հիմնված տնտեսությունը ոչ միայն հավաքական անվտան-գության հիմքն է, այլև կարևոր դեր է խաղում բնակչության զբաղվածության աճի գործում, մասնավանդ Հայաստանում, որտեղ գործազրկության մակար-դակը բարձր է: Ընդհանուր առմամբ, ռազմարդյունաբերական համալիրն անմիջականորեն նպաստում է նաև տնտեսության ամրապնդմանը:

ՅՈՒԼԻԱ ՆԻԿԻՏԻՆԱ

Ուսասարանի Դաշնության արդարին
գործերի նախարարության Սուլվայի
միջազգային հարաբերությունների
պետական ինստիտուտի
(համալսարանի) Եվրասիական
հետազողությունների կենտրոնի
առաջադարձ գիտաշխատող,
քաղաքական գիտությունների
թեկնածու



ՈՒՍԱՍԱՏԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ. ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Ուսասատանը և Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին 1992 թվականի ապրիլի 3-ին, հետևաբար, 2022 թվականի գարնանը լրացավ այս իրադարձության 30-ամյակը: Ո-Դ ԱԳՆ-ն երկկողմ հարաբերությունները բնութագրում է որպես «քարեկամական, փոխահավետ և դարավոր մշակութային ու հոգևոր մտերմությամբ աշքի լճկնող»¹: Ըստ Ուսասատանի արտաքին գործերի նախարար U. Լավրովի՝ «մեր եղբայրական ժողովուրդներին միավորում են դարավոր մշակութային և քաղաքակրթական կապերը, հոգևոր մտերմությունը»²: Հայաստանի Հանրապետության՝ 2020 թվականի հուլիսին ընդունված ազգային անվտանգության ռազմավարության մեջ նշվում է. «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական առաջնահերթություններից են Ուսասատանի Դաշնության հետ ռազմավարական-դաշնակցային հարաբերությունների կայուն խորացումն ու ընդլայնումը քաղաքական, առևտրատնտեսական, պաշտպանական, անվտանգային և մշակութահումանիտար ոլորտներում՝ հիմնված երկու երկրների ժողովուրդների պատմական բարեկամության վրա»³:

Երկկողմ հարաբերությունները հիմնված են հետևյալ երկու առանցքային փաստարդերի վրա՝ Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագրի (29 օգոստոսի, 1997 թ.) ու

¹ Российско-армянские отношения // Сайт МИД России, 15.06.2022. URL: <https://mid.ru/ru/maps/am/1701709/>

² Вступительное слово Министра иностранных дел Российской Федерации С.В. Лаврова в ходе переговоров с Министром иностранных дел Республики Армения А.С. Мирзояном, Ереван, 9 июня 2022 года // Сайт МИД России, 09.06.2022. URL: <https://mid.ru/ru/maps/am/1816966/>

³ Пункт 4.7., Стратегия национальной безопасности Республики Армения // Сайт Правительства Республики Армения, июль 2020 года <https://www.gov.am/ru/National-Security-Strategy/>

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև XXI դար ուղղված դաշնակցային փոխգործակցության մասին հոչակազրի (սեպտեմբերի 26, 2000 թ.): Ընդհանուր առմամբ, Ռուսաստանի և Հայաստանի միջև կմքվել է շուրջ 200 պայմանագիր:

Ռուսաստանի և Հայաստանի ղեկավարների միջև ամեն տարի ավանդաբար տեղի են ունենում բարձր մակարդակի մի շարք հանդիպումներ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափերով, տարածաշրջանային կազմակերպությունների գագարնաժողովների շրջանակներում, նրանք հաճախակի հեռախոսագրույցներ են ունենում (տարեկան տասնյակ անգամներ): Չատ ակտիվ է նաև տարբեր նախարարությունների ղեկավարների և խորհրդարանների ներկայացուցիչների մակարդակով, ինչպես նաև միջխորհրդարաննական փոխգործակցությունը: ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի խոսքով՝ ԵԱՏՍՄ-ի, ՀԱՊԿ-ի և ԱՊՀ-ի շրջանակներում երկու երկրների գործընկերությունը «համապատասխանում է Ռուսաստանի և Հայաստանի եղբայրական ժողովուրդների հիմնարար շահերին, ընթանում է Անդրկովկասի տարածաշրջանում անվտանգության և կայունության անդապնդման ուղիով»⁴:

Հայաստանի տարածքում է գտնվում 102-րդ ռուսական ռազմակայանը, որը տեղակայվել է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև 1995 թվականի մարտի 16-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրի հիման վրա: Պատմականորեն ռազմակայանը ստեղծվել է դեռևս 1941 թվականին Սվերդլովսկի մարզի Աշխտ գյուղի մերձակայրում՝ որպես 435-րդ հրաձգային դիվիզիայի 1415-րդ հրաձգային գունդ, իսկ 102-րդ ռազմակայանը դարձավ դրա իրավահաջորդը: 2001 թվականի հուլիսի 1-ից զրամիավորումը մտավ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության գինված ուժերի (զորքերի) Միացյալ խմբավորման կազմ:

2010 թվականին ռազմակայանի մասին պայմանագրի ժամկետը երկարաձգվեց 25-ից մինչև 49 տարվա, այսինքն՝ մինչև 2044 թվականը: Ռազմակայանը մտնում է Ռուսաստանի Հարավային ռազմական օկրուգի կազմի մեջ և Հայաստանի հետ մեկտեղ ապահովում է երկրի անվտանգությունը, այդ թվում՝ Թուրքիայի, Իրանի, Ադրբեյջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմանների անվտանգությունը: 2021 թվականի մայիսին Հայաստանի խնդրանքով Սյունիքի մարզում ստեղծվեցին 102-րդ ռազմակայանի երկու լրացուցիչ հենակետեր՝ իսկ 2021 թվականի հուլիսին Տավոշի մարզի Ուսկեպար գյուղի մոտ տեղակայվեցին ռուս սահմանապահներ՝⁵:

⁴ Путин отметил важность сотрудничества с Арменией // РИА Новости, 29.12.2021 <https://ria.ru/20211229/sotrudnichestvo-1765997452.html>

⁵ St'u В Сюникской области созданы два опорных пункта 102-ой российской базы – Пашинян // Sputnik Армения, 03.05.2021 <https://ru.armeniasputnik.am/20210503/V-Syunikskoy-oblasti-sozdany-dva-opornyykh-punkta-102-oy-rossiyskoy-voennoy-bazy---Pashinyan-27406763.html>

⁶ St'u Российских пограничников отправили на границу Армении и Азербайджана // РБК, 05.08.2021 <https://www.rbc.ru/politics/05/08/2021/610c022e9a794753f09839c4>

Երևանի «Էրեբունի» օդանավակայանում տեղակայված է ավիացիոն հենակայան, որը 102-րդ ռազմակայանի ավիացիոն բաղադրիչն է: Գյումրիի ռազմակայանը ներառված է ԱՊՀ-ի հակաօդային պաշտպանության միացյալ համակարգի կազմում, որը նույնպես ստեղծվել է 1995 թվականին: Ռազմակայանը համալրված է C-300B, Бук-M1-2 զենիթահրթիռային համալիրներով, MiГ-29 կործանիչներով, Mi-8MT ռազմատրանսպորտային ուղղաթիռներով և Mi-24P հարվածային ուղղաթիռներով⁷:

102-րդ ռազմակայանը մշտական փոխագործակցության մեջ է հայկական կողմի հետ. անցկացվում են համատեղ պատրաստության վարժանքներ ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումների հետ ինչպես բարձրեւոնային զորավարժարաններում, այնպես էլ դիվիզիոնային ուսումնական կենտրոնում, ինչպես նաև կազմակերպում են միասնական մարզական մրցումներ և մշակութային-ժամանցային միջցոցառումներ⁸: Յավոր, ռազմակայանի գոյության ընթացքում եղել են նաև ոլբերգական միջադեպեր, այդ խնդիրը լուծելու նպատակով 2018 թվականին ռազմակայանում ստեղծվել են ռազմական ուսիղանության ստորաբաժանումներ՝ «զինվորական կարգապահությունը», ճանապարհային երթևեկության անվտանգությունը և օբյեկտների պահպանությունը ապահովելու համար»⁹:

Ինչ վերաբերում է սպառագինությունների մատակարարման ոլորտում համագործակցությանը, ապա Հայաստանը Ռուսաստանից ստացել է մի շարք արդիական զինատեսակներ՝ սկսած «Խոկանդեր» հրթիռային համալիրներից: Մասնավորապես, Հայաստան են առաքվել նաև «Սու-30ՍՍ» կործանիչներ, «TOP-M2KM» և «Oca-AK», զենիթահրթիռային համալիրներ, TOC-1A «Солнцепек» ծանր հրանետային համակարգ, «Смерч» համազարկային կրակի հզոր հրթիռային համակարգ, 9M113M տեսակի հակատանկային կառավարվող հրթիռներ, հակաօդային պաշտպանության համակարգեր, РПГ-26 նոնականետեր, Դրագունովի դիավոլկահար հրացաններ, «Տիգր» զրահամերնենաներ, Ավտոբազա-М ցամաքային էլեկտրոնային հետախուզական համալիրներ, ինժեներական և կապի սարքավորումներ¹⁰:

Ռուսաստանը և Հայաստանն ակտիվորեն համագործակցում են մարդասիրական օգնություն ցուցաբերելու և արտակարգ իրավիճակներին արձագանքելու ոլորտներում: 2016 թվականին Ռուսաստանի և Հայաստանի կառավարությունների միջև համաձայնագրի իրականացման շրջանակ-

⁷ St'u Российская военная база в Армении отмечает 76 лет со дня образования //Министерство обороны РФ, 29.12.2017 https://contract.mil.ru/sel_contract/news/more.htm?id=12156777@egNews

⁸ St'u Командир 102-й военной базы Владимир Елканов: «Наши военнослужащие готовы выполнять задачи в любых условиях» // Еженедельник «Звезда», 06.07.2018 <https://zvezdaweekly.ru/news/2018751137-AN4E3.html>

⁹ В Армении появятся подразделения российской военной полиции // РИА Новости, 26.03.2018 <https://ria.ru/20180326/1517250056.html>

¹⁰ St'u Межгосударственные отношения России и Армении // РИА Новости, 17.06.2022 <https://ria.ru/20220617/diplomatiya-1795740640.html>

ներում Երևանի մերձակայքում բացվել է մարդասիրական արձագանքնան
ռուս-հայկական կենտրոն: Այն հիմնադրվել է այնպիսի արտակարգ իրավի-
ճակների արձագանքելու համար, ինչպիսին են երկրաշարժերը, ձնահոսքերը,
հրդեհները: Հենց այս կենտրոնը 2019 թվականին ավելի քան 140 տոննա
մարդասիրական օգնություն տրամադրեց Սիրիային: Այս օգնությունը պայ-
մանավորված էր նաև այն հանգամանքով, որ նախքան հակամարտության
սկիզբը հայկական սփյուռքի ամենամեծ գաղթօջախներից մեկը (ավելի քան
100 հազար մարդ) գտնվում էր Սիրիայում, թեպետ սիրիահայերի մեծ մասը
լրեց Սիրիան, շատերը ապաստան գտան Հայաստանում¹¹:

Ուստատանի և Հայաստանի միջև հանգործակցության կարևոր ուղղու-
թյուն են բազմակողմ ձևաչափերը, մասնավորապես, փոխգործակցությունը
Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջա-
նակներում, որը նույնապես 2022 թվականին նշեց իր հիմնադրման 20-ամյակը:
ՀԱՊԿ-ի հորելյանական գագաթնաժողովում Հայաստանի վարչապետ
Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «ՀԱՊԿ-ը եղել է, կա և կլինի տարածա-
շրջանում անվտանգության և կայունության ապահովման կարևորագույն
գործոն»¹²: Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանը ՀԱՊԿ-
ը բնութագրեց որպես տարածաշրջանային անվտանգության դրամուր, որի
անհրաժեշտությունը հետզհետև մեծանալու է¹³:

ՀԱՊԿ-ը կազմակերպություն է, որի նպատակը հավաքական ինքնա-
պաշտպանությունն է (Հավաքական անվտանգության պայմանագրի 4-րդ
հոդված), ինչպես նաև անվտանգության բազմաբնույթ մարտահրավերներին
և պառնայիրներին արձագանքելը՝ միջազգային ահարեւկչություն և ծայրա-
հեղականություն, բմբամիջոցների և հոգեմետ հյութերի, գենքի ապօրինի
շրջանառություն, կազմակերպված անդրազգային հանցագործություն,
ապօրինի միջրացիա և այլն: Անդամ պետությունները համագործակցում են
նաև ռազմատեխնիկական (ռազմատնտեսական) համագործակցության
ոլորտներում՝ տրամադրելով զինված ուժերին, իրավապահ մարմիններին և
հատուկ ծառայություններին անհրաժեշտ սպառազինություն, ռազմական
հատուկ տեխնիկա ու հատուկ միջոցներ, պատրաստելով զինվորական
կազմեր և մասնագետներ ազգային զինված ուժերի, հատուկ ծառայություն-
ների և իրավապահ մարմինների համար¹⁴:

ՀԱՊԿ-ի շրջանակներում պարբերաբար անցկացվում են հավաքական
ուժերի գորավարժություններ: Օրինակ՝ 2021 թվականի սեպտեմբերին

¹¹ Ст'я Россия и Армения направили в Сирию более 140 тонн совместной гумпомощи // РИА Новости, 13.08.2019 <https://ria.ru/20190813/1557452210.html>

¹² Пашинян назвал ОДКБ важнейшим фактором в обеспечении безопасности в регионе // РИА Новости, 16.05.2022 <https://ria.ru/20220516/odkb-1788814025.html>

¹³ Ст'я Глава МИД Армении считает, что потребность в ОДКБ будет расти // РИА Новости, 10.06. 2022 <https://ria.ru/20220610/odkb-1794524458.html>

¹⁴ Ст'я Устав Организации Договора о коллективной безопасности // Сайт ОДКБ, 26.04.2012 https://odkb-csto.org/documents/documents/ustav_organizatsii_dogovora_o_kollektivnoy_bezopasnosti_/#loaded

Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվել են «Որոտ-2021» գորավարժությունները՝ թմրամիջոցների դեմ պայքարի ծառայությունների, ներքին գործերի մարմինների և օպերատիվ արձագանքնան հավաքական ուժերի մաս կազմող հատուկ ստորաբաժանումների մասնակցությամբ¹⁵:

Ղազախստանում 2022 թվականի հունվարյան իրադարձությունների ժամանակ ակտիվ դերակատարում ունեցավ Նիկոլ Փաշինյանը, որն այն ժամանակ ՀԱՊԿ-ի գործող նախագահն էր: Ռուսաստանում շեշտվեց, որ հենց Հայաստանի վարչապետի նախագահությամբ է կայացվել խաղաղապահ գործողություն իրականացնելու որոշումը, 2022 թվականի հունվարի 6-ին Կրեմլի կայքում Ն. Փաշինյանի անունից հրապարակվեց հայտարարություն. «Ղազախստանի Հանրապետության նախագահ Կ.-Ժ. Կ. Տոկաևի դիմումի կապակցությամբ և հաշվի առնելով Ղազախստանի Հանրապետության ազգային անվտանգությանն ու ինքնիշխանությանը սպառնացող վտանգը, որը հետևանք է նաև արտաքին միջամտության, ՀԱՊԿ-ի Հավաքական անվտանգության խորհուրդը, համաձայն Հավաքական անվտանգության պայմանագրի 4-րդ հոդվածի, որոշում է կայացրել սահմանափակ ժամկետով Ղազախստանի Հանրապետություն ուղարկել ՀԱՊԿ-ի հավաքական խաղաղապահ ուժեր՝ այս երկրում իրավիճակը կայունացնելու և կարգավորելու նպատակով»¹⁶: Հայ խաղաղապահները (շորջ հարյուր հոգի) մասնակցել են Ղազախստանում ՀԱՊԿ-ի գործողությանը, կատարել են ուղղակի պատճենագույն գործառույթները¹⁷:

Գործողության ավարտից հետո Նիկոլ Փաշինյանը մեկնարանել է, որ ՀԱՊԿ-ը պետք է հետևություն անի Ղազախստանում ստեղծված իրավիճակից՝ ՀԱՊԿ-ի ճգնաժամային արձագանքնան մեխանիզմների ուժեղացման անհրաժեշտության վերաբերյալ¹⁸:

ՀԱՊԿ-ի աշխատանքներում որոշ բարդություն առաջացավ 2018 թվականին, երբ Հայաստանը վաղաժամկետ հետ կանչեց կազմակերպության գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովին (այդ պաշտոնում նշանակվել է 2017 թ. մայիսին՝) սահմանադրական կարգը տապալելու մեղադրանքով հետաքննության կապակցությամբ: Այդուհանդերձ, ՀԱՊԿ-ին հաջողվեց հաղթահարել այս իրավիճակը առանց իմիջի էական կորստի, կազմակերպության գործառնականությունը ևս չտուժեց: Մինչև Խաչատուրովի պաշտոնավարման

¹⁵ Տե՛ս Սույն Ստուգա «Գրոմ-2021» սպառնականությունը անցկացվել է Հայաստանում 2021 թվականի հունվարի 24-ին և մարտի 28-ին: Այս անգամ Հայաստանը մերժությամբ անդամականացվել է ՀԱՊԿ-ի կողմէ: Հայաստանը անդամականացվել է ՀԱՊԿ-ի կողմէ 2021 թվականի մայիսի 2-ին:

¹⁶ Հայաստանի Հանրապետության պատճենագույն գործառույթը կազմակերպության կողմէ անցկացվել է 2021 թվականի մայիսի 2-ին: Հայաստանը մերժությամբ անդամականացվել է ՀԱՊԿ-ի կողմէ: Հայաստանը անդամականացվել է ՀԱՊԿ-ի կողմէ 2021 թվականի մայիսի 2-ին:

¹⁷ Տե՛ս Հայաստանը անդամականացվել է ՀԱՊԿ-ի կողմէ: Հայաստանը անդամականացվել է ՀԱՊԿ-ի կողմէ 2021 թվականի մայիսի 2-ին:

¹⁸ Տե՛ս Հայաստանը անդամականացվել է ՀԱՊԿ-ի կողմէ: Հայաստանը անդամականացվել է ՀԱՊԿ-ի կողմէ 2021 թվականի մայիսի 2-ին:

ժամկետի ավարտը ՀԱՊԿ-ի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարում էր գլխավոր քարտուղարի տեղակալ Վալերի Սեմերիկովը:

Հայաստանը նաև ժամանակ առ ժամանակ քննադատում է ՀԱՊԿ-ին հայ-ադրբեջանական սահմանին, այդ թվում՝ Սյունիքի մարզում¹⁹ պարբերաբար սրբող իրավիճակին թույլ արձագանքելու համար: Բայց ևս անյանապես, Հայաստանը ՀԱՊԿ-ին Ղազախստանի օրինակով կազմակերպության հավաքական ուժերի ներգրավման խնդրանքով դիմելու անհրաժեշտություն չի տեսնում: Սահմանային անվտանգության հարցերը լուծվում են երկողմ մակարդակով՝ Ռուսաստանի աջակցությամբ, ինչպես նշվեց վերևում:

Չնայած Ռուսաստանի և Արևմուտքի միջև հարաբերությունների ճգնաժամին՝ 2022 թվականի մայիսին ՀԱՊԿ-ի հորելյանական գազարնաժողովում ամերամ երկրների առաջնորդները համատեղ հայտարարությամբ հաստատեցին մայրցամաքում լարվածության թուլացման անհրաժեշտությունը, ինչպես նաև ՀԱՊԿ-ի, որպես կազմակերպության, պատրաստակամությունը՝ գործնական համագործակցություն հաստատելու ՆԱՏՕ-ի²⁰ հետ, ինչը ցույց է տալիս կազմակերպության բաց լինելը համագործակցության և Եվրասիական տարածքում անքակտելի անվտանգության համակարգի ստեղծման համար, չնայած ՀԱՊԿ-ի հետ հարաբերություններ հաստատելու Հյուսասատլանույան դաշինքի չկամությանը:

Ընդհանուր առմանը, Ռուսաստանն ու Հայաստանը ռազմաքաղաքական ոլորտում համագործակցում են ամենալայն ուղղություններով: Ռուսաստանը գնահատում է Հայաստանը որպես հուսալի գործընկեր և դաշնակից Հարավային Կովկասում, Հայաստանը Ռուսաստանը դիմում է որպես անվտանգության երաշխավոր: Անշուշտ, անառարկելի է, որ նման համագործակցությունից Հայաստանի ակնկալիքները որոշ առումներով ավելի մեծ են, քան Ռուսաստանի պատրաստակամությունը, որը հայ-ադրբեջանական հարաբերությունների հարցում նախընտրում է հավասարաչափ հեռավորության քաղաքականությունը: Այդուհանդերձ, Ռուսաստանը ձգտում է ստորագրված պայմանագրերին համահունչ արձագանքել Հայաստանի օրինական մտահոգություններին՝ կապված իր ազգային անվտանգության ապահովման հետ: Ռուս և հայ ժողովուրդների մշակութային-հոգևոր մտերմությունը կարևոր հիմք է ստեղծում երկու երկրների դաշնակցային հարաբերությունների համար, իսկ անվտանգության ոլորտում համընկնող շահերը փոխահավետ համագործակցության հնարավորություն են տալիս:

¹⁹ Տե՛ս Պաշинյան раскритиковал ОДКБ за позицию по ситуации в Сюникской области // РИА Новости, 13.04.2022 <https://ria.ru/20220413/karabakh-1783269447.html>

²⁰ Տե՛ս Заявление Совета коллективной безопасности Организации Договора о коллективной безопасности в связи с 30-летием Договора о коллективной безопасности и 20-летием Организации Договора о коллективной безопасности, 16 мая 2022 года. URL: <http://kremlin.ru/supplement/5800>

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՖԱՐՅԱՆ

ԵՊՀ թյուրքագիրության ամբիոնի
վարիչ, պրոֆեսոր



ՆԱԻՐԱ ՓՈՂՈՍՅԱՆ

ԵՊՀ թյուրքագիրության ամբիոնի
ասիստենտ,
բանասիրական գիրությունների
թեկնածու

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՀԱՏՄԱՆ ՏԻՐՈՒՅԹԻ» ՍՈՒՐ ԲԱՆԱԿԻՃԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵԱՏՄ-ի երկրների առաջատար բուհերի և ակադեմիական ինստիտուտների միջև համագործակցության հրամայականը պայմանավորված է ինչպես արդի մարտահրավերներով, այնպես էլ արդյունավետ փոխգործակցության դարավոր պրագմատիկ փորձով, իրենց կենսունակությունն ապացուցած ու փոխլրացնող գիտական դպրոցների գոյությամբ, «փորձություն անցած» գիտաբանական ավանդույթներով. հետխորհրդային արևելագիտության արմատները սկիզբ են առել ու տարածվել խորհրդային ու դեռևս կայսերական Ռուսաստանի համալսարանների գործունեության շրջանում: Կազմակի կայսերական համալսարանում (այժմ՝ Կազմակի մերձվոլգյան

դաշնային համալսարան) արդեն 19-րդ դարի առաջին կեսին սկսվել է թյուրքական բանասիրության հիմնահարցերի ու թյուրքալեզու աղբյուրների ուսումնասիրությունը, այնտեղ էլ 1840-ական թթ. պրոֆեսոր Ստեփանոս Նազարյանցի ջանքերով հիմնադրվել է հայագիտության առաջին ամբիոնը: Թերևս, կարելի է պնդել, որ ԱՊՀ-ի երկրների բոլոր թյուրքագետները և հայագետները վերոհիշյալ հոչակավոր համալսարանի «ծոռներն» են: Այսօր եվրասիական համալսարանները շարունակում են տարբեր գիտաճյուղերի, այդ թվում թյուրքագիտության ու հայագիտության «հատման տիրույթի» հիմնահարցերի հետազոտության ոլորտում երկկողմ ու բազմակողմ համագործակցությունը՝ օգտագործելով ինչպես փոխգործակցության կուտակված հարուստ փորձն ու «սիներգիան», այնպես էլ ոռուսերենի՝ որպես համաշխարհային թյուրքագիտության և եվրասիական ինտեգրման լեզվի եզակի ու անվիճելի ֆենոմենը¹:

Ինչպես հետևողականորեն ընդգծում են Ս. Ֆ. Օրեշկովան և այլ առաջտար ոռուսաստանյան արևելագետներ, «Վաղուց ի վեր գոյություն ունեցող թյուրք-սլավոնական առնչությունները ծնում էին հարեւան ժողովուրդների մոտ միմյանց մասին գիտելիքներ ամբարելու անհրաժեշտություն: Թեև ոռուսաստանցիները իրենց ավանդաբար համարում են եվրոպական աշխարհին պատկանողն, միշտ հաշվի են առել իրենց սերտ հարևանությունը Արևելքի հետ... Ոռուսաստանում ավելի վաղ, քան այլ երկրներում, զգացել են թյուրքական աշխարհի բազմազանությունը, իսկ դա ոռուսաստանյան արևելագիտության մեջ երկու գիտաբառերի ի հայտ գալու պատճառ է հանդիսացել՝ թյուրքագիտություն ու բուրքագիտություն.... Թուրք և թյուրք հասկացությունների տարանջատումը բնական է և օրինաչափ, քայլ առայսօր միշտ չէ, որ ընդունվում է արևմտյան արևելագետների կողմից. түрк բառը հաճախ վերագրվում է և՝ թուրքիայի բնակչությանը, և՝ թյուրքական խմբի բոլոր ժողովուրդներին»²: Արտաքուստ սոսկ եզրաբանական (կամ «մետալեզվով»

¹ Մասնավորապես տե՛ս Ա. Սաֆարյան, Ժ. Ադիլբաև, О взаимодействии тюркологов Казанского (Приволжского) федерального университета, Евразийского национального университета им. Л. Н. Гумилева и Ереванского государственного университета, «Россия – Тюркско-мусульманский мир: историко-культурные связи», Казань-Елабуга, 2016, стр. 160–167, Ал. Սաֆարյան, Ար. Սաֆարյան, О духовных ценностях и культурно-гуманитарном пространстве, объединяющих народы стран ЕАЭС, Армения в ЕАЭС. Евразийская экономическая интеграция в действии (Сборник статей), Ереван, 2018, стр. 83-95, Ա. Սիմոնյան, Ա. Սաֆարյան, О научно-образовательном сотрудничестве между Арменией и Казахстаном: Реалии и перспективы, “Вопросы арmenистики”, №3(21), Ереван, 2020, стр. 3-11, Ա. Սաֆարյան, Русский язык и мировая тюркология: история, реалии и перспективы, II Международный конгресс «Языковая политика стран Содружества Независимых Государств», Сборник тезисов, Москва, 2021, стр. 119–120

² Օրեշկова С.Փ. Некоторые размышления о развитии тюркологии и османистики // *Turcica et Ottomanica* (сост. И.В. Зайцев, С.Փ. Орешкова), Ин-т востоковедения РАН, Москва, 2006, с. 15

պայմանավորված) հիմնահարցը, հիրավի, «զգայուն» աղերսներ ունի այնպիսի դոկտրինների հետ, ինչպիսին են թուրանականությունը կամ պանթուրքիզմը³:

Ուսւ-թուրքական բազմադարյան հարաբերությունները ներկայանում են որպես «մակրնթացություններ ու տեղատվություններ». պատմությունը հիշում է թե՝ Ռուսաստանի՝ Օսմանյան կայսրության դեմ փարած հաղթական պատերազմները՝ պսակված Պ. Ա. Ռումյանցև-Զարդինայսկու (1725–1796), Գ. Ա. Պոտյոնմին-Տավրիչեսկի (1739–1791), Ա. Վ. Սուվորով-Ռիմնիկսկի (1730–1800), Սուրբ և Երանելի ծովակալ Ֆ. Ֆ. Ռուշակովի (1745–1817), Ա. Ս. Նախիմովի (1802–1855), Մ. Դ. Ակոբելի (1843–1882) և այլ, հիրավի, հանճարեղ ռուս զորահրամանատարների ռազմական փառքի փայլատակումով, թե՝ «Լենին-Աքաբուրբ» դաշինքը և համագործակցության կամ փոխգործակցության բազմաթիվ էջեր: Արևմուտքի և Ռուսաստանի հարաբերությունների աննախադեպ լարման ներկա փուլում բացառիկ կարևորություն են ստանում Ռուսաստանի Դաշնության և Թուրքիայի Հանրապետության՝ Սիրիայում, Անդրկովկասում, Ռուսականայի շուրջ ծավալվող իրադարձությունների հարցերում հակասությունների ու փոխգործակցության «մողուսի» ակաղենիական իմաստավորումը՝ Եվրասիական համալսարաններում համապատասխան քննարկումների կազմակերպումը, ՉԼՄ-ներին փորձագիտական եզրակացությունների տրամադրումը, տարբեր երկրների (մասնավորապես՝ Հայաստանի և Ադրբեյջանի) հասարակական-քաղաքական դիսկուրսում հակառուսականությանը դիմագրավելուն նպատակառուղղված ոչ ստանդարտ ալգորիթմների մշակումը՝ ՌԴ-ի և ՀՀ-ի միջև ՀԱՊԿ-ի և ԵԱՏՍ-ի շրջանակներում կայացած դաշնակցության և Ադրբեյջանի Հանրապետության ու Ռուսաստանի Դաշնության միջև դաշնակցային հարաբերությունների մասին (2022 թ. փետրվարի 22-ի) հոչակագրի իրողությունների համադրմամբ⁴: Ինչպես համալսարանական լսարաններում, այնպես էլ օգտագործելով մովստիմելիախն ու կոնվերգենտ լրագրության գործիքակազմը, այսօր կարևորվում է Ռուսաստանի «ոչ բարեկամների» կողմից այսպես կոչված «Լավրովի պլանի» (իրականում՝ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների՝ մինչև

³ Մանրամասն տե՛ս Ալ. Սաֆարյան, Զիյա Գյորքալիքը և «Թյուրքականության հիմունքները», Երևան, 2012, էջ 242–248, ինչպես նաև տե՛ս և հմմտ. Գ. Ա. Բլագովա, Վարանտնե զаимствования турок-тюрк и их лексическое обособление в русском языке (К становлению обобщщающего имени тюркоязычных народов), – “Тюрокологический сборник”, Москва, 1973, стр. 51–61, 510. Tekin Talât M., Pantürkizm Ülküsü ve Dilde Birlik “İddiası”, “Türk Dili” (Aylık Dil ve Yazın Dergisi), Yıl 27, Cilt XXXVI, Sayı 310, 1 Temmuz 1977, s. 15–18. Ա. Սաֆարյան, Քեմալականների լեզվական քաղաքականության ակունքներում. Զիյա Գյորքալիքի լեզվարանական հայացքները, «Ժամակակալից Եվրասիա», Հասոր III (2), Երևան, 2014, էջ 52–76:

⁴ Декларация о союзническом взаимодействии между Азербайджанской Республикой и Российской Федерации, <http://kremlin.ru/supplement/5777> (հասանելի է 28.06.2022)

Երկրորդ դարաբաղյան պատերազմի սանձազերծումը հայկական և աղքա-ցանական կողմերից հազարավոր զոհեր տալու կանխարգելմանը նպատա-կառողված փորձերը՝ առանձին հաճույքով «ծամծմելուն» ակադեմիական մակարդակով ընդդիմախոսելը, Ռուսաստանի սահմանների մոտ պայքա-նավտանց իրավիճակ ստեղծելու նկրտումներին հակազդման քայլերի ուժվագծի կերտումը:

Վերոհիշյալ խնդիրների իրազործմանը հասնելու համար նպատակա-հարմար է հենց մուսկովյան և ռուսաստանյան դաշնային համալսարան-ներում փորձագիտական խմբերի հանդիպումներ ու խորհրդակցություններ կազմակերպելու առաջարկը՝ հայ-թուրքական և հայ-աղքա-ջանական հարա-բերությունների կարգավորման սուր բանավիճային հիմնահարցերը քննելու և Ռուսաստանի Դաշնության՝ հիշյալ գործընթացներում դրական (առանց չափազանցության՝ բարերեր) ու բացառիկ դեր խաղալու հրամայականը վերահսատանելու համար: Չնայած Վրաստանի՝ համապատասխան գործ-ընթացին մասնակցելուց խուսափելու (դեռևս) փաստին, խոստումնալից են «3+3» (այսինքն՝ Այսրկովկասի երկրներ՝ Հայաստան, Աղքա-ջան, Վրաստան + Ռուսաստանի Դաշնություն, Թուրքիա և Իրան) ձևաչափով, այսրկովկաս-յան հաղորդակցության բոլոր ուղիների ապաշրջափակման նախաձեռնու-թյունները՝ հաշվի առնելով բոլոր կողմերի շահերը⁵:

Ռուսաստանյան քաղաքական գործիչները և բարձրաստիճան դիվա-նագետները բազմից հայտարարել են Ռուսաստանի Դաշնության, Աղքա-ջանի նախագահների և Հայաստանի վարչապետի միջև 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ պայմանավորվածությունների իրազործման անհրաժեշտու-թյան մասին, ինչպես նաև սատարել են Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու գործընթացին⁶: Կարևոր է այսրկովկասյան երկրների հասարակություններին հասցնել ռուսաստանյան բաց-խաղաղասեր դիրքորոշման մասին տեղեկատվությունը (նաև օգտագործելով համալսարանական լսարանները, ԱՊՀ-ի երկրների համալսարանների գիտական ու գիտահանրամատչելի հրատարակություն-ները, գիտական լրագրության գործիքակազմը):

Հայ թյուրքագետների՝ ինչպես Ռուսաստանի Դաշնության, այնպես էլ թյուրքայեզու երկրների գործընկերների հետ բազմայա համագործակցու-թյունը՝ ուղղված թյուրքական մշակույթի և եվրասիական ժողովուրդների համապատասխան գիտական ու գիտահանրամատչելի հրատարակություն-ները, գիտական լրագրության գործիքակազմը):

⁵ Захарова: формат “3+3” может повысить уровень доверия между странами Южного Кавказа, https://tass.ru/politika/12837857?utm_source=google.com&utm_medium=organic&utm_campaign=google.com&utm_referrer=google.com&fbclid=IwAR03Un788QLYqXWPvLXnJ1PzC8PGj59e_2j4SEc3Lu5sde7v3uRVR7eYkAc (հասանելի է՝ 28.06.2022):

⁶ Մասնավորապես տես՝ Լավրով заявил, что РФ приветствует курс на нормализацию отношений Турции и Армении. URL: https://tass.ru/politika/14089681?utm_source=google.com&utm_medium=organic&utm_campaign=google.com&utm_referrer=google.com (дата обращения: 28.06.2022)

հումանիտար կապերի հիմնահարցերի լուսաբանմանը⁷, հենք է հանդիսանում հետագա կառուցողականի և, առանց չափազանցության, խոստումնալից երկխոսության համար: ԱՊՀ երկրների համալսարանների պրոֆեսորները հետևողականորեն հանդես են գալիս ոուսաստանյան ու խորհրդային արևելագիտության հումանիստական հրամայականների պահպանման, Հյուսիսային Եվրասիայի անձայրածիր տարածքներին բնորոշ կրոնական հանդուրժողականության և ազգամիջյան բազմադարյան մշակութային փոխհարստացման յուրահատուկ ավանդույթները քարոզելու դիրքերից: «Կրկնօրինակման տիպար» (ինչպես Արևելքում են ասում՝ «Մարզա-ի Թակլիդ») է դարձել ԵԱՏՍ-ի համալսարանները և այլ գիտական կենտրոնները ներկայացնող մասնագետների համագործակցությունը հայատառ դիմագրերն ճեռագրերի ուսումնասիրության ոլորտում. հիշյալ ճեռագրերն ել վկայում են ինչպես մշակույթի, այնպես էլ տնտեսական ոլորտներում հանդուրժողականության ու գործնական փոխարժեակցության վերոգրյալ ավանդույթների մասին... Վերջին տարիներին այնպիսի միջազգային գիտական կոնֆերանսների կազմակերպումը, որոնց մասնակցում են միջնադարագետներ, թյուրքագետներ, պատմաբաններ, բանասերներ Ռուսաստանի Դաշնությունից, Ղազախստանից և Հայաստանից, հայատառ դիմագրերն ճեռագրերի թեմատիկայով գիտական, մերոդական ու գիտահանրամատչելի հրատարակությունների մի երկար շարքի լույսընծայումը, վերոհիշյալ կոնֆերանսների՝ ըստ Էության աննախադեպ հասարակական հնչեղությունը, հրապարակումները, քաջալերական արձագանքները ԶԼՄ-ներում և արտերկրի՝ Եվրոպական ու մերձավորարևելյան երկրների գիտնականների՝ տվյալ ոլորտում ծավալված համագործակցությանը միանալու պատրաստականությունը հանդիսանում են «քարի կամքի» իմալիմենտացիայի և պատմական վեճերը «կովախնճոր» դարձնելուն հակազդելու վառ վկայություն:

⁷ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի համապատասխան իրապարակումներից մասնավորապես տե՛ս A. Caafaryan, Ж. Адилбаев, Н. Погосян, Незабываемые страницы истории изучения и популяризации творческого наследия великого узбекского поэта и гуманиста Алишера Навои в Армении и в Казахстане, Творческое наследие Алишера Навои и современность, Москва, МГУ им. М. В. Ломоносова, 2018, стр. 8–11, A. Симонян, A. Caafaryan, Об армяно-туркменских культурных связях и научно-образовательном сотрудничестве между Арменией и Туркменистаном, “Вопросы Арmenистики”, № 1(16), Ереван, 2019, стр. 226–235, A. Safarian, Ziya Gökalp on National Education, “Iran and the Caucasus”, Volume 8.2, BRILL, Leiden-Boston, 2004, pp. 219-229, A. Safarian, On the History of Turkish Feminism, “Iran and the Caucasus”, Volume 11.1, Brill, Leiden-Boston, 2007, pp. 141–152, A. Safaryan, L. Sahakyan, On “Adaptation” of Traditional Images in the Works of Eastern Christian and Islamic Poets, Abstracts of the World Philosophy Day Congress, Tehran, Iran, 2010, p. 249, A. Caafaryan, Ж. Әділбаев, ТМД елдерінің түркітану оргалықтары ынтымақтастығының келешегі туралы, Түркі әлемі және халықаралық байланыстар: тарих, тұлға, келешек, 26-27 мамыр 2017 жыл, Астана 2017, б. 259–262.

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ



Պատմական գիրությունների
դոկումենտ, պրոֆեսոր

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրով ավարտվեց 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը: Պայմանագրի համաձայն՝ Պարսկաստանը Ռուսաստանին էր զիջում Երևանի և Նախիջևանի խանությունները, վերահաստատվում էր մինչ այդ՝ 1813 թ. հոկտեմբերի 12-ին կնքված Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղի խանության, Շիրակի, Լոռի-Փամբակի, Ղազախ-Շամշադինի և Զանգեզուրի տարածքների միացումը Ռուսաստանին¹: Այսպիսով, Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերով Արևելյան Հայաստանն ամբողջությամբ անցավ Ռուսաստանի տիրապետության տակ:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու նշանակության վերաբերյալ հայ հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչները տարբեր, երբեմն նաև հակասական տեսակետներն են արտահայտել: Հետազոտման այդ հիմնահարցի վերաբերյալ կատարվեցին պատմագիտական ուսումնասիրություններ՝ վերլուծելով տվյալ պատմական իրադարձության նշանակությունն ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ հենց Ռուսաստանի համար:

Դեռ պատերազմի ընթացքում՝ 1827 թ. փետրվարի 2-ին, Ռուսաստանի կայսր Նիկոլայ I-ը, հայ ժողովրդի ցուցարերած անկեղծ հավատարմության համար շնորհակալություն հայտնելով Ամենայն հայոց կարողիկոս Ներսես Աշտարակեցուն, իր կայսերական քարյացականությունն էր հայտնում բոլոր հայերին և վստահեցնում, որ միշտ հոգ կտանի ռուսական զահի հովանու ներքո ապահով ապաստանած հայ ժողովրդի երջանկության և հանգստության համար²:

¹Տե՛ս Դоговоры России с Востоком, Политические и торговые, собрал и издал Т. Йозефович, СПб., 1869, էջ 215-216

²Տե՛ս Երիցյան Ա., Ամենայն Հայոց կարողիկությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 243

Պետականության բազմադարյան կորստից հետո Թուրքմենչայի պայմանագիրը և հատկապես Հայկական մարզ ստեղծելու մասին Նիկոլայ I-ի մարտի 21-ի հրամանագիրը հայ ժողովրդի մեջ հայոց պետականության վերականգնման մեջ հույսեր արքնացրին: Նորաստեղծ Հայկական մարզն ամբողջ հայության կողմից դիտվում էր այն հենարանը, որի շուրջ պետք է զարգանար ժողովրդի տնտեսական ու քաղաքական լյանքը, համախմբվելին ժողովրդի բաժանված հատվածները: Պարսկական լծից Արևելյան Հայաստանի ազատագրումը ոգևորություն առաջ բերեց ոչ միայն Արևելյան Հայաստանում, այլև հայկական գաղթօջախներում: Կաթողիկոս Ներսէս Աշտարակեցուն ուղղված նամակում հնդկահայերն իրենց գոհունակությունն էին արտահայտում այդ կապակցությամբ³:

Հայ հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչները առաջադիմական էին համարում հայ ժողովրդի հայրենիքի արևելյան հատվածը Ռուսաստանին միացնելը, քանզի հայ ժողովրդը ոչ միայն ազատվում էր ֆիզիկական բնաջնջման ենթարկվելու հնարավոր վտանգներից, այլև Արևելյան Հայաստանն ազգահավաքման օջախի էր վերածվում⁴: Ռուսաստանին Արևելյան Հայաստանի միացումով հայերը փրկվում էին մահմեդական միջավայրում ոչնչանալու վտանգից, սակայն այդ վտանգի վերացումը հայ ժողովրդի լիակատար ազատություն կամ անկախություն չէր նշանակում: Խ. Աբովյանն իրավամբ նշում է, որ ռուսական գործերի օգնությամբ պարսկական լծից ազատագրված հայ ժողովուրդը և նրա գործիչները մեծ սպասելիքներ ունեին Ռուսաստանից, սակայն ռուսական իշխանություններն այդ ուղղությամբ իրական քայլեր չձեռնարկեցին⁵: Մ. Օրմանյանը կարծում էր, որ Ռուսաստանին միացած Արևելյան Հայաստանի տարածքները «Հայկական մարզ» միավորի մեջ առանձնացնելով՝ նպատակ էր հետապնդվում դյուրին դարձնել այնտեղ բնակողն և գաղթած հայ բնակչության նկատմամբ ռուսական տիրապետությունը, իսկ եթե այն արդեն հաստատվեց, ռուսական իշխանություններն անզամ հայ եկեղեցական գործերի նկատմամբ վերահսկողություն սահմանեցին⁶:

Պարսկական տիրապետությունից ռուսական իշխանության տակ անցնելու ժամանակաշրջանում հայ գործիչները փորձում էին ռուսական իշխանություններին ներկայացնել հայ ժողովրդի ձգտումներն ու տրամադրությունները:

Ի սկզբանե ցարական կառավարությունն Արևելյան Հայաստանի նոր գրավված տարածքներում ծրագրում էր շուրջ 80 հազար կազմակերի բնակեցնել և այդ նպատակով 1827 թ. նոյնիսկ հատուկ կոմիտե էր ստեղծվել կոմս

³ Տե՛ս Լէօ, Պատմութիւն Երևանի հայոց բնմական հոգեւոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 106

⁴ Սարուխանյան Ն., Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1971, էջ 111

⁵ Տե՛ս Արքյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, հռ. VII, էջ 183

⁶ Տե՛ս Օրմանյան Մ., Հայ եկեղեցին և իր պատմությունը, Կ. Պոլիս, 1911, էջ 119

Պ. Տոլստոյի գլխավորությամբ⁷: Ներսէս Աշտարակեցու, զնիապէտ Ե. Լազարյանի, Կ. Արդության-Երկայնարազուկի և հայազգի այլ գործիչների եռանդուն ջանքերի շնորհիվ Արևելյան Հայաստանը կազակներով բնակեցնելու ծրագիրը չեղարկվեց, իսկ դրա փոխարժեն օրակարգ բերվեց Ռուսաստանին միացվելիք տարածքները պարսկահայերով և բուրժահայերով բնակեցնելու ծրագիրը:

Թավլիզը գրավելուց հետո Աշտարակեցին Ե. Լազարյանի միջոցով ռուսական գորքերի հրամանատար Ի. Պասկվիչին առաջարկում է Ասրաւատականից Արարատյան աշխարհ հայերի ներգաղթի համար գալիք պայմանագրի մեջ հատուկ հոդված ներառել⁸: Ռուսական կողմի պահանջով Թուրքմենչայի պայմանագրի 15-րդ հոդվածը նվիրվեց ներգաղթին՝ իրավունք տալով Պարսկաստանից գաղթել ցանկացող պարսկահպատակներին անարգել բնակվելու նոր գրավված մարզերում⁹: Ասրաւատականում ապրող հայերի մեծ մասը ոգևորությամբ ընդունեց այս հնարավորությունը և ցանկություն հայտնեց գաղթել Հայկական մարզ:

1828 թ. փետրվարի 26-ին Թավլիզում Պասկվիչը Ե. Լազարյանին փոխանցեց կառավարությունից ստացված՝ 19 կետերից բաղկացած վերաբնակեցման հրահանգը, ըստ որի վերաբնակեցվելու իրավունք էր տրվում միայն Ասրաւատականի քրիստոնյաներին¹⁰:

Հայ գործիչները ոչ միայն մեծ կարևորություն էին տալիս ամբողջական և ամփոփ հայկական տարածքի ստեղծմանը, այլև ամեն ինչ անում էին հայերի ներգաղթը Արևելյան Հայաստան հաջողությամբ և ժամանակին ավարտելու համար:

Պարսկահայերի վերաբնակեցման համար կազմակերպչական մեծ ջանքեր ներդրեց Պարսկաստանում Ռուսաստանի դեսպան Ա. Գրիբոյեդովը, ով ստանձնեց վերաբնակեցվող հայերի անշարժ գույքի պահպանման և վաճառքի հետ կապված խնդիրների լուծումը¹¹: Իր հերթին ռուսական հրամանատարությունն ամեն կերպ աջակցում էր Ասրաւատականից հայ գաղթականների քարավանների տեղափոխմանը՝ ապահովելով վերջիններիս կյանքի ու ունեցվածքի անվտանգությունը հնարավոր ավազակային հարձակումներից¹²: 1828 թ. և մասամբ 1829 թ. Սալմաստից, Խոյից, Մակուից, Ղարադաղից և Ասրաւատականի մյուս զավաններից Հայկական մարզում և մասամբ նաև Ղարաբաղում հաստատվեց ավելի քան 8 000 հայ ընտանիք՝ մոտ 45 000 մարդ, ինչը Պարսկաստանի տիրապետության տակ մնացած այդ տարածքի

⁷ Տե՛ս Պարսամյան Վ. Ա., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Եր., 1947, էջ 104, 405

⁸ Տե՛ս Սարովիսամյան Ն., նշվ. աշխ., էջ 63

⁹ Տե՛ս Դоговоры России с Востоком, էջ 222

¹⁰ Տե՛ս Генерал-фельдмаршал князь Паскевич, его жизнь и деятельность. По неизданным дневникам составил Генерального Штаба генерал-лейтенант Щербатов, т. 3, Санкт-Петербург, 1891, էջ 89-91

¹¹ Грибоедов А. С., Полное собрание сочинений, т.3, Петроград, 1917, էջ 237

¹² Տե՛ս Սարովիսամյան Ն., նշվ. աշխ., էջ 155-156

հայության շուրջ 70 տոկոսն էր: Պարսկահայերի, ինչպես նաև արևմտահայերի^{*} ներգաղթը Արևելյան Հայաստան հայացրեց այդ գավառները¹³:

Հայկական մարզի հոչակումից հետո, ցավոր, սկսեցին դրսորվել ցարական կառավարության խտրական քաղաքականության առաջին դրսորումները: Ռուս-պարսկական պատերազմի ավարտից հետո Ի. Պասկիչը սկսեց Արևելյան Հայաստանից հետևողականորեն հեռացնել նշանավոր հայ գործիչներին՝ անտեսելով ռուսական զորքերին վերջիններիս մատուցած հսկայական ծառայությունները: Թուրքմեննայի պայմանագրի ստորագրումից հետո Ներսես Աշտարակեցին ազատվեց Երևանի ժամանակավոր վարչության անդամությունից, իսկ մայիսի 21-ին ռուս-թուրքական սկսված պատերազմում հայերին համապատասխան հորդորներ անելու պատրվակով նրան ուղարկեց Բեսարարիա՝ իրք թեմի առաջնորդ¹⁴:

Նոյն գործելառնը կիրառվեց նաև գնդապետ Ե. Լազարյանի նկատմամբ: Հակադրվելով Պասկիչի այն կարծիքին, թե Պարսկաստանից հայերը «ռուսական ոսկուց շլացած» են գաղթել Ռուսաստան՝ Ե. Լազարյանը նշում էր, որ Անդրկովկաս գաղթելու հայերի ցանկությունից զատ՝ ռուսական կառավարությունը նոյնապես իր շահն ունի այդ գործում, այլապես այդքան գումարներ չէր ծախսի ներգաղթի կազմակերպման համար: Լազարյանը նշում էր, որ նոր գրավված տարածքները աշխատասեր հայ ժողովրդով բնակեցնելու միջոցով կայսրության համար հարստության մի մեծ առյուր բացվեց¹⁵: Եվ իսկապես, Արևելյան Հայաստանի միացումով Ռուսաստանը ոչ միայն ընդարձակեց իր սահմանները, այլև պարսկահայերի ու արևմտահայերի ներգաղթի շնորհիվ այդ տարածքում ձեռք բերեց խաղաղ և աշխատասեր բնակչություն, որը կայսրության այդ տարածքներում ապահովելու էր առևտրի ու արհեստների զարգացումը¹⁶:

1828 թ. սեպտեմբերի 28-ին Ի. Պասկիչը գաղտնի շրջաբերականով Պարսկաստանում ռուսական զորքերի հրամանատար Պանկրատիկ, Հայկական մարզի կառավարիչ Ալ. ճավճակաձեից, փոխգնդապետ Մ. Երկայնարազուկ-Արդուրյանից և Ա. Գրիբոյեդովից փորձում էր տեղեկություններ ստանալ պարսկահայերի ներգաղթի կազմակերպման գործում Ե. Լազարյանի դերի մասին: Ստացված տեղեկությունները Ի. Պասկիչը բավարար համարեց Ե. Լազարյանին Անդրկովկասից վտարելու համար¹⁷:

Հայկական ինքնիշխան և անկախ պետականության հարցը բաձրացնող հայ գործիչներին տարբեր պատրվակներով Արևելյան Հայաստանից

* Օսմանյան կայսրությունից Հայկական մարզ և Անդրկովկասի այլ շրջաններ գաղթողների թիվը մինչև 1931 թ. հասավ 90–100 հազարի

¹³ Սարովանյան Ն., նշվ. աշխ., էջ 152-153

¹⁴ Տե՛ս Երիցյան Ա., նշվ. աշխ., էջ 365

¹⁵ Տե՛ս Պոտտո, Վերածնություն Հայաստանի, Փարիզ, 1904, էջ 21

¹⁶ Տե՛ս Պալասանյան Ա., Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1902, էջ 499-500

¹⁷ Տե՛ս Երիցյան Ա., նշվ. աշխ., էջ 393

հեռացնելը վկայում էր այն մասին, որ Հայկական մարզ ստեղծելով՝ ցարական կառավարությունը «անկախ», «ինքնավար» Հայաստան ստեղծելու նպատակ չէր հետապնդում: Հայկական մարզը ցարական կառավարության կողմից դիտվում էր որպես ազգային ինքնուրույն պետական իրավունքներից գործկ, կայսրության մեջ մտնող մի սովորական տարածքային միավոր¹⁸:

Անդրկովկասի վարչական նոր բաժանումների մասին Նիկոլայ I-ի 1840 թ. ապրիլի 10-ի հրամանագրով Հայկական մարզի վերացումը առաջ բերեց հայ մտավորականության արդարացի քննադատությունը, քանզի այդ որոշմամբ իսպառ անտեսվում էին հայերի սոցիալ-տնտեսական և ազգային-մշակութային շահերն ու առանձնահատկությունները:

Հայ ժողովրդի դարավոր երազանքը վերածվեց ուսուական կայսրության ծայրամասում անձի և գույքի ապահովությամբ ապրելու երաշխիքի: Համեմատելով թուրք-պարսկական լծի հետ՝ Մաֆֆին իրավամբ արձանագրում էր, որ Ռուսաստանի հայը թե՛ իր մտավոր և թե՛ նյութական կարողություններով ավելի բարձր է, քան պոլսեցին¹⁹: Ռուսական տիրապետությունը հայ ժողովրդի համար նախադրյալներ ստեղծեց ինչպես ազգային համախմբնան²⁰, այնպես էլ մշակութային զարգացման համար²¹, սկսեցին զարգանալ արևելահայ գրականությունն ու պարբերական մամուլը:

Ռուսական կայսրության կազմում Արևելյան Հայաստանի վրա նույնապես տարածվեցին երկրում ընթացող դատական բարեփոխումները, գյուղական ինքնավարության, կրթական գործի բարեկավման դրսերումները նպաստեցին հայ ժողովրդի ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ հասարակական-քաղաքական զարգացմանը²²:

Արևելյան Հայաստանը ներգրավվեց Ռուսական կայսրության ապրանքաշրջանառության և հետզհետե զարգացող ֆինանսատնտեսական հարաբերությունների ոլորտի մեջ, երկրամասում սկսեցին կառուցվել ճանապարհներ, երկարուղիներ, զարգանալ վաճառականությունը, երկրագործությունը:

¹⁸Տե՛ս Պարսամյան Վ. Ա., նշվ. աշխ., էջ 138-139

¹⁹Տե՛ս Մաֆֆի, Երկերի ժողովածու, հու. IX, էջ 478

²⁰Տե՛ս Լեռ, Գրիգոր Արծրունի, հու. II, Թիֆլիս, 1903, էջ 248-249

²¹Տե՛ս Նազարյանց Ստ., Երկեր, հու. Ա, Թիֆլիս, 1913, էջ 95-96

²²Տե՛ս Աղայան Ղ., Երկեր, հու. 2, Երևան, 1939, էջ 280

ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՊՀ հայոց պատմության ամրիոնի
պրոֆեսոր,
պատմական գիլությունների
դոկտոր



ԲԱՅԱՔԵՏ, 1877. ԳԵՆԵՐԱԼ ԱՐՇԱԿ ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՈՎ

Ուսական ռազմական պատմության մեջ ռազմական գործիչների աստղաբույլում իր անունն է անմահացրել նաև հայազգի գորավար Արշակ Տեր-Ղուկասովը:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը Տեր-Ղուկասովի ռազմական կենսագրության մեջ բազում փառավոր էջեր գրեց: Նրան, «որպես գորապետի և հուսալի հրամանատարի¹», վստահել էին կովկասյան ճակատի երեք կարևոր ուղղություններից երեսնյանը: Զոկատը պետք է շարժվեր Երևան-Բայազետ ուղղությամբ, և արդեն ապրիլի 18-ին՝ պատերազմի սկզբելուց մեկ շաբաթ անց, Տեր-Ղուկասովը գորքերի գլուխ անցած ուղղությունն է վերցնում դեպի Բայազետ: Ի դեպ, ռուսական բանակների համար այդ ամրոցը գրավել գրեթե բոլոր պատերազմների ժամանակ առանձնապես դժվար չի եղել: Այս անգամ էլ ռուսական ջոկատն առանց դժվարության գրավում է Բայազետը: Շարունակելով ռազմերքը՝ Տեր-Ղուկասովի ջոկատը գրավում է նաև Դիաղինը: Նրա անունն այնքան սարսափագրու էր դարձել թշնամու շարքերում, որ Տեր-Ղուկասովի առաջխաղացման մասին լսելուն պես թուրքերը ուղղակի դիմում էին փախուստի: Նույնիսկ Բայազետի ռազմատենչ քրդերը շտապում են իրենց հպատակությունը հայտնել Տեր-Ղուկասովին: Ապրիլի 29-ին գորավարը գրավում է Սուրբ Հովհաննեսը, իսկ մայիսի 28-ին՝ Ալաշկերտը:

Ուսական բանակի հաղթանակները ի վերջո թուրքերին ստիպում են դուրս գալ իրենց թաքսոններից և հարձակողական գործողություններ

¹ Ст. «Герои и деятели русско-турецкой войны 1877-1878 гг., СПб., 1878, т. 101

ծավալելով՝ փորձել փոխել պատերազմի ընթացքը: Մուխտար փաշան իր գործերը առաջին հերթին ուղղում է Տեր-Ղուկասովի ջոկատի դեմ, քանի որ վերջինս արդեն սպառնում էր Էրզրումին, ինչը նշանակում էր, որ կովկասյան ճակատում թուրքական զորքերի պարտությունն անխուսափելի է: Թուրքերի ակտիվանալուն զուգընթաց՝ քրդերն էլ իրենց հերթին սկսեցին խժդություններ հրահրել գրավված տարածքներում:

Մեկ շաբաթվա ընթացքում մղված երկու ծայրահեղ ծանր ճակատամարտերը գրեթե ուժասպառ էին արել ոռուսական ջոկատին: Ուստի, հաշվի առնելով դրության բարդությունը և ջոկատին հանգիստ տալու անհրաժեշտությունից ելնելով, Տեր-Ղուկասովն ընդունում է ռազմական իրավիճակին գրեթե հակառակ վճիռ՝ նահանջել հզդիր, հանգիստ տալ ջոկատին, բուժել վիրավորներին և նոր ուժով վերսկսել ռազմական զործողությունները: Մշտապես մարտի դաշտ ալացող և կռվից երբեք չխորշած զորապետի համար նման որոշում կայացնելն իսկապես դժվար էր: Սակայն Տեր-Ղուկասովը չէր կարող վտանգել երկու անընդմեջ ծանր ճակատամարտեր մղած, հոգնած ու հյուծված զինվորների կյանքը: Չէր կարող, քանի որ իր ողջ ծառայության ընթացքում զինվորի հանդեպ հոգատարությունը մշտապես բարձր է եղել նրա զորավարական հավակնությունից: Ավելին, յուրաքանչյուր հաղթական կռվից հետո նա մոտենում էր զինվորներին, հանում գեներալական զիսարկը և ասում. «Այլ կերպ քեզ երախտապարտ լինելու ոչինչ չունեմ...»²: Զորապետն ավելի հոգատար էր վիրավորների հանդեպ. Նա ուղղակի գրկում էր նրանց՝ ասելով՝ «...դուք մարդ չեք, դուք սուրբ եք, դուք հերոսներ եք»³:

Պատմում են, որ Բայազետի արշավանքի նախօրյակին, երբ բոլորը արշավային տրամադրության մեջ էին, Տեր-Ղուկասովը, իր ստվորության համաձայն, վերարկուն փոել էր գետնին և հանգստանում էր, հանկարծ նկատում է, որ իրենից քիչ հեռու սպաները կրակ են վառել և թեյ են պատրաստում: Նա համհարզին ուղարկում է սպաների մոտ՝ խնդրելով, որ իր համար էլ մի բաժակ թեյ պատրաստեն: Վերջիններս նախ անկեղծորեն զարմանում են, որ հրամանատարը նման հասարակ բանի համար խնդրանքով է դիմում իրենց, ապա միակ բանը, որով կարող էին հավաստել իրենց մեծ հարգանքը սիրելի հրամանատարի նկատմամբ, թեյի հետ մի կտոր շաբար մատուցելն էր, որը Տեր-Ղուկասովը կիսում է իր համհարզի հետ⁴:

Մինչ Արշակ Տեր-Ղուկասովի ջոկատը վերականգնում էր իր ուժերը Իզդիրում, թուրքական հրամանատարությունը մեծաքանակ ուժեր է կուտակում Բայազետի բերդի ուղղությամբ, որտեղ տեղակայված ոռուսական կայազորի պաշտպանական ուժերը բավականին սակավաթիվ էին:

Բայազետի պաշտպանությունն սկսվում է 1877 թ. հունիսի 6-ին, երբ Վանի

²Տե՛ս Բրատская помощь пострадавшим в Турции армянам, М., 1898, էջ 312

³Տե՛ս նույն տեղում

⁴Տե՛ս նույն տեղում

Ֆուլիկ փաշայի 15 հազարանոց բանակը շրջապատում է բերդը և ռուսական կայազորին դատապարտում դանդաղ ոչնչացման: Պաշարման առաջին խև օրը ծանր է անդրադանում ռուսական կայազորի վրա. սպանվում է փոխգնդապետ Կովալևսկին, վիրավորվում են ևս 4 սպաներ և ավելի քան 150 զինվորներ: Երեք տասնյակ կազակներ կորցնում են իրենց ձիերը: Շուտով իրեն զգացը է տալիս սովը, թեպետ կայազորի համար անտաճելին այնքան քաղցր չէր, որքան ծարավը: Դաժան շողի պայմաններում պաշարվածների օրական հասանելիքն ընդամենը մեկ բաժակ զուրն էր... Այդ ընթացքում թուրքերն անընդհատ գրոհում էին բերդը: Միայն հրաշքը կարող էր փրկել Բայազետի կայազորին անխուսափելի կործանումից, և այդ հրաշքն իրադրելու համար պետք էր իրազեկել Տեր-Ղուկասովին պաշարման մասին:

«Մի քանի կազակներ ցանկություն հայտնեցին կատարելու այդ վտանգավոր հանձնարարությունը, առաջինն ընտրվեց կազակ Կիրիլչուկը, որը քաջ ու վճռական զինվոր էր, անձնազրության պատրաստ: Նրան ուղեկցել հանձնարարեցին Սամսոն Տեր-Պողոսովին: Փոխելով հագուստները՝ նրանք զիշերով դուրս եկան բերդից: Կիրիլչուկին հետագայում այդպես էլ չհաջողվեց գտնել, իսկ Սամսոն Տեր-Պողոսովը, վտանգելով կյանքը և հաղթահրելով անասելի դժվարություններ, իր ճարպկության շնորհիվ կարողանում է հունիսի 13-ին հասնել Տեր-Ղուկասովի գրակայան և տեղեկացնել նրան Բայազետի անելանելի դրության մասին»⁵: Ի դեպ, պաշարվածները երկրորդ անգամ են սուրհանդակներ ուղարկում՝ մտածելով, թե Սամսոնին ևս չի հաջողվել հասնել երևանյան ջոկատի տեղակայման վայր, սակայն նրանք հասնում են այն ժամանակ, երբ Տեր-Ղուկասովն արդեն Բայազետի ճանապարհին էր: Զոկատն անհապաղ ոտքի է կանգնում Բայազետին օգնության հասնելու համար: Տեր-Ղուկասովը, դիմելով ջոկատին, ասում է. «Եղբայրներ, մերոնք անելանելի վիճակում են, տանջվում ու մեռնում են Բայազետում: Ես ապրել անզամ չեմ ուզում և ցանկանում եմ մեռնել՝ չլսելու համար նրանց տանջանքների մասին: Ուրեմն, գնանք միասին՝ նրանց հետ մեռնելու համար...»:

«Հարկավոր էր միայն տեսնել, – գրել է հետագայում ականատեսներից մեկը, – թե ինչպես ողջ ջոկատը ցնցվեց հրամանատարի խոսքերից, սպաները համընդհանուր ուույուվ մերկացրին սրերը, զինվորները վեր բարձրացրին զենքերը, թեև ո՞չ անհրաժեշտ պաշար ունեին և ո՞չ էլ զինամթերք... սակայն շանցած մեկ ժամ, ողջ ջոկատն արդեն Բայազետ տանող ճանապարհին էր»⁶:

Բայազետի ազատագրման հերոսական գործողությունից զատ՝ կա նաև մեկ այլ ուշագրավ պատմություն, որի հերոսը սպանված փոխգնդապետ Կովալևսկու այրի Ալեքսանդրա Եֆիմովնան էր՝ միակ կինը բերդում: Բնականարար, ծարավին ու քաղցին ոչ բոլորն էին դիմանում, նույնիսկ բարձր-

⁵ Материалы для описания русско-турецкой войны 1877–1878 гг. на Кавказско-Малоазиатском театре, т. IV, СПб., 1904, л. 225

⁶ Герои и деятели русско-турецкой войны..., л. 105

աստիճան սպաները: Այսպես, փոխգնդապես Պացեիչը, հասնելով բերդի պարսպին և քուրքերին դիմելով՝ հայտարարում է, որ պատրաստ են հանձնվելու, սակայն նույն պահին վիրավորվում է յուրայինների գնդակից: Կովալևսկայան իր մոտ եղած երկու շիշ գինին զոհաբերում է մեռնող սպային փրկելու համար...

Ուշագրավ մի պատմություն էլ կա. բերդի կայազորի հրամանատար կապիտան Ֆյոդր Շոտկվիչը, տեսնելով իր զինվորների կրած տառապանքները, դիմում է նրանց, ասելով. «...հիշեք, որ երդումն ու օրենքը, մեր հայրենիքի պարտքն ու փառքը մեզանից պահանջում են մեռնել մարտի դաշտում, ինչը և մենք անում ենք... Հիշե՛ք, բարեկամնե՛ր, Աստված ամեն ինչ տեսնում է և մեզ միայնակ չի բողնի...»⁷: Եվ հենց հաջորդ օրը բերդը ցնծում էր Աստծո պարզեց: Ինրդ անձրև է տեղում, ինչը հնարավորություն է տալիս ջրի անհրաժեշտ պաշար հավաքելու. ասում են՝ նույնիսկ դատարկ ափսե չէիր գտնի բերդում, լցնում էին՝ ինչ պատահի, անգամ զինվորական կոշիկների մեջ... Իսկ այդ ընթացքում Մուխտար փաշան ամեն անգամ տեղեկանալով, որ բերդի գլխին դեռ ծածանվում է ոռւսական դրոշը, կատաղության էր հասնում:

Հունիսի 27-ին Տեր-Ղուկասովն իր ջոկատով արդեն կործանման եզրին կանգնած բերդի մատույցներում էր: Հետախուզումից պարզ դարձավ, որ Բայազետը շրջապատող բոլոր բարձունքները քուրքերի կողմից գրավված են, բացի մեկից: Հենց այդ բարձունքն էլ հենակետ դարձնելով իր համար՝ Տեր-Ղուկասովն անմիջապես հարձակման է անցնում, ինչն էլ վճռում է ճակատամարտի ելքը: Բայազետի պաշտպանները, որոնք ոտքի վրա հազիվ էին կանգնում, դուրս են զալիս բերդի դարպասներից և մասնակցում ատելի քուրքերի ջախջախմանը. «Հունիսի 27-ին, երբ քուրքերը պատրաստվում էին նոր գրոհ կազմակերպել բերդի վրա, հանկարծ բերդի բարձրակետից ոռու ժամապահը բղավում է՝ «մերոնք են զալիս...»։ Դա գեներալ Տեր-Ղուկասովի ջոկատն էր, որն արագորեն շարժվում էր բերդի ուղղությամբ... Ուրախավի լուրը շուտով տարածվում է ամբողջ բերդում, և կայազորը կրկին աշխուժանում է. լսվում են վաղուց մոռացված ծիծաղն ու կատակները, միջնաբերդի վրա կրկին ծածանվում է Ստավրոպոլյան զումարտակի դրոշը... բոլորը հանդիսավորությամբ երգում են «Աստված ցարին պահպանի» երգը և եռակի ուռա՛ գոչում...»⁸:

Տեր-Ղուկասովն իր տրամադրության տակ ունեցած համեստ ուժերով կարողանում է ոչ միայն պարտության մատնել բերդը պաշարած բուրքական 30 հազարանոց բանակին, այլև գերի վերցնում շուրջ հարյուր քուրք զինվորի և խլում 4 հրանոք: Գլխավոր հաղթանակը, սակայն, պաշարված հերոսներին ազատագրելն էր: Պատմում են, որ բերդի ազատագրումից հետո, երբ երկու

⁷ Материалы для описания русско-турецкой войны 1877–1878 гг... т. 232

⁸ Նույն տեղում

սպաների օգնությամբ դարպասներից դուրս են թերում գրեթե ուժասպառ Ալեքսանդրա Կովալևսկայային, Տեր-Ղուկասովը մտտենում և համբուրում է նրա ձեռքը, իսկ սպաները խոնարհումով արտահայտում են այդ հերոսական կնոջ հանդեպ ունեցած մեծ հարգաճը:

Փաստենք նաև, որ պատերազմի սկզբից ևեր ձևավորվեցին հայերով համալրված ուր կամավորական ջոկատներ, որոնք անմիջապես մտան ուղմական գործողությունների դաշտ: Շակատ մեկնող հայ կամավորական ջոկատներում ընդգրկվել ցանկացողների թիվն այնքան մեծ էր, որ առանձին տեղերում ուղղակի դադարեցնում են նրանց ցուցակագրումը: Բայազետի մատուցներում գեներալ Տեր-Ղուկասովի գլխավորած ոռուսական զորքի հետ կռվում էր Ղարաբաղի հայերից կազմված հեծյալ գումարտակը: «Նրանք արժանի են իրենց նախնիներին, որոնք մեկ անգամ չեն, որ իրենց կյանքը տվեցին եղբայրակից քրիստոնյաներին պաշտպանելու համար»⁹, – գրել է ոռուս գեներալներից մեկը: Իսկ Ռուսաստանում գործունեություն ծավալած, ազգությամբ ֆրանսիացի նշանավոր գիտնական Էդ. Դյուլորիեն նկատել է. «Ռուսաստանի և Թուրքիայի միջև ընթացող ներկայիս պատերազմում հայերի դրությունը ամենից դժվարն է, քանի որ նրանք բաժանված են այս երկու պետությունների միջև, և այդ ամենը նրանց մեջ հույսեր է արքնացնում: Եվ թեպետ այն առարկայական չեն, սակայն հուսադրող է և էական, ինչպես որ էական և գործուն է հայերի օգնությունը ոռուսական բանակին. Ռուսաստանը ասիական պատերազմներում ի դեմս հայերի գտել է փորձված դաշնակիցների»¹⁰:

Ղարաբաղի հայերից կազմված հեծյալ գումար՝ Գրիգոր Սելիք-Շահնազարյանի ու Համբարձում Հախումյանի գլխավորությամբ, օգնության հասավ պաշարված Բայազետին: Գրավված շրջանների հայերը մեծ պատրաստականությամբ էին հանձն առնում ուղեկցողի պատասխանատու գործը, շատերը ոռուսական բանակում ծառայում էին որպես թարգմանիչներ, որոնց կարիքը մեծ էր: Հայերի գործուն մասնակցությամբ է կազմակերպվում ոռուսական զորքերի պարենավորումը: Հայ գյուղացիները մեծ քանակությամբ սննդամբերը, փոխադրամիջոցներ, անասնակեր են տրամադրել ոռուսներին, ինչը մեծապես նպաստում էր նրանց հաղթանակին: Հայերից շատերը անմիջաբար մասնակցում էին ճանապարհների, կամուրջների ու ռազմական շինությունների կառուցման աշխատանքներին: Այս ամենը, բնականաբար, առաջացնում էր թուրքերի զայրույթն ու թշնամանքը, քանի որ քաջ գիտակցում էին, որ իրենց սահմաններից հեռու կռվող ոռուս զինվորի հաղթանակները կերտվում են նաև տեղի հայերի աջակցության շնորհիվ: Հետևաբար, նրանք ահարեկում էին հայերին, սպառնում ֆիզիկական ոչնչացումով: Բայց նույնիսկ այդ ահարեկումներն ու սպառնալիքները

⁹ Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г., М., 1898, № 395

¹⁰ Газета «Кавказ», 1854, № 80, № 365

հայերին ետ չպահեցին ոռւսական զորագնդերին օգնելուց, քանի որ բոլորն էլ քաջ զիտակցում էին, որ իրենց կյանքը ոչինչ է հայրենի երկիրը ատելի թուրքերից ազատագրելու համեմատ: «Հայ զյուղացին,- զրում էր ոռւսական ազդեցիկ «Գոլոս» թերթը,- ոռուս զինվորի հետ կիսում է իր բերանի վերջին պատառը, ոռւսական զորքերի հաջողություններով ոգևորված արևմտահայությունը ձգուում էր թոքափել օսմանյան դարավոր լուծը: Բազմաթիվ են դեպքերը, երբ ոռուս վիրավորներին հայերը տեղափորել են իրենց կացարաններում և, քաջ զիտենալով թուրքերի վերաբերնունքը, սեփական կյանքը վտանգելով, խնամում և կերակրում էին նրանց¹¹:

Բայազետի պաշտպանությունը Տեր-Ղուկասովի ոազմական զործունեության գագարնակետն էր. թերդաքաղաքի ազատագրումը, անկասկած, ոռուս-թուրքական պատերազմի ամենահիշարժան դրվագներից էր: Չուր չէ, որ հետագայում այն դարձավ ոռուս-թուրքական պատերազմի խորհրդանիշ: Բայազետի ազատագրման լուրը ստանալուն պես մեծ իշխան Սիխայիլ Նիկոլակիչն անձամբ է ժամանում Իգդիր, որտեղ տեղակայված էր Երևանյան ջոկատի շտաբը: Շարք կանգնած զինվորների առջև բարձրացվում են դրոշները, ընթերցվում է կայսեր շնորհակալագիրը. «Երևանյան ջոկատին հայտարարում եմ կայսերական շնորհակալություն՝ ջերմեռանդ ծառայության, ցուցաբերած արիության ու փառքի համար... այդ ամենը կմտնի մեր պատմության մեջ, և դրա հետ նաև այն իշողությունը, որը կփոխանցվի հետագա սերունդներին: Փա՛ռ Երևանյան ջոկատին, փա՛ռ գեներալ Տեր-Ղուկասովին»¹²:


Բնականարար, շնորհակալագրին պետք է հետևեր համարժեք պարգևը, ինչն էլ իրեն ուշանալ չտվեց. Բայազետի ազատագրման ժամանակ ցուցաբերած խիզախության ու օրինակելի անձնազրության համար 1878 թ. հուլիսի 22-ին Տեր-Ղուկասովն արժանանում է Սր. Գեորգի 3-րդ աստիճանի շքանշանի: Իսկ դա նշանակում էր, որ Գեորգի Պորեդանուեցի երկու շքանշանների կողքին Տեր-Ղուկասովի կուրծքը պիտի զարդարենի նաև Սր. Ստանիլավի 2-րդ, Սր. Վլադիմիրի 4-րդ և 3-րդ, Սր. Աննայի 2-րդ աստիճանի շքանշանները «Քաջության համար» մակագրությամբ:

¹⁰ Հայ ժողովրդի պատմություն, ԳԱԱ հրատ., հատոր 6, Եր., 1981, էջ 106

¹¹ Братская помощь пострадавшим в Турции армянам..., էջ 313

ՎԱԼԵՐԻ ԹՈՒՆՅԱՆ

Հայասպանի գիրությունների
ազգային ակադեմիայի
պատմության ինսիդիուլի
առաջապար գիրաշխապող,
պատմական գիրությունների դոկուոր,
պրոֆեսոր



Ք. Ա. ՎԵՐՄԻՇՅԱՆԻ (ՎԵՐՄԻՇԵՎԻ) ՄՈՏԵՑՈՒՄԸ ՀԱՅ-ՌՈՒՍՊԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ք. Ա. Վերմիշյանի (Վերմիշևի) հասարակական գործունեությունը հայտնի է ընդհանուր գծերով՝ գիտնական, գործարար, Թիֆլիսի քաղաքագլուխ, անդրկովկասյան քերերի հրատարակիչ, Հայ ժողովրդական կուսակցության առաջնորդներից մեկը, Հայաստանի առաջին հանրապետության պարենի նախարար¹: Մրանով հանդերձ՝ չուսումնասիրված է մնում նրա մոտեցումը հայ-ռուսական հարաբերություններին անդրկովկասյան հանրապետությունների ձևավորման ժամանակահատվածում՝ 1917–1920 թթ.:

1917 թ. սեպտեմբերի 24–28-ը Թիֆլիսում տեղի ունեցավ Հայ ժողովրդական կուսակցության առաջին համագումարը²: Ընդունվեցին կուսակցության ծրագիրը, կանոնադրությունը, և ձևավորվեց կենտրոնական բյուրոն: Ծրագրում նշվում էր, որ այն վերդասակարգային և համազգային կուսակցություն է: Կապիտալի գերակա դերի, մասնավոր սեփականության և շուկայական տնտեսության մասին³ կադեսների դրույթները տարտեղվում էին լոկ ազգային հարցով, որի իրականացումը Արևելյան Հայաստանի բնակչության համար պետք է դառնար տարածքային ինքնավարությունը (տերիտորիալ ավտոնոմիան), իսկ Ռուսաստանի հայերի համար՝ ազգային-մշակութային ինքնավարությունը: Բյուրոյի նախագահ դարձավ Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության Արևելյան բյուրոյի նախկին անդամ,

¹ Տե՛ս Կարապետյան Ս., Թիֆլիսի քաղաքագլուխները, Եր., 2003, էջ 89–92

² Տե՛ս Կարգսյան Ս. Տ. Պերվայ Արմենական Հանրապետությունը և առաջապար գիրաշխապող (1918–1920 թթ.). Եր., 2005, էջ 63

կամավորական շարժման ակտիվիստ, Պետական դումայի նախկին պատգամավոր, Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (ՕԶԱԿՈՄ) անդամ Մ. Հ. Պապաջանյանը (Պապաջանովը)⁴:

Ուսասատանում հասարակական զարգացման դժվարությունները հայկական քաղաքական ուժերին դրդեցին համազգային համաժողովն անցկացնելու Թիֆլիսում: Բացումը տեղի ունեցավ 1917 թ. սեպտեմբերի 27-ին: Ք. Վերմիշյանը, որն ընդգրկվել էր «Հայ ժողովրդական կուսակցություն» խմբակցության կազմում, սեպտեմբերի 30-ին տեղի ունեցած երկրորդ նիստում առաջարկեց, ելնելով ընթացիկ իրավիճակից, քննարկել ուազմական, արդյունարերական և գյուղատնտեսական հարցերը: 1917 թ. հոկտեմբերի 4-ի նիստում Վերմիշյանը ուշադրություն հրավիրեց ապագա անդրկովկասյան իշխանության կազմին, որը պետք է փոխարիներ Անդրկովկասյան հատուկ կոմիտեին: Ուսասատանում ի հայտ էր եկել դիմակայություն երկու ուժերի միջև՝ բոլշևիզմի, որը դեմ էր կոալիցիոն իշխանությանը, և քաղաքական մյուս ուժերի, որոնք ընդունում էին նման հնարավորությունը: «Մենք պետք է հակվենք վերջին մոտեցմանը, ինչը բույլ կտա ստեղծել ուժեղ իշխանություն, որից ելնելով էլ մեզ համար անընդունելի է սոցիալիստական կուսակցությունների առաջարկը՝ ձևավորելու կառավարությունը սոցիալիստական ներկայացուցիչներից»⁵:

Հոկտեմբերի 7-ին համաժողովը քննարկման դրեց ազգամիջյան հարաբերությունների հարցը: Իրադարձությունների հետագա զարգացման ընթացքը հասկանալու անհրաժեշտությունն ընթացիկ պահով էր պայմանավորված: Այդ համատեքստում Ք. Վերմիշյանը կազմեց «Հայկական քաղաքականության առաջիկա խնդիրները» ծրագրային փաստաթուղթը: Որպես ուազմավարական նպատակ նշված էր ազգային միասնության հաստատումը: «Հայերը պետք է ձգտեն միավորել իրենց ժողովրդի բոլոր հատվածները, որոնք բաժանված են երեք պետությունների միջև՝ Ուսասատանի, Թուրքիայի և Պարսկաստանի»⁶: Ուշադրություն էր հրավիրվում այն հանգամանքին, որ ազգի մեծ մասը՝ շուրջ 2 մլն մարդ, գտնվում էր Ուսական կայսրությունում: Նրանցից 600 հազարը բնակվում էր Երևանի նահանգում, որի հիմքում Հայկական մարզն էր, որը, ի հաշիվ Թիֆլիսի նահանգի և Կարսի մարզի, կարող էր ընդգրկել ավելի քան 1 մլն հայ բնակչություն: Հայաստանի Հանրապետությունը կարող էր կազմավորվել հենց Թուրքահայաստանի հետ Երևանի նահանգի միավորմամբ⁷:

Դրա սահմաններից դուրս էին մնում Թիֆլիսի, Բաքվի, Գուրայիսի նահանգների, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի հայերը, որոնք հանրա-

⁴Տե՛ս Արմենская народная партия, <https://www.olmamedia.ru/histrf/book>

⁵Արմենская национальная конференция. Тифлис, 1917 г., сентябрь-октябрь. Вестник Архивов. 1992, № 1-2, 33, 39, էջ 42

⁶Նույն տեղում

⁷Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 43, գ. 1, գ. 106, թ. 1

պետության կյանքին անմիջականորեն շմասնակցելով՝ չին պաշտպանելու նրա շահերը. «Հայության այդ հատվածը ոչ մի ազդեցություն չի ունենալու Հայաստանի Հանրապետությունում ապրող հայերի ճակատագրի վրա, բայց փոխարենը իր վրա է կրելու Հայաստանի Հանրապետություն քաղաքականության ցանկացած ազդեցություն»⁸: Մյուս կողմից՝ ազգի մի հատվածը Թուրքիայի, Աղրբեջանի և Ռուսաստանի կազմերում կարող էր «ձանք զին վճարել» Հայաստանի Հանրապետության քաղաքականության բովանդակության համար: Հայկական պետականությունը դիտվում էր որպես ազգի զարգացման համալիր գործուն: Առաջին հերքին տեղի էր ունենալու պետականաստեղծ էթնոսի ձևավորում. «Եթե բոլոր հայերն ապրեն մեկ պետության մեջ, ապա համատեղ ջանքերը պետական աշխատանքում հնարավորություն կտան նրանց մշակելու քաղաքականության ընդհանուր գիծ, որը կպաշտպանի նրանց ուրիշների քաղաքականության, ուրիշների գործողությունների համար պատասխանատվություն կրելուց: Հայոց պետության մեջ համատեղ կյանքը կսովորեցնի տեղական իշխանություններին համազործակցել միասնական հանրային իշխանության հետ»: Կանխատեսվում էր հայերի ազգային-մշակութային կյանքի զարգացում⁹:

Էթնոսի զարգացումը դիտարկվում էր աշխարհաքաղաքական միջավայրում, ինչը պահանջում էր պահպանել փոխադարձ կապերը Ռուսաստանի հետ, քանի որ նրանից «անջատվել կարող էր հայության միայն կեսը՝ իր տարածքով»: Նոյնիսկ Ռուսահայաստանի և Թուրքահայաստանի միավորման դեպքում նախատեսվում էր պահպանել կապերը Ռուսաստանի հետ, ինչը պայմանավորված էր քաղաքական ու տնտեսական կապերով. «Հետևաբար, հայ ժողովրդի վերածննդի առաջին փուլն անհնար է իրագործել Ռուսաստանից անջատ»¹⁰:

Հայկական պետականության վերականգնման գործընթացը բարդ էր աշխարհաքաղաքական իրադրության պատճառով. «Հայկական մարզի անջատումը Ռուսաստանից նշանավորելու էր Ռուսաստանի մասնատման ու բուլացման սկիզբը: Ռուսաստանի բուլանալու հետևանքով այդ պետության տարածքում անխուսափելիորեն ուժեղանալու են մահմեղական քաղաքական կազմավորումները»: Կանխատեսվում էր գոյության պայքար: «Քազմաթիվ մահմեղական պետությունների կողքին, որոնք ի զորու են միավորվել մեկ հզոր Մահմեղական միության մեջ, Հայաստանը կհայտնվի մեկուսացված պետության վիճակում՝ բոլոր կողմերից շրջապատված լինելով թշնամական ցեղերով: Այդ պետության ճակատագիրը կախված կլինի այն բանից, թե որքան ժամանակ ուժեղ կլինի այն պետությունը, որի հովանունը երկիրը կսկսի իր քաղաքական գոյության նոր դարաշրջանը»¹¹:

⁸ Նոյն տեղում

⁹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 43, գ. 1, գ. 106, թ. 2

¹⁰ Նոյն տեղում

¹¹ Նոյն տեղում, թ. 4

Ժուրքահայաստանի հետ շմիավորվելու դեպքում հնարավոր էր համարվում պահպանել ազգային-մշակութային կյանքը: Ընդգծվում էր դրա «500-ամյա» գոյությունը «Մեծ Հայաստանի» և «Կովկասյան Հայաստանի» միջև ընկած ժամանակահատվածում՝ օսմանցիների կողմից «Մեծ Հայաստանի» նվաճվելուց հետո: Իսկ դրանց միավորման դեպքում առաջարկվում էր դիտարկել կանոննային վարչատարածքային ձևը Շվեյցարիայի կամ Խտալիայի օրինակով¹²: Հայաստանի Հանրապետության անկախությունը հռչակվեց 1918 թ. մայիսի 28-ին:

Վերմիշյանի հնչեցրած մտքերը դարձան ազգային կյանքի քաղաքական դիսկուրսի բաղկացուցիչ մաս: Վերլուծական փաստաթղթի բովանդակությունը լրացվում և ընդլայնվում էր հայ ազգի կյանքում տեղի ունեցող իրադարձություններին համապատասխան:

1919 թ. փետրվարի 9-ին Վերմիշյանը դարձավ Հայ ժողովրդական կուսակցության ԿԿ անդամ¹³, ինչը հնարավորություն ընձեռեց նրան մայիսի 28-ին նշանակվելու Հայաստանի պարենի նախարարը¹⁴: 1919 թ. մայիսի 28-ին Հայաստանի կառավարությունը հրապարակեց «Միացյալ և անկախ Հայաստանի մասին ակտը», որը ներառում էր Արևմտյան և Արևելյան Հայաստանը: Դրա հիմքում ընկած էր թուրքահայոց երկրորդ համագումարի որոշումը՝ վերամիավորելու Արևմտյան Հայաստանը՝ «Օսմանյան կայսրությունում գտնվող նախնիների երկիրը»¹⁵, Հայաստանի Հանրապետության հետ: Հայաստանի խորհրդարանում քաղաքական իրավիճակի քննարկումը տեղի ունեցավ 1919 թ. հունիսի 4-ին: Սոցիալ-դեմոկրատական խմբակցությունը մեղադրեց ՀՅԴ-ին պետական հեղաշրջման մեջ՝ մատնանշելով 1919 թ. փետրվարի 28-ից մինչև մայիսի 28-ն ընդունված օրենքների գուտ «անվանական գոյությունը»: Ընդ որում՝ 1919 թ. ապրիլի 27-ին խորհրդարանն իր լիազորությունները մեկ ամսով գիշեց Հայաստանի կառավարությանը: Դրանից ելնելով՝ կառավարությունն իրավունք չուներ ընդունելու Միացյալ Հայաստանի «ակտը» և խորհրդարանի կազմում ներգրավելու արևմտահայ 12 պատգամավորների՝ ապահովելով ՀՅԴ-ի ճնշող մեծամասնությունը: Խմբակցությունը հայտարարեց խորհրդարանի աշխատանքներին մասնակցելուց հրաժարվելու մասին¹⁶:

Արդյունքում, քանի որ «Ժողովրդական կուսակցությունը դուրս եկավ կուալիցիայից», Վերմիշյանը 1919 թ. հունիսի 24-ին վայր դրեց իր լիազորությունները: Ժողովրդականների խմբակցության որոշմանը նպաստեց Վերմիշյանի «Հայ ժողովրդական կուսակցության մասին» վերլուծականը, որում կադետական կուսակցությունը իրավիճակը քննում էր ոուսական կողմնորոշում ունեցող

¹² Տե՛ս նոյյն տեղում, թ. 1-3

¹³ Տե՛ս նոյյն տեղում, գ. 98, թ. 10

¹⁴ Տե՛ս նոյյն տեղում, թ. 199, գ. 1, գ. 26, թ. 25

¹⁵ Նոյյն տեղում, թ. 43, գ. 1, գ. 220, թ. 30

¹⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., Երևան, 2000, № 92, էջ 107-109

հայ հասարակայնության դիրքերից: Այդ վերլուծականում նշվում էր. «Հայաստանը Ռուսաստանի հետ լինելու իր ձգտման համար բազմաթիվ զոհողություններ է կրել... Ապագայում հայկական կուսակցությունները պետք է ունենան ազատություն: Հայ ժողովուրդը պատասխանատվություն չի կրում Ռուսաստանի հետ իր կապի համար: Անկախ կուսակցության այսպիսի դիրքորոշում կարող է ունենալ միայն ինքնուրույն ազգային կուսակցությունը, այլ ոչ թե ռուսական պետականության խմբակցությունը»¹⁷:

Երկրում գոյություն ունեցող քաղաքական-տնտեսական ճգնաժամով պայմանավորված՝ Վերմիշյանը 1920 թ. սեպտեմբերին դուրս եկավ Հայ ժողովրդական կուսակցությունից¹⁸:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանյան պայմանագրով կյանքի կոչքեց Հայաստանի խորհրդայնացումը: Առաջացավ Վրաստանում խորհրդային իշխանություն հաստատելու սպառնալիք: Իմաստավորելով տեղի ունեցածը՝ Վերմիշյանը գրեց «Ռուսաստանի նոր ուղին...» հոդվածը: Այնտեղ նշվում էր. «Հայաստանի խորհրդայնացումը հայ ժողովրդի առջև խնդիր է դնում զնահատելու այն դերը, որը Ռուսաստանը պատրաստ է կրկին ստանձնելու իր արևելյան քաղաքականության մեջ»:

Վերմիշյանի կարծիքով՝ Կրեմլի դիրքորոշումները փոխատեղումների են ենթարկվել և ձեռք բերել նոր իմաստ. «Ներկայումս Ռուսաստանը հանդես է գալիս միանգամայն նոր դերով, ոչ թե որպես Թուրքիայի թշնամի՝ պատրաստվելով նրա վերջնական վախճանին, այլ որպես դաշնակից, որը պատրաստ է փրկել նրան Անտանտի տերությունների կողմից զախցախումից: Ռուսաստանը դադարում է նրա համար մշտական սպառնալիք լինելուց և բոլորովին նոր մոտեցում է որդեգրում Թուրքիայի նկատմամբ»: Նման հետևողան հանգելու շարժառիթը տարածաշրջանում քաղաքական նոր տեղաշարժերն էին. «Եվ մենք տեսնում ենք, որ ռուսական սպառնալիքի վերացմանը վերանում է նաև Թուրքիայի անհանդուրժությունը հայկական ազգային գաղափարի հանդեպ, իհարկե, այն չափով, որչափով այն խորը է մեզարմանիային (զառանցամտությանը): Իրական Թուրքիան ի դեմս Անգրուայի կառավարության, ճանաչում է անկախ և անզամ միացյալ Հայաստանը հայտնի սահմաններում»¹⁹:

Դրանից ելնելով՝ ճանաչվում էր խորհրդայնացման կարևորությունը Հայաստանի Հանրապետության համար. «Այդ է տեղի ունեցած իրադարձությունների հիմնական իմաստը, և միայն դրանով պետք է որոշվի հայ ժողովրդի վերաբերմունքը կատարված իրադարձությունների նկատմամբ»²⁰: Կատարվածն իմաստավորվում էր աշխարհաքաղաքականության դիտանկ-

¹⁷ ՀԱԱ, ֆ. 43, գ. 1, զ. 104, թ. 6

¹⁸ Նոյն տեղում, զ. 103, թ. 1

¹⁹ Նոյն տեղում, զ. 1, զ. 102, թ. 1

²⁰ Նոյն տեղում, թ. 2

յունից, ըստ որի՝ թշնամական երկրներով շրջապատված փոքր պետությունները, որոնք հույսը դնում են միայն սեփական ուժերի վրա, «վերանում են խաղաղ ճանապարհով կուլ զնալու եղանակով, եթե մեղմաբարո ու խաղաղասեր են, և ոչնչացվելով, եթե մարտնչող են: Այդպիսի ճակատագիր էր սպասվում նաև հայերին, եթե նրանք դեմ հանդիման մնային Թուրքիայի հետ: Ոչ մի խաղաղափրություն չէր փրկի նրանց մահմեղականների կողմից լավագույն դեպքում խաղաղ ճանապարհով կուլ զնալուց»:

Նշվում էր, որ տեղի ունեցող գործընթացները արդյունքում հանգեցնելու են հայ ժողովրդի ապագա վերածննդին. «Ներկայումս, եթք Ռուսաստանը Թուրքիայի նկատմամբ խաղաղության և անգամ դաշնակցային հարաբերությունների նոր մոտեցում է որդեգրել, հայերի առջև բացվում է ոչ միայն իրենց ֆիզիկական փրկության, այլև կայուն ազգային վերածննդի համար իրազործելի միակ հեռանկարը, քանզի միայն այս պարագայում է հնարավոր զերծ մնալ Հայաստանի շուրջ քաղաքական ուժերի բախումից ու պայքարից, որը բոլոր դեպքերում միայն կործանարար կլինի Հայաստանի համար»²¹: Աշխարհաքաղաքական ելքը համարվում էր Ռուսաստանի հետ դաշնություն կազմելը. «Բայց ազատ, միասնական Ռուսաստանի կազմում Հայաստանի ու հայերի ճակատագիրը բոլոր առումներով կլինի ավելի ապահոված, քանի որ միասնական Ռուսաստանում պետական իշխանությունը ի զորու կլինի ավելի շատ վարձահատույց լինելու հայերին և ավելի արդարացի բավարարելու նրանց կարիքները»²²:

Այսպիսով, 1920 թ. Հայաստանի և հայ ժողովրդի վերածնության ուղիների վերաբերյալ ՀՅԴ-ի հետ դիմակայության ընթացքում Վերմիշյանը հանդես եկավ որպես ռուսական կողմնորոշման համոզված կողմնակից՝ օգտակար համարելով Հայաստանի համար Կովկասյան դաշնություն ստեղծելը և ժողովրդավարական ու դաշնային Ռուսաստանի կազմում գտնվելը:

²¹ ՀԱԱ, ֆ. 43, գ. 1, գ. 102, թ. 3

²² Նույն տեղում, թ. 10

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտի
միջազգային հարաբերությունների
քամի ավագ գիտաշխատող,
պատմական գիտությունների
թեկնածու



ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՌՈՒՍ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին՝ 1918 թ. գարնանը, Հարավային Կովկասում ձևավորվել էր ռազմաքաղաքական աղետալի իրադրություն: Ցարական Ռուսաստանի անկման և Կովկասյան ճակատի փլուզման պատճառով թուրքական զորքերը լայնածավալ հարձակում էին սկսել՝ նպատակ ունենալով գրավել ողջ տարածաշրջանը: Սա հատկապես վտանգավոր էր հայ ժողովրդի համար, որն իր գոյատևման պայքարն էր մղում՝ հասկանալով, որ Արևելյան Հայաստան ներխուժման դեպքում թուրքական կողմն ավարտին կհասցնի Հայոց ցեղասպանությունը, որն իրականացվել էր Արևմտյան Հայաստանում:

Թուրքական հրոսակներին դիմադրելու գործում հատկապես կարևոր նշանակություն ունեցան 1918 թ. մայիսին հայկական զորախմբերի մղած պաշտպանական մարտերը: Թուրքական զորքերի ջախջախման հիմնական ճակատամարտը տեղի ունեցավ Սարդարապատի կայարանի մոտ:

Այդ հերոսամարտը, թերևս, մեզ ամենահայտնի ճակատամարտերից է, որի մասին գրվել են բազմաթիվ գրքեր և կատարվել մեծ թվով հետազոտություններ: Այն ներկայացվել է թե՛ գիտական և թե՛ գրական ստեղծագործություններով ու վավերագրական ֆիլմերով և այլ գործերով:

Մանրամասնորեն հայտնի են ճակատամարտի գործողությունների ամրող արեալը և հայ գեներալների ու սպաների, ինչպես նաև սերժանտների, զինվորների գործողություններն ու հերոսությունները այդ ճակատամարտի ողջ ընթացքում: Հայտնի են հայազգի այս հերոսները, որոնք կազմակերպեցին և մասնակցեցին այդ հերոսամարտին, որը կարևոր նշանակություն ունեցավ Արևելյան Հայաստանը թուրք հրոսակների ներխուժումից փրկելու, նոր Հայոց ցեղասպանությունը կանխելու և ներկայիս Հայաստանի Հանրապետությունը կառուցելու գործում: Այդուհանդերձ, համեմատաբար թիշ են անդրադարձները այդ ճակատամարտի ժամանակ աշքի ընկած ազգությամբ ուս սպաների հերոսություններին, իսկ այդպիսիք շատ-շատ էին:

Ինչպես հայտնի է, Ռուսաստանում տեղի ունեցած բոլշևիկյան հեղափոխությունից հետո կազմալուծվեց Կովկասյան ռազմաճակատը, և հայ ժողովրդի համար սկսվեց գոյապայքարի մի ժամանակաշրջան, որը հնարավոր չէր լինի հաղթահարել առանց ռուսական զենքի օգնության: Հիշեցնեմ, որ Կովկասյան ճակատի խարխլումից հետո, երբ ռուսական զորքերը սկսեցին հեռանալ, կնքվեց Բրեստ-Լիտովսկի հայտնի պայմանագիրը (2018 թ. մարտի 3)¹. այնուհետև քուրքական բանակը, օգտվելով ստեղծված իրավիճակից, շարժվեց դեպի Արևելյան Հայաստան:

Թուրքական մեծարանակ զորքերին դիմակայելու համար հայկական զինված ուժերի ընդհանուր հրամանատար, գեներալ Թովման Նազարբեկյանը որոշեց պաշտպանել Երևան և Թիֆլիս տանող ռազմավարական նշանակության ճանապարհները: Ալեքսանդրապոլից դուրս եկած հայկական ուժերը, ինչպես նաև Հայկական հատուկ հավաքական ջոկատի կազմում եղած ստորաբաժանումները նահանջեցին Արարատյան դաշտավայր, որտեղ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ ձևավորվեց Երևանյան զորախումբը, որի առջև խնդիր դրվեց հետ մղել այդ ուղղությամբ քուրքական զորքերի շարժը²:

«Պայքար Հայաստանի անկախության համար. ռուս սպաների մասնակցությունը Սարդարապատի ճակատամարտին» հոդվածում Ռուբեն Գյուլմիսարյանը գրում է. «Հայկական կորպուսի շտաբը գտնվում էր Դիլիջանում, և շտաբում կային մեծ թվով ռուս սպաներ ու ռազմական գործի մասնագետներ: Պորուչիկ Ներշովը ղեկավարում էր շտաբի օպերատիվ բաժինը, մյուս աշխատողներից էին շտաբս կապիտան Նիկոլայ Շումովը, փոխպորոտչիկներ Միջայիլ Մեղվեդլը և Մելենտի Դվորնիցկին և այլն»³:

Քանի որ հայկական կրրապուսը ձևավորվում էր հիմնականում ցարական ռուսական բանակի Կովկասյան զորախմբի գնդերից, ապա այնուեղ ծառայող շատ ռուս սպաներ նախընտրեցին ոչ թե լրել Հարավային Կովկասը և հեռանալ Ռուսաստան, այլ մնալ և հայ ժողովրդի համար օրիհասական այդ օրերին, երբ դրված էր հայության լինել-չլինելու հարցը, ուս ուսի մարտնչել իրենց զինակիցների հետ՝ փառապանծ էցեր գրելով 1918 թ.

¹ Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). Материалы политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии. Сборник / НАН РА. Междунар. гуманит. фонд арменоведения им. Ц.П. Агаяна; сост., отв. ред., авт. предисл., введ. и примеч. В. Микаелян. – Ереван: Гитутюн, 1995. – էջ 485–486, 513, 582–584

² Աֆանասյան Մերժ, Սարդարապատի հաղթանակը, Հայաստան, մայիս 1918, «Ֆրավարան. գրակ.» իրատ., էջ 34–35

³ Корсун Николай Георгиевич «Кавказский фронт Первой мировой войны», 2004, <https://www.ozon.ru/product/kavkazskiy-front-pervoy-mirovoy-voyny-korsun-nikolay-georgievich-257980766/?sh=wwwu9Jd2sQ>

մայիսյան հաղթանակների ու հատկապես Սարդարապատի ճակատամարտի տարեգրությունում:

Նշենք, որ 1918 թ. Կովկասյան ռազմաճակատի հրամանատարն էր գեներալ Վասիլի Լեբեդինսկին, Հայկական բանակային կորպուսի շտաբի պետն էր գեներալ Եվգենի Վիշինսկին, Հայկական կորպուսի 3-րդ դիվիզիայի (արևմտյան հայերից բաղկացած) շտաբի պետն էր գնդապետ Միխայլովիչ Միխայլի Զինկիչը, Կարսի պարետն էր գեներալ-մայոր Դեկը, Հայկական կորպուսի ինտենդանտն էր գնդապետ Ալեքսանդր Բաստամով-Չումարովը, Հայկական կորպուսի զինվորական բժիշկն էր Պուտանովը, Հայկական կորպուսի առաջին բրիգադի հրամանատարն էր գնդապետ Նիկոլայ Միխայլովիչ Մորելը, գլխավոր շտաբի պետն էր Ալեքսանդր Կոնստանտինի Շնեուրը, հետևակային պարտիզանական գնդի հրամանատարն էր Վլադիմիր Պերեկրյոստովը, պարտիզանական հեծյալ գնդի հրամանատարն էր Ալեքսանդր Անտոնովիչ Կորոլյովը, սահմանապահ զորքերի հրամանատարն էր Իվան Սեմյոնովիչ Սիլինը, երկրորդ հատուկ բրիգադի հրամանատարն էր գնդապետ Կազիմիրսկին, երկրորդ հավաքական գնդի հրամանատարն էր գնդապետ Գոյնիկը, հայկական կորպուսի բուժքույրն էր Ելենա Սիկորսկայան, առաջին գնդի 2-րդ բրիգադի հրամանատարն էր գնդապետ Խմելնիցկին, հրետանային դիվիզիայի հրամանատարն էր գնդապետ Բ. Կարլիցկին, սպայական զորամասի հրամանատարն էր գնդապետ Ի. Եֆրեմովը, երկրորդ գնդի շտաբի պետն էր գնդապետ Սոլիցինը, հեծյալ հատուկ գնդի հրամանատարն էր ավագ Ա. Չոլոտարյովը, հրետանային մարտկոցի հրամանատարն էր կապիտան Նիկոլայ Ալեքսանդրովիչ Կիչը⁴:

Նեծարիվ ոռու սպաներ և զինվորականներ՝ գեներալից մինչև սերժանտ, հայ զինվորականների հետ կողք կողքի մարտնչում էին Հայաստանի ազատագրության համար, ցավոք, ոչ բոլորի անուններն են հայտնի: Վերևում նշված ցանկը միայն փոքր մասն է այն ոռու սպաների, զինվորականների, որոնք մասնակցեցին Հայաստանի պաշտպանության համար նղվող մարտերին և կասեցրին բուրքերի առաջխաղացումը՝ փրկելով հայ ժողովրդին հերթական կոտորածից: Այնուամենայնիվ, Սարդարապատի ճակատամարտում և հանուն մայիսյան հաղթանակների իրենց կյանքը չխնայած նի շարք ոռու զինվորականների մասին պահպանվել են արժեքավոր տեղեկություններ, որոնք արժանին են առանձին հիշատակման:

⁴ Գյուլմիխարյան Ռ., «Պայքար Հայաստանի անկախության համար. ոռու սպաների մասնակցությունը Սարդարապատի ճակատամարտին», http://dalma.news/am/payqar-hayastani-ankakhtyan-hamar-rus-spaneri-masnakcetyune-sardarapati-chakatamartin/?fbclid=IwAR38txbV9qmNT4bfqBkHd-NC5m--jb7FDYvoOC9mj_2NSH2_TqBfbICQA7A

Սարդարապատի ճակատամարտում հայկական զորախսմբի լնդիանուր հրամանատար Դանիել Բեկ-Փիրումյանի շտարի պետն էր կապիտան Ալեքսանդր Կոնստանդինովիչ Շնեուրը (1884–1977): Հիշեցնենք, որ հենց այս կորպուսը հիմնական դերակատարությունն ունեցավ բուրքական բանակի կասեցման և ապա ջախջախման գործում:

Սանկտ Պետերբուրգում ծնված Շնեուրը սովորել է Գորկիչի անվան գիմնազիայում, ապա՝ Միխայլովյան հրետանային ուսումնարանում: Մասնակցել է Առաջին աշխարհամարտին և մայիսյան հերոսամարտերին, 1918 թ. օգոստոսին նշանակվել է հայկական հետևակային դիվիզիայի շտարի հասողական հանձնարարությունների գծով սպա: 1918 թ. դեկտեմբերին նշանակվել է դարարադյան առանձնակի բրիգադի պետ: Հիմնադրման օրվանից մինչև 1919 թ. սեպտեմբերը դեկավարել է Հայաստանի Հանրապետության գլխավոր շտարի հետախուզության բաժինը: ՀՀ ռազմական նախարար Հ. Հախվերդյանի 1919 թ. ապրիլի 28-ի հրամանով նշանակվել է գլխավոր շտարի պետ: Նույն թվականին նրան շնորհվել է գնդապետի կոչում: 1919 թ. վերջին Շնեուրը մեկնել է Ռուսաստան և կամավորական բանակի կազմում մասնակցել քաղաքացիական պատերազմին: Արտազարել է ԱՄՆ, եղել է պատերազմի ուսու վետերանների միության իսկական անդամ: Մահացել է 1977 թ. սեպտեմբերի 16-ին, Սան-Ֆրանցիսկոյում⁵:

Սարդարապատի ճակատամարտում հայկական հրետանու մարտկոցի հրամանատարն էր Նիկոլայ Ալեքսանդրովիչ Կիշը (1895–1941): Հայկական Կարսում ծնված Կիշը սովորել է Թիֆլիսի սպայական դպրոցում, մասնակցել Առաջին աշխարհամարտին Կովկասյան ռազմաճակատում:

Սարդարապատի ճակատամարտում Ալեքսանդր Կիշի մարտկոցը աչքի է ընկել իր դիպուկ նշանառությամբ՝ մեծ վնաս հասցնելով բուրքական զորքերին: Մասնավորապես հայտնի է, որ վերջինիս դիպուկ կրակոցով ոչնչացվել է Սարդարապատի կայարանի ջրի մատակարարման համակարգը, որից սնվում էր բուրքական բանակը:

Հայկական միջավայրում մեծացած ուսու սպան տիրապետում էր հայերենին և ազատ շփում էր զինվորների հետ, ինչ շնորհիվ առանձնահատուկ ջերմություն էր ստեղծել իր մարտկոցում: Սարդարապատի ճակատամարտից հետո Կիշը շարունակել է իր ծառայությունը Հայկական բանակում, իսկ հետագայում խորհրդային բանակում արժանացել հրետանու գեներալ-լեյտենանտի բարձր կոչման:

1941 թ. սեպտեմբերի 17-ին Ն. Կիշը ՍՍՀՄ ռազմական դատարանի գինվորական կոլեգիայի կողմից դատապարտվել է գնդակահարության:

⁵ Կօրսուն Հնոկոլայ Գեօրգիևիչ, նշվ. աշխ.

⁶ Տե՛ս նոյն տեղում

Դատավճիռն ի կատար է ածվել 1941 թ. հոկտեմբերի 16-ին: Թաղված է Մոսկվայի Դոնյան գերեզմանատանը: Հետմահու արդարացվել է⁶:

Եվգենի Եվգենիկի Վիշինսկին (1873–1918) 1918-ին դարձավ նորաստեղծ Հայկական կորպուսի շտարի պետք և մեծ ավանդ ունեցավ Սարդարապատի ճակատամարտի հաղթանակի գործում: Հայտնի է, որ Վիշինսկին ծնվել է հուլիսի 19-ին Սուվայան նահանգի տոհմիկ ազնվականների ընտանիքում: Գիմնազիան ավարտելուց հետո ուսումը շարունակել է Մոսկվայի յունկերական ուսումնարանում և գլխավոր շտարի Նիկոլաևյան ակադեմիայում: Ծառայել է Կովկասյան ռազմական շրջանում, զբաղեցրել է տարբեր պաշտոններ՝ ավագ համհարզ, շտարի սպա՝ գումարտակի հրամանատար, Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսության քարտուղար, 1913 թ. ապրիլից եղել է Երևանի լեյբ-գրենադյան գնդի հրամանատար, գնդապետ:

Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, եղել է Կովկասյան բանակի շտարի հերթապահ գեներալ: Ավելի ուշ դարձել է Կովկասյան բանակի գեներալ-կայտիրմեյստերի օգնական, շտարի պետ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին աչքի է ընկել մարտերում: 1917 թ. ապրիլից եղել է Կովկասյան բանակի շտարի պետ: 1918 թ. Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարության հրամանով Ե. Վիշինսկին նշանակվել է առանձին Հայկական կորպուսի շտարի պետ: Մասնակցել է Ղարաբղիշասայի ճակատամարտին: Եվգենի Վիշինսկին հայտնի էր և՛ որպես զինվորական, և՛ որպես Անդրկովկասը և Թուրքիան ուսումնասիրող արևելագետ: Խսկական մարտական գեներալ-լեյտենանու էր՝ պարզեատրված Գեորգիկյան զենքով և Ռուսական կայսրության մի շարք շքանշաններով⁷:

«Վիշինսկին բողեց Էրզրումում Ռուսաստանի առաքելության քարտուղարի պաշտոնը, որպեսզի ստանձնի Էրիվանի 13-րդ գրենադերական գնդի հրամանատարությունը: 1918 թ. մայիսին հենց նա է եղել Հայկական կորպուսի շտարի դեկավարը, և փառահեղ հաղթանակում նրա ներդրումն անգնահատելի է: Վիշինսկին նահացավ 1918 թ. սեպտեմբերի վերջին Դիլիջանում և զինվորական պատիվներով հուլարկավորվեց Սուրբ Գևորգ Զորավար ռուսական ուղղափառ եկեղեցում», – գրում է Ռուբեն Գյուլմիսարյանը⁸:

Պերեկրյոսոսով Վլադիմիր Վասիլիկ (–1918): Վլադիմիրի Պերեկրյոսունիքի մասին հայտնի է, որ ավարտել է Պոլտավայի կադետական կորպուսը և Կիևի ռազմական ուսումնարանը 1904 թ.: Ստացել է պոդարուչիկի կոչում և իր ծառայությունն սկսել Երևանում զտնվող զորամասում: Մասնակցել է Առաջին աշխարհամարտին՝ ծանր վիրավորվելով Բիթլիսի մոտ ընթացող

⁷ Корсун Николай Георгиевич, նշվ. աշխ.

⁸ Գյուլմիսարյան Ռ., նշվ. աշխ.

մարտերում: 1918 թ. փետրվարին նշանակվել է հայկական պարտիզանական հետևակային գնդի հրամանատար:

Այս գունդը ենթարկվում էր հայկական կորպուսին: Փոխգնդապետի աստիճանով նշանակվել է Սարդարապատի ջոկատի զորամասերից մեկի հրամանատար, ակտիվորեն մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին: Մինչև 1918 թ. օգոստոսը ծառայել է նոր ձևավորված հայկական բանակում գնդապետի կոչումով, եղել է երկրորդ կորպուսի 4-րդ գնդի հրամանատարը: Մահացել է 1918 թ. օգոստոսին ասիական խոլերայից⁹:

Պավել Զոլոտարյովը Թերեքի կազակ էր, եսաուլ, ռազմական փայլուն կրթություն ստացած կադրային զինվորական. նա ուսանել էր Վորոնեժի կադետական դպրոցում և Նիկոլաևի հեծելազորային վարժարանում: Զոլոտարյովը ծառայությունը սկսել է Սունժենսկո-Վլադիկավկազի գնդում և առաջին իսկ օրվանից հայտնվել Համաշխարհային պատերազմի օջախում:

1917 թվականի սկզբին Զոլոտարյովը ստանձնել է 6-րդ, այնուհետև՝ հայկական 3-րդ հրաձգային գումարտակի հրամանատարությունը: Նրա հրամանատարության տակ էր մարտնչում նաև ասորական հրաձգային գումարտակը: Սարդարապատի հերոսամարտի օրերին գնդապետ Զոլոտարյովը հայկական հատուկ հեծելազորային գնդի հրամանատարն էր և անմիջականորեն մասնակցել է թուրք ասկյարներին հասցրված ամենասարսափելի հեծելազորային հարվածին, որը, ըստ Էության, որոշեց ճակատամարտի ելքը¹⁰:

Սարդարապատի ճակատամարտից հետո Զոլոտարյովը թողեց Հայստանը՝ մասնակցելու Թերեքի ապստամբության ու Սպիտակ շարժմանը, և դարձավ իր հարազատ Սունժենսկո-Վլադիկավկազի գնդի հրամանատարը:

Կորոլկով Ալեքսանդր Անտոնովիչ, (1869-՝), ծնվել է փետրվարի 23-ին, ծագումով Կուրանի տոհմիկ կազակ էր: Ռեալական ուսումնարանն ավարտելուց հետո Կորոլկովն ուսումը շարունակել է Ստավրոպոլի կազակական յունկերական ռազմական ուսումնարանում: Զինվորական ծառայությունն սկսել է Կուրանի կազակական զորքում: Հետագայում ծառայել է կայսերական սահմանապահ զորքերում, նախ՝ Ելիզավետպոլի 28-րդ սահմանապահ բրիգադում, իսկ 1910 թվականից՝ Երևանի 27-րդ սահմանապահ բրիգադում:

Ցարական Ռուսաստանի կազակական զորքերում եղել է 1890 թ.՝ խորությի (պոդպորուչիկ), 1894 թ.՝ հարյուրապետ (պորուչիկ): Ծառայության տեղափոխվելով սահմանապահ զորքեր, 1902 թ. ստացել է այդ զորատեսակում սահմանված շտաբս-ռոտմիստրի (շտաբս-կապիտան, ավագ լեյտենանտ), իսկ 1906 թ.՝ ռոտմիստրի (կապիտան) զինվորական կոչումներ:

⁹ Գյուլմիսարյան Ռ., նշվ. աշխ.

¹⁰ Գյուլմիսարյան Ռ., նշվ. աշխ.

Երևանյան գորամիավորման կազմում, ռոտմիստրի աստիճանով, Կորոլկովը ծառայել է մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը: 1915 թ. սկզբներին Բայազետի շրջանում Կովկասյան բանակի կազմում ձևավորվեց Արարատյան ջոկատ անվանմամբ մի գորախումբ (հրամանատար՝ գեներալ-լեյտենանտ Նիկոլաև), որը նախատեսված էր Թուրքիայի խորքերում ռազմական գործողություններ իրականացնելու, իսկ ավելի ճշգրիտ՝ Վանի գրավման համար:

Դրոյի 2-րդ, Համազասպի 3-րդ և Չեռու 4-րդ հայկական կամավորական ջոկատների հետ միասին, Արարատյան ջոկատի կազմում, ընդգրկված էր նաև ռոտմիստր Ալեքսանդր Կորոլկովի սահմանապահ հեծյալ հարյուրյակը: Նա մտերիմ էր Դրոյի հետ, և միասին կովելով՝ մտել են Վան: Կորոլկովն իր հեծյալ գորամասով ապահովեց նաև Վասպորտականի բնակչության անվտանգ գաղթը:

Կովկասյան ռազմաճակատի քայլայումից և Կովկասից, մասնավորապես Հայաստանից ռուսական բանակի հեռանալուց հետո Կորոլկովը մնացել է Հայաստանում և ակտիվորեն մասնակցել նոր ստեղծվող հայկական զինուժի հեծյալ գորամասերի կազմավորմանը: Իր հրամանատարության ներքո գտնվող հեծյալ գնդով մասնակցել է 1918 թ. մայիսյան հերոսամարտերին: Հատկապես Բաշ-Ապարանի ճակատամարտում մեր հաղթական ընթացքն ու ավարտը մեծապես կանխորշվել են նաև Կորոլկովի դեկավարած հեծելազորի անձնազնի և գրագետ գործողություններով:

Հայ-Վրացական պատերազմի ընթացքում փոխգնդապետ Կորոլկովն իր հեծյալ գորաջոկատով մասնակցել է բոլոր գործողություններին, եղել հայկական գորքի Շուլավերի գորաջոկատի հրամանատարը: Հայաստանի Հանրապետության ռազմական նախարարի 1919 թ. ապրիլի 16-ի հրամանով 2-րդ հայկական հեծյալ գնդի հրամանատար Կորոլկովին շնորհվել է գնդապետի կոչում, իսկ 1919 թ. հուլիսին Կորոլկովն իր հեծելազորով մասնակցել է Շիրազու-Ղամարլուի թաթարական խոռվության ճնշմանը: Նույն թվականի օգոստոսից առնվազն մինչև 1920 թ. սեպտեմբերը Ա. Կորոլկովը վարել է Ղարաբղիլսայի սահմանապահ բրիգադի հրամանատարի պաշտոնը¹¹:

1921 թ. փետրվարին եղել է հակաբոլշևիկյան ապստամբության կազմակերպիչներից և զինվորական դեկավարներից մեկը: 1921 թ. ապրիլի 2-ին բոլշևիկյան գորքերի կողմից Երևանը գրավելուց հետո Կորոլկովը մյուս ապստամբների հետ նահանջել է Զանգեզուր: Զանգեզուրը բոլշևիկների կողմից Խորհրդային Հայաստանին միացվելուց հետո անցել է Պարսկաստան: Հայկական բանակի գնդապետի կյանքի հետագա տարիների վերաբերյալ տեղեկություններ չկան: Նա այն բացարիկ օտարազգի սպաներից էր, ովքեր

¹¹ Корсун Николай Георгиевич, նշվ. աշխ.

գործուն մասնակցություն են ցուցաբերել հայկական զինուժի կազմավորմանն ու ձևավորմանը, իրենց ճակատագիրը անվերապահորեն կապել հայկական բանակի և հայկական պետության հետ¹²:

Այս հոդվածի շրջանակում ներկայացրեցինք մայիսյան հերոսամարտերի ու հատկապես Սարդարապատի ճակարտամարտի ժամանակ աչքի ընկածներից սահմանափակ բվով ոռու սպաների, որոնք հերոսացան հանուն Հայաստանի և հայ ժողովրդի: Այդպիսիք շատ են, սակայն դեռ կարիք ունեն բացահայտման, և նրանց անուները պետք է հայտնի դառնան:

Պատմական հիշողությունը կարևոր պայման է ազգի ձևավորման և ազգային մտածելավերապի տարածման ու հզորացման համար: Հետևաբար, անհրաժեշտ է նաև վառ պահել հայ ժողովրդի կյանքում օրհասական պահերին նրա հետ թիկունք թիկունքի կոված օտարազգիների նկատմամբ երախտագիտության զգացումը թեկուզ 100 տարի անց: Տվյալ դեպքում հատկապես կարևոր է երախտազգիտությամբ հիշել հայության համար ճակատագրական օրերին մեր ժողովրդին աջակցող բազմաթիվ ոռու սպաներին, զինվորական ներին և ամրագրել նրանց անուններն ու սխրանքները դասագրքերում, հոդվածներում և այլ աշխատանքներում, որպեսզի նրանց սխրանքը մատչելի ու հասանելի լինի բոլորին ու հատկապես աճող սերունդներին:

¹²Հարությունյան Վ., Մարտական գործողությունները Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ (1920 թ. հունիս – 1920 թ. նոյեմբեր), Եր., 2019, էջ 17–18

ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ուսազմաքաղաքական վերլուծարան,
պահեստագորի գնդապետ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԵՊ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԳՐԵՍԻՎ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ԿԵՑՎԱԾՔԸ (1992–1994 Թ-Թ.)

1991 թվականին ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով տեղի ունեցած աշխարհաբարական փոփոխությունները հանգեցրին ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի կողմից իր ռազմական դրկտրինը վերանայելուն և այն նախկին ԽՍՀՄ-ի հարավային շրջաններում և Բալկաններում ներուրբական նպատակներին հարմարեցնելուն:

1974 թ. Հյուսիսային Կիպրոսի բռնակցումից հետո բուրքական զինված ուժերն ակտիվորեն ներգրավված էին տարբեր զինված բախումներ կազմակերպելու գործում, իսկ բուրքական զինուժի սահմանափակ գորակազմն անմիջականորեն մասնակցում էր ՆԱՏՕ-ի անդամ երկրների կողմից հակամարտային տարբեր գոտիներում ծավալվող ռազմական գործողություններին: Նոր ռազմական դրկտրինի համատեքստում Բալկաններում սահմանափակ թվակազմով, սակայն արդյունավետ ներկայությունից հետո Թուրքիայի բարձրաստիճան գեներալները մեծ նշանակություն էին տալիս Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների բատերակեմին: Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման ռազմական բաղադրիչի հաղթական արդյունքից էր կախված լինելու ԽՍՀՄ-ի հարավային շրջաններում Թուրքիայի ներուրբական արտաքին քաղաքականության ծրագրերի իրականացումը:

Եթե ղարաբաղյան հակամարտության սկզբնական փուլում 1988–1990 թթ., պաշտոնական Անկարան չեզոք դիրք էր գրավում՝ Լեռնային Ղարաբաղի

իհմնախնդիրը համարելով Խորհրդային Սիուրյան ներքին գործը, ապա արդեն 1990-ականների սկզբին Թուրքիայի ռազմական, քաղաքական շրջանակներն ու հասարակությունը կտրուկ ակտիվացնում են իրենց գործողությունները աղքրեցանամետ դիրքորոշումը դոմինանտ դարձնելու հարցում: Իր նպատակներին հասնելու և առաջին հերթին Աղքրեցանում ազդեցությունն ապահովելու ու աճրապնդելու համար Թուրքիան Աղքրեցանին ցուցաբերում է դիվանագիտական, տնտեսական, ռազմական և ռազմատեխնիկական համապարփակ օգնություն:

1990-ականների առաջին կեսերին Լեռնային Ղարաբաղի հարցում համարուանական համերաշխությունը Թուրքիայի և Աղքրեցանի համագործակցությամբ ներառում էր առաջին հերթին ռազմական ոլորտը: Ղարաբաղյան հակամարտության գոտում իրադարձությունների զարգացումը ևս մեկ անգամ վկայում էր Աղքրեցանի կողմից հակամարտության մեջ Թուրքիայի անմիջական ներգրավվածության մասին, ընդ որում՝ Աղքրեցանին շոշափելի ռազմական օգնություն ցուցաբերելով:

1992 թվականի գարնանը, երբ իրավիճակը սրվում է հայ-աղքրեցանական սահմանի Նախիջևանի հատվածում, ռազմական փորձագետներն ու վերլուծաբանները մատնանշում են Թուրքիայի կողմից ռազմական միջամտության մեծ հավանականությունը: Միաժամանակ, այդ երկրի ցամաքային գորքերի գլխավոր իրամանատար Մուսիիբին Ֆիստունողլուն ասում է, որ «բոլոր անհրաժեշտ նախապատրաստությունները կատարվել են, և բանակը ռազմերթի համար սպասում է Թուրքիայի գերազույն գլխավոր իրամանատարի հրամանին»: Ակնհայտ էր, որ Հայաստանի կողմից Նախիջևանի դեմ լայնածավալ ազրեսիա և ազրեսիվ պլաններ չեն եղել: Տեղի ունեցածը կարելի է դիտարկել որպես Թուրքիայի քաղաքական որոշ շրջանակների կողմից հակահայ հիստերիայի միտումնավոր իրակրություն: Կարելի է ենթադրել, որ քուրքական իշխանություններն այդ քայլերով գնահատում էին ԱՊՀ-ի հարավային սահմաններում տիրող իրավիճակը՝ փորձելով բացահայտել 1992 թ. մայիսին Տաշքենդում ստորագրված ԱՊՀ-ի հավաքական անվտանգության պայմանագրի ներուժն ու կենտրոնակությունը: Հայկական կողմի «ազրեսիայի» պատրվակով քուրքական կառավարությունն ըստ էության վերջնագիր է ներկայացնում Հայաստանին՝ միաժամանակ հղում անելով 1921 թվականի Կարսի պայմանագրին, պնդելով, որ ըստ դրու դրույթների ինքն է Նախիջևանի սահմանների անվտանգության և անձեռնմխելիության երաշխավորը: Սակայն պարզ էր, որ դա արվում էր ՀՀ-ի ինքնիշխան տարածք ուղղակի միջամտության համար հող նախապատրաստելու նպատակով:

Ղարաբաղյան պատերազմի կիզակետում՝ Լաշինի միջանցքի բացումից անմիջապես հետո, 1992 թվականի մայիսի 20-ին քուրքական բանակը սկսում է գորքեր տեղակայել սահմանին՝ Հայաստանի տարածք ներխուժելու

նպատակով: Հարձակումը կանխվում է միայն Ռուսաստանի միջամտության շնորհիվ: Ռուսաստանի Դաշնության Պետդուման այս առիթով հատուկ լսումներ է անցկացնում ՌԴ ԱԳ նախարար Անդրեյ Կողիրևի և Միացյալ զինված ուժերի գլխավոր հրամանատար, ավիացիայի մարշալ Եվգենի Շապոշնիկովի մասնակցությամբ: ԱՊՀ-ի երկիր Հայաստանի սահմանների մոտ քուրքական բանակի կտրուկ ակտիվացման պատճառով ավիացիայի մարշալ Շապոշնիկովը շտապ թոշում է Երևան և հենց օդանավակայանում հրավիրված ճեպազրույցում հայտարարում, որ քուրքական ներխուժումը կարող է հանգեցնել երրորդ համաշխարհային պատերազմի: Այդ նախն անմիջապես զեկուցվում է ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշին, ով նոյն օրը զանգահարում է Անկարա և պահանջում դուրս բերել քուրքական զորքերը Հայաստանի սահմանամերձ շրջաններից: Թուրքիան, որպես ՆԱՏՕ-ի անդամ երկիր, ենթարկվում է այդ պահանջին, սակայն մի քանի շաբաթ անց քուրքական բանակի մոտ 150 ավագ սպասեր, այդ թվում՝ 10 գեներալներ, շտապ գործուղվում են Աղբեջան՝ գրոհային-դիվերսիոն ջոկատներ վարժեցնելու, պատրաստելու և հայկական զինված ուժերի դեմ ռազմական գործողություններ պլանավորելու համար:

Իր հերթին Թուրքիայում Ռուսաստանի Դաշնության դեսպան Ալբերտ Չերմիշևը, անդրադանալով դարաբաղյան հակամարտությանը միջամտելու Անկարայի քայլին Սոսկվայի հնարավոր արձագանքին, նշում է. «1921 թվականի Կարսի պայմանագիրը ո՞չ Թուրքիային և ո՞չ էլ Ռուսաստանին ռազմական միջամտության իրավունք չի տալիս»¹:

Այս հայտարարություններն էական ազդեցություն են ունենում Հայաստանի և դարաբաղյան խնդրի առնչությամբ քուրքական ռազմական և քաղաքական շրջանակների հետազա վարքագծի վրա:

Սոսկվայի նախազգուշացումը դարաբաղյան առճակատման գոտում Թուրքիայի կողմից հնարավոր ռազմական գործողության վերաբերյալ բխում էր Ռուսաստանի դեկավարության ցանկությունից՝ կանխելու Հարավային Կովկասում ուժերի հավասարակշռության կտրուկ փոփոխությունը և Ռուսաստանի ազգային անվտանգությանն սպառնացող նոր վտանգները: Ավելին, Ռուսաստանի և Իրանի դեպքում քուրքական միջամտությունը կդիտարկվեր որպես ուղղակի սպառնալիք այդ երկրների տարածքային ամբողջականությանը՝ պայմանավորված նրանց բնակչության մեջ քյուրքալեզու ժողովուրդների բավականին լայն ներկայացվածությամբ:

Զնայած մարշալ Շապոշնիկովի նախազգուշացմանը՝ Թուրքիան շարունակում է ռազմական և ռազմատեխնիկական օգնություն ցուցաբերել Աղբեջանին:

¹ Ст.'у «В турецких BBC объявлена повышенная боеготовность» // «Независимая газета», 22 мая 1992, № 96 (267), էջ 1

Ըստ արևմտյան ռազմական վերլուծաբանների՝ 1992 թվականի ամռանը Լեռնային Ղարաբաղի վրա Ադրբեջանի զինված ուժերի կողմից լայնածավալ հարձակման ժամանակ նրանց ռազմական հաջողությունները պայմանավորված էին առաջին հերթին դրանց քուրք «կամավորականների» մասնակցությամբ: Հարձակման սկզբում ադրբեջանական զորքերին օգնում էին քուրքական բանակի 40 ավագ սպաներ, որոնք ռազմական գործողությունների նախաշեմին ուղարկվել էին «վաղաժամ բռշակի», որպեսզի կարողանան աջակցել իրենց ադրբեջանցի եղբայրներին:

Այս հաջողությունները պայմանավորված էին նաև ադրբեջանական բանակի հարձակողական գործողություններով, որոնք մշակել և իրականացրել էր քուրքական բանակի գեներալ-մայոր Խալիլ Քալայշին:

Դեռևս 1992 թվականի մայիսին Թուրքիայի փոխվարչապետ Հյուսամերքին Չինդորուկի Բաքու կատարած այցի ընթացքում գեներալ Քալայշին Ադրբեջանում հանակվում է Թուրքիայի ռազմական կցորդի «շատ կարևոր» պաշտոնում: Ըստ ուստական լրատվածիցների՝ 1992 թվականի օգոստոսին Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջև Լաշինի մարդասիրական միջանցքը փակելու գործողությանը անմիջականորեն մասնակցել են քուրք ռազմական մասնագետները:

1992 թվականի ամռանը Թուրքիան Գերմանիայի Բունդեսվերից, նախկին Գ-ԴՀ-ի բանակի զինանոցներից, 800 մլն դրամի խորհրդային գենքի մեծ խմբաքանակ է գնում և փոխանցում Ադրբեջանին: Այդ գործարքի համար ռազմական տեխնիկայի և ռազմամթերքի իրական զինը իջեցվում է, որի դիմաց գերմանացի պաշտոնյաները քուրքական կողմից ստանում են խոշոր կաշառք: Այդ փաստը հետագայում բացահայտվում է, և առաջացած սկանդալի հետևանքով իրաժարական է տալս Գերմանիայի պաշտպանության նախարարը:

1992 թվականի վերջին Ադրբեջան է տեղափոխվում մոտ 5 հազար քուրք սպա և զինվոր: Սպաների միջին աշխատավարձը ամսական մոտ 7,5 հազար դրամ էր:

Հարկ է նշել, որ ռազմական գործողությունների ընթացքում Բաքուն բազմից դիմում է Անկարային՝ ուղղակի ռազմական միջանտության խնդրանքով: 1992 թվականի մայիսի 9-ին Շուշիի անկումից հետո Ադրբեջանի խորհրդարանի փոխխոսնակ Թամերլան Կարաևը հայտարարում է, որ եթե իրադարձություններն այս ուղղությամբ շարունակվեն, ապա Ադրբեջանի ղեկավարությունն իրեն իրավունք է վերապահում դիմելու Թուրքիային՝ «Հայաստանի ազգեստան դադարեցնելու»² խնդրանքով: Սակայն դրա կարիքը չկար, քանի որ

²Տե՛ս «Интернационализация конфликта» // «Независимая газета», 23 мая 1992, № 97 (268), էջ 1, 3

Թուրքիան արդեն իսկ զգալի ռազմական օգնություն էր ցուցաբերում Աղրբեջանին: Մյուս կողմից՝ պաշտոնական Բաքուն բարձր էր զնահատում Թուրքիայի կողմից իր շահերի լրբինզը միջազգային ասպարեզում, որի նյատակն էր համոզել միջազգային հանրությանը՝ լնդունելու աղրբեջանական մոտեցումներն ու տեսակետները դարաբաղյան խնդրի վերաբերյալ:

1993 թվականի փետրվարին Թուրքիայի զինված ուժերի 3-րդ դաշտային բանակի որոշ ստորաբաժանումներ՝ շուրջ 7 հազար զինվորական, պատերազմական ժամանակաշրջանի համար ամբողջական համալրումով առաջ են շարժվում դեպի Կարս-Սարիղամիշ-Իգդիր գիծ՝ Թուրքիայի կառավարությունից և գլխավոր շտարից ստանալով նոր հրաման՝ նախապատրաստել ներխուժում Հայաստանի Հանրապետության տարածքը:

1993 թվականի ապրիլի կեսերին Թուրքիայի նախագահ Թուրքութ Օզալը նախկին ԽՍՀՄ-ի բյուրքական երկրներ կատարած հավակնութ ուղևորության ընթացքում Բաքվում հայտարարում է, որ Թուրքիան լիովին և անվերապահորեն աջակցում է «հայ զավթիչների» դեմ Աղրբեջանի պայքարին: Ուղևորության ընթացքում նրան ուղեկցում էր զինված ուժերի գեներալ-մայոր Էրդողան Օզնալը՝ գլխավոր շտարի հասուկ գործողությունների վարչության պետը:

Այնուհետև 1993 թվականի ապրիլին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ երկրների (ԱՄՆ, Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Չինաստան) դեսպանները կանչվում են Թուրքիայի ԱԳՆ, և նրանց է փոխանցվում Լեռնային Ղարաբաղում իրադարձությունների զարգացման վերաբերյալ Անկարայի տեսակետը, որը նման էր 1974-ին Կիպրոսում տիրող իրավիճակի առնչությամբ հայտնած տեսակետին՝ սպառնալով, որ Թուրքիան կարող է կրկին դիմել նմանատիպ գործողությունների «եղբայր աղրբեջանական ժողովրդին պաշտպանելու համար»:

Միաժամանակ Թուրքիան կոնկրետ միջոցներ է ձեռնարկում Հայաստան ներխուժելու համար. բուրքական զինված ուժերի 3-րդ դաշտային բանակը բերվում է լրիվ մարտական պատրաստության վիճակի, Թուրքիայի ռազմաօդային ուժերի հենակետերում «Phantom» հնքնաբիոների գրոհային էսկադրիլիաներն անցնում են շուրջօրյա մարտական հերքապահության՝ առաջին հարվածը հասցնելու համար, իսկ Թուրքիայի խորհրդարանում Բյուլենթ Էջլիքը, որը 1974 թվականին բուրքերի կողմից Կիպրոսի բռնագրավման ժամանակ վարչապետ էր, առաջարկում է հարվածել Հայաստանին, գրավել նրա հարավային շրջանները՝ Նախիջևանով, Զանգեզուրով և Ղարաբաղով Թուրքիան Աղրբեջանին կապելու համար: Միաժամանակ կտրուկ ակտիվանում է հայկական տարածքների զնդակոծությունը բուրքական կողմից: Իրավիճակն ամեն ժամ արվում է:

Մի քանի օր անց՝ 1993 թվականի մայիսի սկզբին, Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովը ՌԴ նախագահ Ելցինի անունից

մեկօրյա անսպասելի այցով ժամանում է Անկարա: Թուրքական մամուլը այս կայծակնային ճանապարհորդությունը մեկնաբանում է գրեթե Կեսարի ոճով. «Ժամանեցի, միզեցի, վերադարձա»: Բանն այն է, որ բանակի գեներալ Գրաչովը առաջին բանը, որ անում է Թուրքիայի նախագահի կառավարական նատավայր ժամանելով, զուգարան գնալն էր: Դրանից հետո գեներալը կտրուկ ու հակիրճ շարադրում է իրավիճակի վերաբերյալ ոռւսական տեսակետը և անմիջապես վերադառնում է ինքնարի՛ չսելով թուրքական կողմի նկատառումները, միաժամանակ ափսոսանք հայտնելով, որ որոշ երկրներ գենք և զինամթերք են մատակարարում Աղբեջանին՝ հստակ ակնարկելով թուրքական ռազմական մատակարարումների մասին:

Այդ ընթացքում, հովիսին, Շահրուզիս գյուղի մերձակայքում ԼՂՀ-ի ինքնապաշտպանության բանակը հարձակվում և գրավում է աղբյեջանական բանակի զինական պահեստները՝ լի թուրքական և նույնիսկ ամերիկյան արտադրության զինատեսակներով, որոնք բերվել էին Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ի պահեստներից: Առգրավված զենքի նմուշները տեղափոխվում են Վաշինգտոն, ինչը մեծ սկանդալ է առաջացնում ԱՄՆ Կոնգրեսում, և որոշվում է Բարվի դեմ կիրառել որոշ պատժամիջոցներ:

1993 թվականին Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերը ազատագրական մարտերում որոշակի հաջողություններ են ունենում, որին կրկին շատ արագ արձագանքում է Թուրքիան:

1993 թ. սեպտեմբերին հայ-թուրքական սահմանին արդեն երրորդ անգամ սրվում են հարաբերությունները Թուրքիայի և Հայաստանի միջև: Թուրքական զինված ուժերի 9-րդ Սարիդամիշյան դիվիզիայի 220-րդ մեքենայացված և 9-րդ հրետանային խմբավորումները խոցելիության հեռավորության վրա մտտենում են Հայաստանի սահմանին: Թուրքիայի նոր վարչապետ Թանու Չիլերը բացահայտորեն սպառնում է զորքեր ուղարկել, եթե հայկական կողմի հարձակումը Լեռնային Ղարաբաղում շղաղարի:

1993 թվականի հոկտեմբերին Մոսկվայում առաջանում է խորհրդարանական ճգնաժամ. պաշարվում է Սպիտակ տունը և գրոհվում է շենքը:

Ըստ ֆրանսիական և ամերիկյան աղբյուրների՝ այդ օրերին Թուրքիայի վարչապետ Թանու Չիլերի ներկայացուցիչները գաղտնի բանակցություններ են վարում ՌԴ Պետդրումայի ապատամք խոսնակ Ռուսան Խաբուլա-ստովի հետ: Թուրքիան ցանկանում էր պուտչիստների հաղթանակի դեպքում, ոռուսական իշխանությունների համաձայնությամբ, թուրքական զորքերի «սահմանափակ կոնտինգենտով» իբր Հայաստանում գտնվող Քրդական բանվորական կուսակցության՝ ՊԿԿ-ի ռազմական հենակետերի ոչնչացման նպատակով ներխուժել Հայաստան՝ զրավելով Հայաստանի հարավային որոշ շրջաններ, հիմնականում Սյունիքի մարզում:

Նման համաձայնություն Թուրքիան ստանում է Խարուլատովից, ինչպես նաև տրվում են Ռուսաստանի կողմից ռազմական գործողություններին «չմիջամտելու» երաշխիքներ: Այդ օրերին Թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդը թույլատրում է երկրի զինված ուժերից 2 բանակային բրիգադ և 15 մարտական գրոհային ուղղաթիռներ մտցնել Աղբքեցանի Նախիջևանի շրջան՝ Խարուլատով-Ռուսկոյ հեղաշրջման հաղթանակի դեպքում Հայաստանին հարվածելու համար: Այդ ընթացքում ուժեղանում է հայկական և ռուսական սահմանապահ ջոկատների գնդակոծությունը Թուրքիայի տարածքից:

1993 թվականի հոկտեմբերի 5-ին ՀՀ նախագահ Տեր-Պետրոսյանի հրամանով հայկական բանակը բերվում է լրիվ մարտական պատրաստականության վիճակի՝ Հայաստանի նկատմամբ Թուրքիայի կողմից ռազմական գործողությունների սկսման սպառնալիքին դիմագրավելու նպատակով:

Սակայն Խարուլատովի՝ իշխանության զավթման փորձը ձախողվում է, ռուսական տանկերը հարվածում են Ռուսաստանի Պետական դումայի շենքին, իսկ թուրքական տանկերը նահանջում են Հայաստանի սահմանից դեպի Ելման դիրքեր:

1994 թվականի մայիսին Բիշքեկում Հայաստանի, Աղբքեցանի և Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները ռուսական կողմի միջնորդությամբ զինադադարի արձանագրություն են ստորագրում, որից հետո էլ թուրքական կողմը խաղաղապահ առաքելություն իրականացնելու պատրվակով չի հրաժարվում Կովկասի հարավում սեփական ռազմական ներկայության ծրագրերից:

Այս անգամ թուրքական «բազեների» ռազմատենչ հայտարարությունները պայմանավորված էին ռուս-թուրքական հարաբերությունների լարվածությամբ, որն առաջանում է Սև ծովի նեղուցների անցման ռեժիմի վերանայման կապակցությամբ:

«Մենք պատրաստ ենք դարարադյան հակամարտության տարածաշրջան ուղարկել այնքան զինվոր, որքան կխնդրի Աղբքեցանի կառավարությունը», – 1994 թ. հայտարարում է Թուրքիայի ԶՈՒ գլխավոր շտարի պետ Դոհան Գյուրեշը Բաքու այցի ժամանակ: Անդրադառնալով հայկական կողմի այն հայտարարությանը, թե ո՞չ Երևանը, ո՞չ Ստեփանակերտը չեն համաձայնի թուրքական ռազմական ներկայությանը Ղարաբաղում, Գյուրեշը նկատում է. «Սերբերը նույնպես դեմ էին թուրքական ներկայությանը, սակայն այժմ Բունիայում 1500 թուրք զինվոր կա»³: Թուրք գեներալի հայտարարությանը այս անգամ բավականին կոշտ է արձագանքում է ՌԴ պաշտպանության նախարար Պավել Գրաչովը՝ ասելով, թե «քույլ չենք տա,

³Տե՛ս «Независимая газета», 09.07.1994.

որ թուրքական բանակը միջամտի» և հավելում. «Ռուսաստանն իր շահերն ունի Աղբբեջանում»: Ավելի ուշ, երբ Պավել Գրաչովը գտնվում էր Երևանում, ոչ երկիմաստ հասկացնում է, որ իր այցը Հայաստան կստիպի թուրքական կողմին ավելի սրափ մտածել⁴:

Կովկասում ցանկացած հակամարտությունում Թուրքիայի հնարավոր ուազմական միջամտությունը վտանգավոր նախադեպ կարող է ստեղծել Ռուսաստանի և Թուրքիայի գինված առճակատման համար նոր աշխարհաքաղաքական միջավայրում, որը սկսել է ձևավորվել սառը պատերազմի ավարտից հետո: Նման միջամտությունը կարող է նաև անցանկալի բարդություններ առաջացնել հենց Թուրքիայի համար, մասնավորապես՝ լրջորեն առաջացնելով ՆԱՏՕ-ի դաշնակիցների դժգոհությունը: Թուրքիայի ռազմական միջամտությունը դարձաբայան հակամարտությունում հարիր չէր նաև ԱՄՆ-ին, ինչի մասին հայտարարում է պետքարտուղարության խոսնակ Մարգարեր Թարվելերը:

Այդ տարիներին թուրքական դեկավարությունը, թերևս, հասկացավ, որ Արարու գետից այն կողմ հակամարտությանն ուղղակի միջամտությունը ավելի կարի Թուրքիայի հարաբերությունները Ռուսաստանի և Իրանի հետ, ինչպես նաև կառաջացնի համաշխարհային հանրության լուրջ դժգոհությունը:

Մեկ այլ կարևոր գործոն, որն այդ տարիներին անմիջականորեն ազդում էր թուրքական իշխանությունների որոշման վրա, 1915 թվականի Հայոց ցեղասպանության հարցն էր: Ռազմական գործողություններ ձեռնարկելով՝ Անկարան կապացուցեր իր ազրեսիվ դիրքորոշումը հայերի և Հայաստանի նկատմամբ: Պատահական չէ, որ Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը հայտարարում է, որ «քեպետ թուրքերը չեն կարող անտարբեր լինել աղբբեջանցիների տառապանքների նկատմամբ, սակայն երկրի մեկ սխալ քայլը կարող է հանգեցնել նրան, որ ողջ աշխարհը կաջակցի Հայաստանին»⁵:

⁴ St'u Freddy De Pauw. Turkey's Politics in Transcaucasia, in «Contested Borders in the Caucasus», ed. by Bruno Coppieers, Brussels, VUB Press, 1996, pp. 185-186, Svante E. Cornell. Turkey and the Conflict in Nagorno Karabakh: A Delicate Balance, «Middle Eastern Studies», Vol. 34, № 1, January 1998, էջ 66

⁵ St'u «За рубежом», 1992, № 22, էջ 4.

ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտությունների
թեկնածու, փորձագել



ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՄԱԿԱՆ ԿԱՅՄԱԿԱՆ ԹՁՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ (XVIII ԴԱՐ – XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

Դարեր շարունակ Ռուսաստանը եղել է բազմակրոն պետություն՝ կուտակելով կրոնական տարբեր աշխարհայացքների տեր մարդկանց փոխգործակցության փորձ: Հոգևոր-քարոյական կրթության հիմնախնդիրները, ժողովրդի սոցիալական վիճակը, իշխանության ու եկեղեցու, տարբեր ժողովուրդների, դավանաներների փոխգործակցությունը արդիական են նաև մեր ժամանակներում: Դրանք անձի և հասարակության ձևավորման այն անհրաժեշտ արտաքին սոցիալ-մշակութային գործոններն են, որոնցով պայմանավորված է ժամանակակից մշակույթի դիմագիծը: Ազգային մշակույթով հոգևոր արժեքները պահպանելու հիմնախնդիրները առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում նշակութաստեղծ քրիստոնեական դավանաներներին անդրադառնալիս¹:

Հայ առաքելական և Ռուս ուղղափառ եկեղեցիների միջև սկզբնական շփումները վերագրվում են Կիևյան Ռուսփայի դարաշրջանին: Սակայն նրանց միջև ավելի սերտ փոխգործակցություն սկսվեց միայն XVIII դ., երբ ռուսական հողերում բնակություն հաստատվելու հայերին ռուսական կառավարությունը արտոնություններ տրամադրեց²:

Ինչ վերաբերում է Հայ առաքելական եկեղեցուն, այստեղ տեղին է նշել, որ այն դարեր շարունակ, բացի այն բանից, որ հայության հավատի աղբյուրն

¹ Տե՛ս Միրզոյան Կ. Ա. Армянская апостольская церковь и ее роль в жизни армянской диаспоры, культурно-нравственном развитии армян и сохранении национальной идентичности. Армения юга России: история, культура, общее будущее. Материалы III Международной научной конференции, Ростов-на-Дону, 30-31 мая 2018 г., էջ 144

² Տե՛ս Блохин В. С. Преодоление богословских стереотипов об Армянской церкви в российском общественном сознании XIX – начала XX в., «Բարեբ Երևանի համալսարան», «Հայագիտություն», 141.1, Երևան, 2013, էջ 45-51

Էր, նաև հաճախ ստանձնում էր պետական ինստիտուտների կողցրած որոշ գործառույթներ, քանի որ հայ ժողովուրդը բավականին երկար ժամանակ զրկված էր պետականությունից: Այս համատեքստում հիշատակելի է կրթական գործառույթը, որի բարձրակետը Տաթևի վանական համալիրին կից գործող Տաթևի համալսարանն էր (1373–1435 թթ.):

Պետք է ընդգծել ՀԱՅ-ի թեմերի գոյության բացառիկ կարևորությունը Ռուսաստանի և Հայաստանի ժողովուրդների բազմադարյան բարեկամական, բարիդրացիական, ավանդական կապերն ամրապնդելու գործում: ՀԱՅ-ն և ՌՈՒԵ-ն միաժամանակ բազմադարյան արգասավոր երկխոսության վառ օրինակ են:

Նշենք, որ Հայ առաքելական եկեղեցու ներկայությունը տարածաշրջանում արձանագրվել է ավելի վաղ, քան քրիստոնեական որևէ այլ եկեղեցու: Այն բվագրվում է IV դարով և կապվում է Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի ու նրա հետևորդների միսիոներական գործունեության հետ ներկայիս Դերբենտի շրջանում: Այնուհետև ՀԱՅ-ն իր հետքն է բողել Չերքեզիայի լեռներում (Չերքեզների շրջանում), Ուկե Հորդայի բոլոր քաղաքներում (Ազակ, Մաջար...), և այլն: Այդ մասին վկայում են գոյություն ունեցող արտեֆակտները և որոշ վայրերում պահպանված հինավորց խաչքարերը: Այդուհանդերձ, մինչև XVIII դարը ՀԱՅ-ի ներկայությունը տարածաշրջանում ընդհանուր առմամբ դրվագային էր, քանի որ չկային հայկական խոշոր գաղութներ ու համայնքներ: Հիմնական զարգացումն արդեն սկսվում է կայսրության ժամանակաշրջանում³:

Ռուսաստանի կայոր Պետրոս Առաջինը նշել է հայերի կարևորությունը առևտուրն ու արդյունաբերական գործն ընդլայնելու, ինչպես նաև Արևելքում դիվանագիտական ռազմավարության հարցերում: Այդ նկատառումով նա բույլատրել էր հայերին ունենալ իրենց եկեղեցին և ազատորեն կազմակերպել եկեղեցական ծեսերը⁴:

Նրա զահակալության տարիներին արդեն Ռուսաստանի հետ հայերի կապերը անհամեմատ սերտանում են: 1711 թ. մարտի 2-ին հրապարակվում է Սենատի որոշումը, որում հանձնարարվում էր. «Հնարավորինս սիրաշահել հայերին ու թեթևացնել նրանց հոգսերը, որպեսզի նրանց մեջ ցանկություն առաջանա ավելի հոծ բազմությամբ ժամանելու»: Սենատի մեկ այլ՝ նույն տարվա մայիսի 2-ի որոշմամբ հաստատվում են Հայկական առևտրային ընկերության բոլոր արտոնությունները⁵:

³ Տե՛ս Ակոպյան Վ. Проблемы армянской апостольской церкви на Северном Кавказе: прошлое и настоящее. Сборник докладов международной научной конференции «Армянская диаспора Российской Федерации», ЕГУ, Ер., 2018, էջ 276-277:

⁴ Տե՛ս Կարեն Խ. Армяне Юга России: история, культура, общее будущее. Материалы Всероссийской научной конференции, Ростов-на-Дону, 30 мая-2 июня 2012 г.:

⁵ Տե՛ս Կարալեյն Վ. В. К 300-летию образования епархии армянской апостольской церкви в России: Израэль Ори и Вардапет Минас: Армения в истории и культуре России XVIII-XX вв. Материалы Международной научной конференции, Москва-Пушкино, 2016, էջ 21:

Հաշվի առնելով ասվածը՝ առաջին հերթին պետք է Աշենք, որ 1717 թ. Ռուսաստանի Աստրախան քաղաքում իհմնադրվեց Հայ առաքելական եկեղեցու առաջին թեմը: Նորաստեղծ թեմի կազմում ընդգրկվեցին Ռուսաստանում գործող բոլոր հայկական եկեղեցիները: Էջմիածնի կաթողիկոս Աստվածատուր Համադանցին վերոնշյալ հայոց թեմի առաջնորդ նշանակեց Ստեփանոս Գագարացուն: Միևնույն ժամանակ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Զալալյանը, որն ակտիվորեն մասնակցում էր պարսիկ և թուրք նվաճողների դեմ ազգային-հայրենասիրական պայքարին, անմիջական քաղաքական կապեր հաստատելով Պետրոս Առաջինի արքունիքի հետ, նույնպես կարծում էր, որ Ռուսաստանի հայությանը անհրաժեշտ է ունենալ թեմի առաջնորդ: Դա Աղվանիքի թեմի իրավագորության ներքո գտնվող շրջաններում վերաբնակեցված Ռուսաստանի հայերի նկատմամբ հոգածության դրսւում էր: 1716 թ., օգտվելով Խարայել Օրու զինակից Մինաս Վարդապետի (Պետրոս Առաջինի հանձնարարությամբ) Ղարաբաղ այցելությունից, Եսայի կաթողիկոսը նրան եպիսկոպոս ձեռնադրեց՝ շնորհելով արքեպիսկոպոսի աստիճան, և ուղարկեց Ռուսաստան իրու թեմի առաջնորդ⁶:

Պետրոս Առաջինի վախճանվելուց հետո քաղաքական ակտիվությունը հարավում նվազեց և, որպես հետևանք, առաջացավ սառնություն ՀԱԵ-ի հանդեպ:

1763 թ. Ամենայն հայոց կարողիկոս դարձավ հայ Եկեղեցու ամենաականավոր գործիչներից մեկը՝ Սիմեոնը: Նա այն գործիչն էր, որն ամուր հիմք դրեց հայ ժողովրդի ռուսական քաղաքական կրողնորշման համար: Նա հույս ուներ, որ Ռուսաստանը իրական օճնություն կցուցաբերի Հայատանի պետականության վերականգնման գործում: Ռուսաստանի կառավարությունը նրան նշանակեց Ռուսաստանում ամենայն հայոց հոգևոր առաջնորդ, ինչպես նաև իրավունք տվեց նշանակելու եալիսկոպոսների:

Կարևոր է նշել, որ Սուրբ Էջմիածնի և Ռուսական կայսրության միջև պաշտոնական հարաբերություններ հաստատվեցին XVIII դարի երկրորդ կեսին, երբ պետությունը դեկավարում էր կայսրուի Եկատերինա Երկրորդը: Նախկինում Պետրոս Մեծի հարաբերությունները հայ Եկեղեցու դեկավար անձանց հետ, հաշվի առնելով Պետրոսի հետապնդած նպատակները Արևելքում (Կասպից ծովի առափնյա շրջանին տիրելը), հաստատվում էին ոչ թե Էջմիածնի կաթողիկոսների մակարդակով, որոնք օժտված էին բարձրագույն հոգևոր իշխանությամբ, այլ Գանձասարի, որոնց նստավայրը Շուշիի մերձավորությամբ գտնվող Գանձասարի վանքն էր (Ելիզավետապոլի նահանգ):⁷

⁶ Ст'и Эзов Г.А. Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, № 323.

⁷ Ст. Арасян Г. Г. Архепископ Иосиф Аргутинский на службе Российской государства. Армяне в истории и культуре России XVIII–XX вв. Материалы Международной научной конференции. Москва–Пушкино, 2016. № 39.

1768 թ. հունիսի 30-ին Եկատերինա Երկրորդը իր ուղերձով վերահաստատեց Էջմիածնի Մայր Աքոռի հոգևոր իշխանությունը Ռուսաստանի կայսրությունում ապրող հայերի նկատմամբ և թեմական առաջնորդները նշանակելու նրա իրավունքը⁸: Եկատերինա Երկրորդը փաստացի 1773 թ. վերստին հիմնադրեց ՀԱԵ-ի ռուսաստանյան թեմը: Նոյն տարում այն գլխավորեց ճանաչված կրոնական գործիչ Հովսեփ արքեպիսկոպոս Արդուրյանը (1743–1801 թթ.), որի ներդրումն անգնահատելի է հայ-ռուսական հարաբերությունների զարգացման գործում: Հարկ է նշել, որ կրոնական գործունեությանը գուգահեռ Հովսեփ Արդուրյանը մեծ նշանակություն էր տալիս նաև հայ ժողովրդի քաղաքական ապագային: Այսպես, 1783 թ. նա կազմեց «Երկու ազգերի՝ ռուսների և հայերի միջև միության մասին» փաստաթուղթը: Համաձայն այդ նախագծի՝ Ռուսաստանը պետք է վերականգներ Հայաստանի անկախ քաջականությունը իր հովանու ներքո: Ռուսաստանին իրավունք էր վերապահվում նշանակելու հայոց արքաներին և իր գորքերը տեղակայելու այնտեղ⁹:

1809 թ. ռուս-բուրքական Բալկանյան պատերազմի (1806–1812) ժամանակ Ռուսաստանի կողմից նվաճված տարածքներում ցարի հրամանագրով հիմնադրվեց Բեսարաբիայի հայկական թեմը, կենտրոնը՝ Յասի քաղաքը: 1812 թ. մայիսի 16-ին ստորագրված Բուխարեստի հաշտության պայմանագրի համաձայն՝ Պրուտ և Դնեստր գետերի միջև ընկած տարածքը մտավ Ռուսական կայսրության կազմ որպես Բեսարաբիայի նահանգ՝ Քիշինև կենտրոնով:

Դարեր շարունակ հայերը, քաղաքական և ռազմական ամենատարբեր պատճառներով բնակություն հաստատելով աշխարհի տարրեր ծայրերում, Հայ լուսավորչական եկեղեցին ընդունում էին որպես միակ միավորիչ ուժ, որը վառ էր պահում հույսը լուսավոր ապագայի նկատմամբ: Նոյնպիսին էր իրադրությունը նաև XIX դարի առաջին կեսին, եթե 1828 թ. Արևելյան Հայաստանը դարձավ Ռուսական կայսրության մաս: Հայերի հոգևոր կենտրոնը՝ Էջմիածնը, անցավ ռուսական ենթակայության ներք 1826–1828 թթ. ռուսական պատերազմի արդյունքում, որն ավարտվեց 1828 թ. Փետրվարի 10-ին՝ Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքմամբ¹⁰:

Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը հասուկ տեղ է գրավում հայ ժողովրդի պատմության մեջ: Անշուշտ, մի քանի դար առաջ կորցրած պետականությունը զերականագնիվեց, սակայն պետք է նշել, որ Արևելյան Հայաստանում ապրող հայերը այլևս գտնվում էին քրիստոնեական պետության կազմում, այլ ոչ թե իսլամական Պարսկաստանի, ինչպես նախկինում:

⁸Տե՛ս Ամիրջանյան Ա.Օ. Деятельность Астраханской армянской Епархии в России в качестве представителя Армянской апостольской церкви (конец XVIII в.). Армяне в истории и культуре России XVIII–XX вв. Материалы Международной научной конференции, Москва–Пушкино, 2016, էջ 32

⁹Տե՛ս Православная энциклопедия, под редакцией Патриарха Московского и вся Руси Кирилла, том XXV, էջ 615–616

¹⁰Տե՛ս Որշադզե Ա.Տ. Արմանская апостольская церковь в политике Российской Империи: поиск административного оптимума. Journal of Frontier Studies. 2021, № 3, էջ 65

1830 թ. ապրիլի 30-ին ցարի հրամանագրով Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմը վերակազմակերպվեց: Աստրախանի թեմից անջատվեցին և Բեսարաբիայի թեմին միացվեցին Դոնի, Ղրիմի, Մալոռոսիայի, Նովոռոսիայի, Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի տարածքները: 1895 թ. թեմական կենտրոնը տեղափոխվեց Նոր Նախիջևան¹¹:

Ուսասատանին Արևելյան Հայաստանի միավորումից հետո Էջմիածնի պատրիարքությունը, ինչպես արդեն նշել ենք, հայտնվեց կայսրության սահմաններում: 1836 թ. մարտի 11-ին Նիկողայ Առաջինի կառավարությունն ընդունեց «Ուսասատանում Հայ լուսավորչական եկեղեցու գործերը կառավարելու մասին» կանոնակարգը, որով որոշ ինքնավարություն էր տարածադրվում ՀԱԵ-ին: Բուն Ուսասատանի տարածքում տվյալ ժամանակամիջոցում գործում էր երկու թեմ՝ Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի (կենտրոն՝ Դոնի Նախիջևան քաղաքը), որի ենթակայության ներքո գտնվում էին Ուսասատանի եվրոպական հատվածի եկեղեցական ծխական համայնքները (Սանկտ Պետերբուրգ, Մոսկվա, Մալոռոսիա, Ղրիմ, Դոն և այլն), և Աստրախանի, որը ներառում էր Հյուսիսային Կովկասն ու կայսրության արևելյան տարածաշրջանները¹²:

«Ուսասատանում Հայ լուսավորչական եկեղեցու գործերը կառավարելու մասին» վերոնշյալ կանոնակարգով սահմանվում են եկեղեցու կառուցակարգը, աստիճանակարգությունը, նրա կառավարման գործում բարձրագույն իշխանության՝ ի դեմս պետության ղեկավարի, ներառյալ նրա կողմից նշանակվող բարձր պաշտոնյաների մասնակցության աստիճանը: Նշյալ փաստարդի հիմնական դրույթը Ամենայն հայոց կաքողիկոսի ընտրության կարգը որոշելն է՝ հետագայում այդ ընտրությունը ցարի կողմից հաստատվելու պայմանով: Նշյալ կանոնակարգով նաև սահմանվում են հոգևորականության տնտեսական և քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ կոնկրետ արտոնություններն ու առավելությունները:

Կանոնակարգի համաձայն՝ վերակազմակերպվեց Աստրախանի թեմը: Քանի որ թեմն ընդգրկում էր կայսրության հսկայական մի տարածք, ամենախոշոր հայկական համայնքներն ունեցող Արևելյան Նախակովկասի հայկական եկեղեցիները օպերատիվորեն կառավարելու համար ստեղծվեց Աստրախանի թեմի (կոնսիստորիայի) կառուցվածքային ստորաբաժանումը՝ Կիզլյարի հոգևոր վարչությունը առաջնորդական տեղապահի գլխավորությամբ: Առաջնորդական տեղապահներն ու բարեվայելու հոգևորականները (որոնց կեցավայրերը Ստավրապոլն ու Մողբուկն էին) հաշվետու էին թեմի ղեկավարին: Վերջինս պաշտոնապես կոչվում էր թեմական առաջնորդ և կոնսիստորիայի նախագահ¹³:

¹¹ Епархия юга России. URL: <https://armenianchurch.ru/eparchhies/5ca4ccce1b2840018edd640>

¹² Տե՛ս Ակոպյան Յ. նշվ. աշխ., էջ 276-277

¹³ Տե՛ս Ակոպյան Յ. Կ истории формирования и деятельности руководящих структур армянской апостольской церкви на Северном Кавказе, Հայագիտական հանդիս, № 1, 2010, էջ 84

Հարկ է նշել, որ դա Ռուսաստանի տարածքում հայկական թեմերի գործունեության վերաբերյալ Ռուսական կայսրության կառավարությանը ընդունած ամենանշանակալի փաստարդութերից էր:

Հետազայում տասնամյակներ շարունակ հայկական թեմերը ծավալում էին իրենց խաղաղ և շնորհակալ գործունեությունը՝ անզնահատելի ավանդ թերելով հայ ժողովրդի հոգևոր զարգացման ու կրթության գործին ոուսական պետության տարածքում: ՀԱԵ-ի թեմերը կարևոր դեր խաղացին հայ ժողովրդի այն հատվածի ինքնությունը պահպանելու գործում, որն ապրում էր իր պատմական հայրենիքի սահմաններից դուրս: Կասկածից վեր է այն, որ պատմական հայրենիքի սահմաններից դուրս թեմերի գոյությունը չափազանց կարևոր է ժողովուրդների հոգևոր կյանքը պահպանելու և զարգացնելու համար:

Ամփոփելով՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ժամանակակից պատմագրության մեջ Ռուսական կայսրության և Հայ եկեղեցու փոխհարաբերությունների հարցը ավելի ու ավելի հաճախ է դառնում մասնագետների ուսումնասիրության առարկա, ինչը միանշանակորեն վկայում է դրա արդիական ու հեռանկարային լինելու մասին: XVIII և XIX դարերը թեկումնային էին հայ ժողովրդի պատմության մեջ, քանի որ հենց այդ ժամանակահատվածներում մեկընդմիշտ ձևավորվեց հայ ժողովրդի ոուսական կողմնորոշումը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿՈՒԼՈՎ

Ռուսականի գիրությունների
ակադեմիայի Ե. Մ. Պրիմակովի անվան
Համաշխարհային լրացնության և
միջազգային հարաբերությունների
ինստիտուտի քաղաքական
հետազոտությունների կենսորոնի
Կովկասի բաժնի գլխավոր գիրաշխակող



ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ԵՎ ՀԵՌԱԿԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի և Ռուսաստանի միջև Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագրի ստորագրման պահից 25 տարի է անցել: Այնտեղ ամրագրվել են առանցքային այն դրույթները, որոնք պայմանավորել են մեր երկկողմ հարաբերությունների դաշնակցային բնույթը: Նշյալ պայմանագրի տրամաբանական շարունակությունն էր 2000 թվականին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև XXI դար ուղղված դաշնակցային փոխգործակցության մասին» հոչակագիրը: Դրանում մասնավորապես ընդգծվում էր. «Երկու երայրական ժողովուրդների և պետությունների միջև համապարփակ կապերի, դաշնակցային փոխգործակցության ներկա և հետագա զարգացման ու խորացման անսասան իրավական իիմքը Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված՝ 1997 թվականի օգոստոսի 29-ի Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրն է»:

Արդեն երեք տասնամյակ Հայաստանը Ռուսաստանի դաշնակիցն է ռազմավարական առումով կարևոր կովկասյան տարածաշրջանում: Հայաստանի համար Ռուսաստանը ազգային անվտանգության գլխավոր երաշխավորն է այս տարածաշրջանում, որը շարունակում է մեծա աշխարհի քաղաքական քարտեզի «թեժ կետերից»:

Հարավային Կովկասին նետված աշխարհաքաղական մարտահրավերները թելադրված են Մե և Կասպից ծովերի միջև ընկած նրա աշխարհագրական դիրքով և Ռուսաստանին, Իրանին ու Թուրքիային հարևան լինելով: Մեծ դեր է խաղում Մերձավոր Արևելքի անկայունության ընդգրկուն գոտուն մոտ լինելը, դեռևս զգալի է Հարավային Կովկասում տարաքնույթ միջազգային ահարեկչական կազմակերպությունների կողմնակիցների

ակտիվացման վտանգը: Մարտահրավերների և սպառնալիքների մեկ այլ խումբ ծնունդ է առնում տարածաշրջանի ներսում տիրող իրավիճակից, մասնավորապես՝ ինչպես միջպետական խնդիրներից ու հակամարտություններից, այնպես էլ առանձին պետությունների բազմաթիվ ներքին խնդիրներից, որոնք հղի են ներքաղաքական իրավիճակի ապակայունացման վտանգով:

Հարավային Կովկասի համար այս ժանր իրավիճակում Հայաստանը կարևոր կայունացնող դեր է կատարում: Հայաստանի անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը և նրա սերտ կապերը Ռուսաստանի հետ խոչընդոտում են այն ապակառուցողական արտաքին ուժերի մուտքը, որոնք կարողացան ապակայունացնել իրավիճակը Ասիայի և Հյուսիսային Աֆրիկայի լայնածավալ տարածքներում: Հարավային Կովկասում իրավիճակը չգարգացավ արտաքին զինված միջամտության, քառոսի և համընդհանուր անիշխանության լիրիական կամ սիրիական սցենարով: Սա հայկական դիվանագիտության պատմական վաստակն է, որն առաջնորդվեց առաջին հերթին սեփական պետության ազգային շահերով:

Տարածաշրջանում անկայունության բարձր մակարդակի պահպանամանը նպաստում են ինչպես արտաքին քաղմարքիվ գործոններ, այնպես էլ Հարավային Կովկասի պետությունների միջև առկա հակասությունները: Տարածաշրջանում գոյություն ունեցող տարածքային վեճերի և սահմանային հակամարտությունների համատեքստում հատկապես սրվել է ազգային պատկանելության հատկանիշով քաղաքացիների հանդեպ խտրականության խնդիրը:

Հարավային Կովկասի պետությունները միջազգայնորեն ճանաչվեցին նախկին խորհրդային հանրապետությունների սահմաններում: Ընդ որում՝ Ալբրեժանի և Վրաստանի պետականության կայացման գործընթացը տեղի ունեցավ ոչ թե ՍԱԿ-ի կողմից ճանաչված, այլ նրանց փաստացի սահմաններում. նախկին ինքնավարությունների կորստից հետո նրանք զգալիորեն մասնատվեցին: Հայաստանը ևս ՍԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների կողմից ճանաչվեց ու ընդունվեց նախկին խորհրդային հանրապետության սահմաններում, սակայն իրականում դա չէր համապատասխանում այն իրավիճակին, որը ստեղծվել էր դեռևս նախքան ԽՍՀՄ-ի փլուզումը:

1990 թվականի օգոստոսին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց Հայաստանի Անկախության մասին հոչակագիրը, որը հիմնված էր «պատմական արդարության և ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի վերականգնման անհրաժեշտության վրա»՝ համաձայն Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» 1989 թվականի

դեկտեմբերի 1-ի համատեղ որոշման: 1995 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածում նշվում է, որ պետության քաղաքական համակարգի հիմքը հայոց պետականության հիմնարար սկզբունքներն ու ազգային նպատակներն են, որոնք ամրագրված են Հայաստանի Անկախության մասին հոչակագրում: Այսիսով, ազգերի ինքնորոշման իրավունքի վրա հիմնված միասնական պետության շրջանակներում պատմական հայկական տարածքների վերամիավորման գաղափարը օրենսդրական ձևակերպում ստացավ Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքում: Այն գործնականում իրագործվեց ԼՂՄ-ի հայ բնակչության ինքնորոշմամբ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի) անկախության հոչակնամբ՝ որպես Հայաստանի հետ նրա հետագա ինտեգրման միջանկյալ փուլ:

Ղարաբաղյան առաջին պատերազմում Աղրբեջանի պարտությունից և 1994 թվականին հրադադար կնքելուց հետո Հայաստանի կառավարությունը կենտրոնացավ անվտանգության ապահովման և Հայաստանի Հանրապետության հետ ԼՂՀ տարածքի աստիճանական ինտեգրման վրա: Աղրբեջանի դեկավարությունը կատարված մեկնարանում էր բացառապես որպես իր տարածքի նկատմամբ «զինված ազրեսիա և հայկական օկուպացիա»:

Հայաստանի և Ռուսաստանի միջև ուղղակցական դաշնակցային հարաբերությունները փոխշահավետ են: Ընդ որում՝ Հայաստանն ու Ռուսաստանը անկախ պետություններ են, միջազգային ասպարեզում նրանց շահերը մոտ են, բայց չեն կարող լիովին համընկնել: Մեր երկրների իշխանություններն իրենց արտաքին քաղաքականությունը հիմնում են պետական շահերի մասին սեփական պատկերացումների վրա, և դա ակներևար երևում է թեկուզ, օրինակ, այն բանից, որ Հայաստանն ու Ռուսաստանը բավականին տարբեր դիրքորոշումներ ունեն արխազական և հարավոսական հիմնախնդրի վերաբերյալ, Ղրիմի, Դժվ-ի և Լժվ-ի անկախության ճանաչման, Ռուսական ռանակի հատուկ գործողության իրականացման և բազմաթիվ այլ հարցերում: Այն դեպքերում, եթե շահերը համընկնում են, Հայաստանի դեկավարությունն աջակցում է Ռուսաստանի գործողություններին և չի խորշում միջազգային ամենաբարձր ամրիոններից պաշտոնապես հայտարարել Ռուսաստանի հետ հարաբերությունների առանձնահատուկ բնույթի մասին, նույնիսկ այն դեպքերում, եթե ՀԱՊԿ-ի և ԵԱՏՄ-ի անդամ մյուս երկրները գերադասում են չնյարդայնացնել հավաքական Արևմուտքին:

Նյու Յորքում կայացած ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 74-րդ նստաշրջանում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն իր ելույթում Ռուսաստանն անվանեց զիսավոր ուղղակցական գործընկեր և դաշնակից: Մյուս պետությունները դասվեցին «ուղղակցական հարևանների» կամ

պետությունների շարքը, որոնց հետ Հայաստանն ունի «ռազմավարական օրակարգ և գործընկերություն»: Այդպիսիք են ԱՄՆ-ը, Եվրոպական միությունը և նրա անդամ երկրները: Հայաստանն աջակցում է Ռուսաստանի գործողություններին Սիրիայում. այնտեղ են ուղարկվել հայ բժիշկներ և սակրավորներ: Սա Ռուսաստանի համար Մերձավոր Արևելքում իրավիճակի կայունացմանն ուղղված իր ջանքերին աջակցության ակնհայտ և կարևոր դրսևորում էր: Հատկանշական է, որ, ի տարրերություն ծանր իրավիճակում հայտնված Հայաստանի, ԵԱՏՄ-ի և ՀԱՊԿ-ի անդամ մյուս երկրները գերադասեցին սահմանափակվել Սիրիայի ժողովրդի հետ համերաշխության խորհրդանշական դրսևորումներով կամ ընդգծված չեզոք դիրք գրավեցին: Հավաքական Արևմտարի հետ Ռուսաստանի սուր հակամարտության համապատկերում Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթությունների ցուցադրման նման անկեղծությունը սկզբունքորեն կարևոր նշանակություն ունեցավ մեր երկողմ հարաբերությունների բնույթը հստակեցնելու համար:

Միջազգային շատ խնդիրների վերաբերյալ Մոսկվայի և Երևանի դիրքորոշումների ու մոտեցումների գոյություն ունեցող անհամապատասխանությունը որոշակի, բայց ընդհանուր առմամբ խիստ սահմանափակ ազդեցություն ունի ռուս-հայկական ռազմավարական դաշնակցային հարաբերությունների վրա: Անկասկած, նրանց ապագա հեռանկարների տեսանկյունից սկզբունքային և վճռորոշ նշանակություն ունի միայն մեկ հիմնախնդիր՝ Թուրքիայի և Աղրբեջանի նկատմամբ երկու երկրների քաղաքականության տարրեր վեկտորները:

Թուրքիայի և Աղրբեջանի հետ սերտ հարաբերությունները Ռուսաստանին թույլ են տալիս սահմանափակել ԱՄՆ/ՆԱՏՕ/ՇՄ-ի քայլքայի դերը Աև և Կասպից ծովերի ավագաններում, ապահովել ապրանքների և էներգակիրների տարանցումը համաշխարհային շուկաներ ու պահպանել տնտեսական համագործակցության բարձր մակարդակը տարրեր ոլորտներում: Հավաքական Արևմտարի հետ սուր հակամարտության համատեքստում Թուրքիայի և Աղրբեջանի հետ բարդ, բայց ընդհանուր առմամբ կառուցողական հարաբերությունները Ռուսաստանի համար առանձնահատուկ արժեք են ձեռք բերում: Հայաստանի համար սրանք «պատմականորեն թշնամի» պետություններ են, ուստի շարունակում են դիտվել որպես սպառնալիք ազգային անվտանգությանն ու իրենց պատմական հայրենիքում հայերի երեխիկ գոյատևմանը:

Աղրբեջանի նկատմամբ հայկական դիվանագիտության ուղղվածությունը հիմնված էր 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» որոշման օրինականության ճանաշման վրա, այսինքն՝ Աղր. ԽՍՀ-ի, ապա նաև անկախ Աղրբեջանի Հանրապետության սահմանների օրինականությունը ճանաչելուց հրաժարվելու

վրա: Դրա հետ մեկտեղ՝ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո հայկական դիվանագիտությունը նպատակ էր դրել հասնել այն բանին, որ Թուրքիան պաշտոնապես ճանաչի Օսմանյան կայսրությունում 1915 թվականին իրականացված Հայոց ցեղասպանությունը: Կրկին արդիական դարձավ Թուրքիայի հետ սահմանների հստակեցման խնդիրը, քանի որ Հայաստանի դեկավարությունը հայտարարեց 1921 թվականի Մոսկվայի և Կարսի պայմանագրերի օրինականությունը ճանաչելուց հրաժարվելու մասին և հանդես եկավ 1920 թվականի Սերի պայմանագրի համաձայն սահմանները ճշգրտելու օգտին: 2020 թվականի օգոստոսին, Սերի պայմանագրի 100-ամյակի հանդիսությունների ժամանակ, այս հարցում լիակատար միասնականություն դրսութեցին ինչպես Հայաստանի պաշտոնական իշխանությունները, այնպես էլ ընդդիմադիր կուսակցությունների մեծ մասը:

Ուստաստանի Դաշնության պաշտոնական դիրքորոշումը հետխորհրդային պետություններում ազգամիջյան հակամարտությունների վերաբերյալ ի սկզբանե հիմնված էր նրանց տարածքային ամբողջականության ճանաչման սկզբունքի վրա: Ուստական դիվանագիտությունը առկա հակամարտությունների լուծման հետանկարը կապում էր նախնական գոյություն ունեցող պետական սահմաններում, այսինքն՝ նախկին խորհրդային հանրապետությունների սահմաններում, ազգային փոքրամասնությունների անվտանգությունն ապահովելու և նրանց լայն իրավունքներ տրամադրելու հետ: Մոսկվան մերժեց տարածքային ամբողջականության սկզբունքը հարգել այն պետությունների առնչությամբ, որոնք երկար տարիներ վարել են ազգային խորականության շովինիստական քաղաքականություն ոչ տիտղոսակիր ժողովուրդների նկատմամբ, ընդ որում՝ այդ քաղաքականությունը վերածվել էր իրական սպառնալիքի նրանց էքսիկ, մշակութային և նույնիսկ ֆիզիկական գոյատևման համար (օրինակ, Արքային և Հարավային Օսման՝ 2008 թ., Ղրիմը՝ 2014 թ., ԴժՀ-ն և ԼԺՀ-ն՝ 2022 թ.):

Ղարաբաղի հարցում Ուստաստանի դիրքորոշումն այն էր, որ Լեռնային Ղարաբաղի տարածքը միջազգային իրավունքի տեսանկյունից Աղբեջանի Հանրապետության անբաժանելի մասն է: Ուստաստանը, ինչպես և հակամարտության կարգավորմանը զրադարձ ԵԱՀԿ Սիհակի խմբի մյուս համանախազահները, հանդես է եկել Լեռնային Ղարաբաղի շուրջ 7 շրջանները Աղբեջանի վերահսկողությանը վերադարձնելու օգտին՝ հարգելով տեղի հայ բնակչության շահերը, այդ թվում՝ տրամադրելով ԼՂՀ-ին վարչական հատուկ կարգավիճակ, որը պետք է որոշեին հակամարտող կողմերը՝ փոխընդունելի համաձայնությունների հիման վրա:

Բանակցություններում հայկական դիրքորոշումը հիմնված էր «փաթեթային սկզբունքի» վրա, որը ենթադրում էր ԼՂՀ-ի (Արցախի) կարգավիճակի հիմնախնդրի միաժամանակյա լուծում՝ ազգերի ինքնորոշման իրավունքի

իիման վրա, Աղքրեցանի տիրապետության ներքո վերադարձնելով այն տարածքները, որոնք պատերազմից հետո «անվտանգության գոտի» էին դարձել ԼՂՀ-ի համար և վերահսկվում էին հայկական զինված ուժերի կողմից: Աղքրեցանական դիրքորոշումը հիմնված էր «փուլային մոտեցման» վրա, որը բույլ կտար Բաքվին աստիճանաբար լիարժեք վերահսկողություն հաստատել նախկին Աղք. ԽՍՀ-ի՝ պատերազմից հետո կորցրած բոլոր տարածքների, ներառյալ՝ ԼՂՀ-ի վրա: Պարզվեց, որ անհնար է մերձնեցնել կողմերի փոխբացառող դիրքորոշումները, ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո անցկացվող բանակցությունների ժամանակ փոխադարձաբար ընդունելի խաղաղ լուծում մշակելու բոլոր փորձերն ավարտվեցին ապարդյուն:

Աղքրեցանի իշխանությունները երկար տարիներ նախապատրաստվում էին դարաբաղյան հիմնախնդրի ռազմական լուծմանը: Աղքրեցանական բանակի հարձակումը սկսվեց 2020 թվականի սեպտեմբերի 27-ին, որից հետո Ռուսաստանի ղեկավարությունը մշտական և համառ ջանքեր էր գործադրում՝ շուտափույթ դադարեցնելու ռազմական գործողությունները: Մոսկվան կրակը դադարեցնելու համար փորձեց օգտագործել ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի և ԵԱՀԿ Մինսկի խմբի կառուցակարգերը: Առաջին դեպքում դա հնարավոր չեղավ ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդում Մեծ Բրիտանիայի ներկայացուցչի կողմից անհրաժեշտ որոշումները արգելափակելու պատճառով: ԵԱՀԿ Մինսկի խմբի խաղաղության կոչերը և նրա հովանու ներքո ծեռք բերված զինադադարի մասին պայմանավորվածությունները չհանգեցրին կրակի դադարեցման և ի ցույց դրեցին միջազգային այս կառույցի փաստացի անգործունակությունը ստեղծված իրավիճակում:

Մոսկվային հաջողվեց հասնել ռազմական գործողությունների դադարեցման՝ հակամարտող կողմերի հետ պետությունների ղեկավարների մակարդակով ուղղակի և ոչ իրապարակային երկխոսության միջոցով: Այս երկխոսության արդյունքում Աղքրեցանի նախագահ Ի. Ալիկը, Հայաստանի վարչապետ Ն. Փաշինյանը և Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը ստորագրեցին համաձայնագիր 2020 թվականի նոյեմբերի 10-ից կրակը անհապաղ դադարեցնելու մասին:

2020-ի դարաբաղյան պատերազմը արմատապես փոխեց իրավիճակը Հայրավային Կովկասում: Ամրապնդվեցին Աղքրեցանի դիրքերը, տարածաշրջանում զգալիորեն մեծացավ Թուրքիայի ազդեցությունը: Թուրքիայի խորհրդարանի կողմից հասուկ հուշագրի ընդունումը օրենսդրություն ամրագրեց և երկարաժամկետ դարձրեց բուրքական ռազմական ներկայությունը Աղքրեցանի տարածքում: Այդուհանդերձ, բուրք զինվորականներին չտրվեց հակամարտության գոտում խաղաղապահ զորախմբի կարգավիճակ (ինչին ի սկզբանե ձգտում էին Անկարան և Բաքու), նրանց դերը սահմանափակվեց դիտորդական գործառություններով Լեռնային Ղարաբաղում հրադադարի

ոեժիմը վերահսկող ռուս-թուրքական համատեղ մշտադիտարկման կենտրոնում, որը տեղակայված է Աղրբեջանի վերահսկողության տակ անցած Աղդամ քաղաքում:

Բաքվի վերահսկողությունից դուրս է մնացել հայ քնակչությամբ մի փոքր տարածք, որի անվտանգությունն այժմ ապահովում են ոչ թե Հայաստանի քանակն ու ԼՂՀ-ի ինքնապաշտպանական ուժերը, այլ ռուս խաղաղապահները: Անկարան և Բաքուն հայտարարել են հակամարտության ավարտի մասին՝ վիճելի տարածքները Բաքվի վերահսկողությանը վերադարձնելու միջոցով, սակայն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախազահները հանդես են գալիս դարարաղյան իիմնախնդրի հետազո քննարկման օգտին և ընդգծում «կողմերին հայտնի տարրերի և սկզբունքների վրա հիմնված վերջնական, համապարփակ և կայուն կարգավորման հասնելուն առանձնահատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը»:

Մուկվային հաջողվեց կայունացնել իրավիճակը տարածաշրջանում Ռուսաստանի, Հայաստանի և Աղրբեջանի միջև պետությունների դեկավարների մակարդակով եռակողմ քննարկումների միջոցով: Հենց այս ձևաչափը հնարավորություն տվեց դադարեցնելու ռազմական գործողությունները և հակամարտության գոտի մտցնելու ռուս խաղաղապահների գորակազմը, որը երաշխավորում է սոորազրված փաստաթրերի կատարումը: Ներկայումս ռուսական ուժային կառույցները վերահսկում են հրադադարը և ապահովում են Հայաստանի ու Ղարաբաղի հայաբնակ հատվածի հաղորդակցության ուղիների անվտանգությունը, ինչպես նաև Աղրբեջանի և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև տարանցիկ փոխադրումները հայկական տարածքով:

Լեռնային Ղարաբաղում ռուսական խաղաղապահ գորակազմի տեղակայումն ապահովեց ռազմական գործողությունների դադարեցումը և պայմաններ ստեղծեց խաղաղ կարգավորման համար: Ակնհայտ է, որ իրավիճակի վերջնական կարգավորումը երկար ժամանակ և մեծ ջանքեր կպահանջի Աղրբեջանի և Հայաստանի, ինչպես նաև այն պետությունների կողմից, որոնք շահագրգուված են Հարավային Կովկասում կայունությամբ և անվտանգությամբ: Ընդ որում՝ արտաքին խաղաղողների միջև պահպանվող հակասությունները և Ռուսաստանի ու հավաքական Արևմուտքի միջև առկա սուր հակամարտությունը մեծապես դժվարացնում են խաղաղ գործընթացը և բացասաբար անդրադառնում տարածաշրջանի իրադրության վրա: Տարածաշրջանում իրավիճակի կարգավորման մյուս խոչընդոտը շարունակում է մնալ Թուրքիայի կողմից 1915 թվականի Հայոց ցեղասպանության ճանաչման իիմնախնդիրը:

Հայաստանը ձգտում է հասնել Անկարայի ու ողջ համաշխարհային համարության կողմից Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության

պաշտոնական ճանաչմանը: Թուրքիան և Աղրբեջանը կտրականապես մերժում են որևէ ձևով դա ճանաչելու գաղափարն անզամ: Ակնհայտ է, որ Աղրբեջանի և Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների կարգավորումը կարող է հնարավոր դառնալ միայն այն դեպքում, եթե մշակվեն դարարադայան իհմնախնդրի լուծման և 1915 թվականի Հայոց ցեղասպանության ճանաչման փոխադարձաբար ընդունելի մոտեցումներ: Նույնիսկ բոլոր կողմերի ընդհանուր անկեղծ ցանկությամբ հանդերձ՝ չափազանց դժվար է գտնել նման փոխադարձաբար մոտեցումներ: Դա շատ ժամանակ կպահանջի:

Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո ակնհայտ դարձավ, որ Երևանի արտաքին քաղաքականության մեջ պետք է շտկումներ կատարել՝ հաշվի առնելով այն իրական հնարավորությունները, որոնք ունի հայկական պետությունը: Հայաստանի ղեկավարությունն արդեն սկսել է միջոցներ ձեռնարկել Թուրքիայի և Աղրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Թուրքիայի հետ օդային ճանապարհով ուղևորափոխադրումներն արդեն վերականգնվել են: Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացի շրջանակներում հատուկ ներկայացուցիչների եռանդուն քանակցությունների ընթացքում կողմերը պայմանավորվել են ապահովել համապատասխանաբար Հայաստան և Թուրքիա այցելող երրորդ երկրների քաղաքացիների համար հայ-քուրքական ցամաքային սահմանը հատելու հնարավորությունը և որոշել են անհրաժեշտ գործընթացներ սկսել այս ուղղությամբ: Պայմանավորվել են նաև հնարավորինս կարծ ժամկետներում տալու Հայաստանի և Թուրքիայի միջև օդային ճանապարհով ուղիղ թեռնափոխադրումների մեկնարկը՝ որոշում կայացնելով սկսելու անհրաժեշտ գործընթացներն այս ուղղությամբ: Շարունակում են քննարկվել հնարավոր այլ կոնկրետ քայլեր, որոնք կարող են ձեռնարկվել երկու երկրների հարաբերությունների լիարժեք կարգավորմանը հասնելու համար: Ռուսաստանը պատրաստակամություն է հայտնել հանդիս գալու որպես անվտանգության երաշխավոր և միջնորդ քանակցություններում, այդ թվում՝ Հայաստանի և Աղրբեջանի միջև սահմանների սահմանազատման և սահմանագծման գործընթացում:

Հարավային Կովկասում իրավիճակի հետագա կայունացման հեռանկարները մեծապես կախված են այն քանից, թե արդյո՞ք վարչապետ Ն. Փաշինյանին կիազողվի մշակել և գործնականում իրականացնել այնպիսի արտաքին քաղաքականություն, որը ոչ միայն հնրավորություն կրնածենի կարգավորելու հարաբերությունները Աղրբեջանի և Թուրքիայի հետ, այլև զուգահեռաբար չի առաջացնի կտրով մերժում և քացասական արձագանք հայ հասարակության մեջ:

Լեռնային Ղարաբաղում ռուսական խաղաղապահ գորակազմի տեղակայումը անվտանգության երաշխիք է և ոչ միայն կայունության, այլև ավելի

հաջող տնտեսական զարգացման հեռանկար է բացում Հարավային Կովկասի համար՝ սահմանների ապաշրջափակման, նոր տրանսպորտային միջանցքների կառուցման, անդրսահմանային Արաքս գետի ջրային և կենսաբանական ռեսուրսների համապարփակ օգտագործման, ոռոգելի հողատարածքների ավելացման միջոցով և այլն: Տնտեսական համագործակցությունը կարող է հիմք դառնալ Թուրքիայի և Արքքեչանի հետ Հայաստանի հարաբերություններում վստահության մակարդակի բարձրացման և ամենացավոտ խնդիրների լուծման փոխընդունելի մոտեցումներ գտնելու համար:

Համաշխարհային ասպարեզում տեղի ունեցող տեկտոնական տեղաշրժերը ոչ միայն նոր մարտահրավերներ ու սպառնալիքներ են ստեղծում Հայաստանի և Ռուսաստանի համար, այլև սկզբունքորեն նոր հնարավորություններ են բացում նրանց առջև: Միջազգային հարաբերությունների ձևավորվող բազմաթերթ համակարգում Ռուսաստանը խաղում է առաջատար և հաճախ որոշիչ դերերից մեկը: Սա նոր հեռանկարներ է բացում ռուս-հայկական ռազմավարական-դաշնակցային հարաբերությունների ամրապնդման և հետագա զարգացման համար: Այդ հարաբերությունների հուսալի հիմքը եղել և շարունակում է մնալ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված՝ 1997 թվականի օգոստոսի 29-ի Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Հովհաննիսյան	
Ողջույնի խոսք ընթերցողներին	3
Գեղամ Պետրոսյան, Արամ Սաֆարյան	
Ողջույնի խոսք ընթերցողներին	5
Վլադիմիր Լեպեխին	
Հայաստանի և Ռուսաստանի միջև Մեծ պայմանագրի 25-ամյակը որպես նոր երկկողմ հարաբերությունների վերաբեռնում	7
Ժակ Մանուկյան	
Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության մարդասիրական համագործակցությունը Սիրիայի Արաբական Հանրապետությունում. Նպատակը և խնդիրները	16
Աշոտ Թավառյան, Աղասի Թավառյան	
Հայաստանի և Ռուսաստանի տնտեսական համագործակցության նշանակության շուրջ	22
Յուլիա Նիկիտինա	
Ռուսաստան և Հայաստան. ռազմաքաղաքական համագործակցության առանցքային ոլորտները	31
Ալեքսանդր Սաֆարյան, Նաիրա Պողոսյան	
Հայագիտության և թյուրքագիտության «հատման տիրույթի» սուր բանավիճային հիմնահարցերի ուսումնասիրության ոլորտում Եվրասիական համալսարանների համագործակցության մասին	37

Արմեն Մարության	
Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու պատմական նշանակությունը	42
Հայկազ Հռվիաննիսյան	
Բայազետ, 1877. գեներալ Արշակ Տեր-Ղուկասով	47
Վալերի Թունյան	
Ք. Ա. Վերմիշյանի (Վերմիշևի) մոտեցումը հայ-ռուսական հարաբերություններին	53
Արմեն Մանվելյան	
Սարդարապատի ճակատամարտի ոռու հերոսները	59
Հայկ Նահապետյան	
Հայաստանի հանդեպ Թուրքիայի ազրեսիվ նկրտումները և Ռուսաստանի Դաշնության ռազմաքաղաքական դեկավարության սկզբունքային կեցվածքը (1992–1994 թթ.)	67
Գևորգ Հարությունյան	
Ռուսական կայսրությունում հայ առաքելական եկեղեցու թեմերի պատմության համառոտ ակնարկ (XVIII դար – XIX դարի առաջին կես)	75
Ալեքսանդր Կոհլով	
Ռուս-հայկական ռազմավարական դաշնակցային հարաբերությունների արդի վիճակի և հեռանկարների մասին	81

**ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ»
ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ՝ ԲԻՇԿԵԿՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ
«ԳՐՔԱՐՎԵՍ» 19-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՑՈՒՑԱՀԱՆՏԵՍ-ՄՐՑՈՒՅԹՈՒՄ**

2022 թ. հունիսի 23–24-ին Ղրղզստանի Հանրապետության մայրաքաղաք Բիշկեկում տեղի ունեցավ «Գրքարվեստ» 19-րդ միջազգային ցուցահանդես-մրցույթը: Այս հեղինակավոր միջազգային ստուգատեսն հերթականությամբ անցկացվում է ԱՊՀ-ի խոշոր քաղաքներում:

Ցուցահանդես-մրցույթին մասնակցեցին 77 հրատարակչություններ ԱՊՀ-ի 8 երկրներից (Հայաստան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Ուզբեկստան և Ադրբեյչան): Միջոցամանը Հայաստանի մասնակցության աշխատանքները համակարգում էր Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: Հայաստանի ազգային գրադարանում ստեղծվել էր հանձնաժողով, որն ընտրեց գրքեր ցուցահանդես-մրցույթին մասնակցելու համար: Դրա արդյունքներով Հայաստանի կողմից ներկայացված 9 գրքերից 8-ն արժանացան պատվավոր տեղերի և մրցանակների:

«Բարեկամություն» անվանակարգում առաջին մրցանակի արժանացան «Հայաստան-Ռուսաստան: Բարեկամություն, համագործակցություն և փոխադարձ օգնություն», «Հայ-ռուսական ռազմավարական դաշինքի արդի վիճակն ու տեսանելի հեռանկարները», «ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության 7 տարին. Եվրասիական ինտեգրման հաջողությունները, դասերն ու հեռանկարները» հրատարակությունները հայերեն և ռուսերեն լեզուներով միաժամանակ: Գրքերը հրատարակության են պատրաստել ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոնը, «Ինտեգրացիա և զարգացում» հետազոտություն և վերլուծություն հասարակական կազմակերպությունը և Եվրասիական փորձագիտական ակումբը: Բոլոր երեք գրքերը լույս է ընծայել «Նահապետ» հրատարակչությունը (2021 և 2022 թթ.):





ԵԱՏՄ-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԽԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՅՈԹ ՏԱՐԻՆ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱԾԻ
ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ԴԱՍԵՐՆ ՈՒ ՀԵՇՈԱԿԱՐՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
2022

ՊՐԵՍԵՐՎԱՆ





«Միացյալ խաչ» (Երկրորդ անվանումը՝ «Քոյքեր»):
Հայաստանի և Ռուսաստանի ժողովուրդների բազմադարյա
բարեկամությունը խորհրդանշող հուշարձան:
Կանգնեցված է Երևանում և Մոսկվայում:
Քանդակագործ՝ ՌԴ ժողովրդական նկարիչ
Տիգրան Սողոյան:

Պատվանդանին փորագրված է. «ՕՐԾՆՅԱԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ և
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՐԱԳՈՐ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ»